

Շնուագրի իրավունքով

Հ. Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ ԱՐԱՐԱԿԱՆ ԽԱԼԻՖԱԹԻ
ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՃԱՄԱՆԱԿ.

(640 - 856)

КНИГА ДОЛЖНА БЫТЬ
ВОЗВРАЩЕНА НЕ ПОЗДНЕЕ
УКАЗАННОГО ЗДЕСЬ СРОКА

9(47,925)

2-42

11332

Ширинбеков, З. Н.
Зишинширов, Абдигани
Фирғұлғашқұлар

жыл:

Զեռագրի իրավունքով

Հ. Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԿԱՅԱՏԱՆ ԱՐԱԲԱԿԱՆ ԽԱԼԻՖԱԹԻ
ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

(640—856)

Պատ. Խմբագիր՝
Ա. ՊՈՂՈՍՅԱՆ

Հ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



I. ԱՐԱԲԱԿԱՆ ԽՍԼԻՑԱԹԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՆՎԱԶՈՒՄՆԵՐԸ

Արաբական խալիֆաթի կազմավորումը

1 Արաբական խալիֆաթը կազմավորվել է 7-րդ դարի քսանական թվականների վերջերին Ասլիֆաթը իր նվաճումների ընթացքում մի շաբթ երկրների հետ միասին իր տիրապետության է ենթարկում նաև Հայաստանը 1

Արաբական անապատի խաչնարած վաչկատուն ցեղերը հնագույն գարերից սկսած թափառում էին արաբական մեծ թերակղզու արևմտյան մասերում՝ Կարմիր ծովի ափին Այդ ցեղերն աստիճանաբար շերտավորվելով անցնում են նոտակյաց կյանքի և ստեղծում իրենց զարգացած տնտեսությունն ու կուլտուրան:

Եփրատի և Տիղրիսի հովիտներում, շատ վաղ շրջանից սկսած, արտքական բազմաթիվ ցեղերը կազմակերպել էին առանձին իշխանություններ, որոնք օդտապործվում էին Պարսկաստանի և Հռոմի կողմից իրենց միջև տեղի ունեցած հակամարտությունների ընթացքում: Այդ իշխանությունները հետագայում ուժեղ հենարաններ են դառնում արաբների նվաճումների ժամանակ:

5—7-րդ դարերում աչքի էին ընկնում արաբական առեմբականները, որոնք փոխանակության մեջ էին դնում թերակղզու հյուսիսային և հարավային մասերի արտադրանքները: Առեւրի մեջ հատկապես խոշոր դեր էին կատարում Մեկկայի վաճառակառները, որոնք իրենց ձեռքն էին կենտրոնացրել Արաբիայի առարենք մարզերի առևտուրը: Մեկկան գտնվում էր առեւրական ճանապարհների հանգուցային վայրում: Նա կարճ ժամանակվա ընթացքում դառնում է վաճառականության խոր կենտրոն: Մեկկայի վաճառականները կտղմում էին առեւ-

արական ընկերություններ, որոնք իրենց ձեռքն էին վերցրել
Արաբական մեծ թերակղզու գրեթե ամբողջ առևտուրը:

Արաբական վաճառականներն արևելյան հոգմեական և
պարսկական երկրներից Արաբիա էին բերում հայանատիկ և
արհեստավորական արտադրանք, իսկ Արաբիայից, առանձնապես
Եմենից, արտահանում էին ոսկի, թանկաղին քարեր, արևադար-
ձային պտուղներ, անուշահոտ յուղեր և այլ ապրանքներ: Մեկ-
կայի և արաբական մյուս քաղաքների առևտրականները շատ
աշխույժ կերպով մասնակցում էին Արևելքի և Արևմուտքի միջև
կատարվող առևտրին: Վաճառականական առևտուրը հովանավոր-
վում էր աղնվականների կողմից, և որովհետև վաճառականներն
Արաբիայում շատ սերտ կերպով կազմված էին նոր կազմավոր-
վող աղնվականության հետ, այդ պատճառով էլ արագ թափով
զարդանում էր առևտուրը:

6-րդ դարում և 7-րդ դարի առաջին քառորդում Պարսկաս-
տանի և Բյուզանդիայի միջև տեղի ունեցած պատերազմները
խոշոր հարված էին հասցրել արաբական քաղաքների առևտրին:
Խոկ դրանից էլ առաջ՝ հարիշների անվերջ կրկնվող արշավանք-
ները մեծամեծ զեասներ էին պատճառել արաբական երկրներին
և տնտեսապես զարգացած քաղաքներին: Այդ պատերազմներն ու
արշավանքները ոչ միայն քայլքայում էին քաղաքները և կասեց-
նում առևտուրը, այլև մեծ հարված էին հասցնում գյուղատըն-
տեսությանը՝ ավերելով ջրանցքները, անապատի վերածելով եր-
կիրը: Այսպիսով, 7-րդ դարի առաջին կեսին արաբական երկր-
ները կանգնում են տնտեսական ճգնաժամի և սուր գասակար-
գային պայքարի առաջ, որից դուրս գալու համար նրանք ելք
են գտնում նվաճողական քաղաքականության միջ: 7-րդ դարից
սկսած արաբական խալիֆաթի նվաճումները կազմված էին Մահ-
մեդի անվան հետ և կրօնական գունավորում էին ստացելք:
Մարգսի այն դիտողությունը, թե «Արևելքի պատմությունը հան-
դես է գալիս իրեւ կրոնների պատմություն», առաջին հերթին
վերաբերվում է Արաբիային:

Հստ ավանդության՝ Մահմեդը (570—632 թ. թ.) քորեշիդ-
ների տոհմից էր և ծնվել էր Մեկկա քաղաքում: Նա սկզբում
զբաղվում էր վաճառականությամբ և մի շարք երկրների, հատ-
կապես Եգիպտոսի և, ըստ ոմանց, Պաղեստինի հետ առևտրական
մեծ կապեր ուներ: 610 թվից սկսած՝ Մահմեդը բարեկամների

նեղ շրջանակում սկսում է քարողել իր ուսմունքը՝ իսլամը, որը համադրություն է քրիստոնեական, հրեական, պարսկական և բուդդայական կրոնների: Հետագայում Մահմեդի ուսմունքը նրա անունով կոչվեց մռամբականության, որը համապատասխանում էր արաբական ազնվականության և վաճառակաների պահանջներին՝ արաբական ցեղերին միավորելու, նոր նվաճումներ կատարելու և նորանոր երկրներ կողոպտելու ցանկությանը:

Մահմեդի քարողած կրոնը՝ իսլամը, սկզբում քորեշիդների կողմից ծաղրի ու հաղածանքների է ենթարկվում Մեկկա քաղաքում: Այդ պատճառով, նա իր կողմանիցների հետ 622 թվին փախչում է գեղի հյուսիս և ապաստան գտնում Յատրիք քաղաքում, որը թշնամի էր Մեկկային: 622 թվից սկսվում է արաբական թվականությունը, որը հայտնի է հիջրեի թվականություն անունով: Մահմեդը և իր կողմանիցները կոչվում էին մռամբականներ—հավատացյալներ, իսկ հակառակորդները՝ անհավատներ: Այդ երկուսի միջև սկսվում են կոփիֆեր, որոնք վերջանում են հավատացյալների հաղթանակավ: Մուսուլմաններն իրենց քարողական աշխատանքի համար նպաստավոր հող են գտնում Յատրիք քաղաքում, որը հետագայում Մահմեդի անունով կոչվում է Մեքբենեալ-Նաբի (մարդարեի քաղաք): Մահմեդը և նրա հետեւորդները հետզհետե իրենց կողմն են գրավում տափաստանի վաչկատուն ցեղերին—բեգուեններին, ապա նրանց օգնությամբ 630 թ. հարձակվում են Մեկկայի վրա և զրավում այն: Այնուհետև կարճ ժամանակվա ընթացքում նվաճում են նաև արաբական թերակղու հարավարեմտյան մասերը և հիմք են դնում արաբական մեծ աշխարհակալությանը, որի գլուխն է կանգնում աշխարհիկ և հոգեսր գործերը տնօրինող խալիֆը: Խալիֆների սկզբնական շրջանի մայրաքաղաքը դառնում է Մեկկան և որտեղից էլ դեկավարվում են արաբների հետագա նկատմաները:

Կալիֆարի նվաճումները

Արաբական խալիֆաթի նվաճումները լայն ծավալ են ըստանում Մահմեդի անմիջական հաջորդների, Աբու-Բեքրի՛ (632—634), հատկապես Օմարի ժամանակ (634—644): 634 թվի Յար-

մուկի ճակատամարտում Օմարը ջարդում է բյուզանդական կայսության զորագնդերին և զրավում է նրա արևելյան երկրամասերը — Միջերկրականի արևելյան մարզերը և ետ շղթառում կայսրության զորքերի մնացորդները դնապի Փոքր Ասիայի խորքերը՝ 637 թվի Քաղիսի, 641 թվի Նեհավենդի ճակատամարտերում արարները ջարդում են նաև պարսիկներին և զրավում են Միջագետքն ու Իրանի բարձրավանդակը։ Օմարից պարտված Սասանյան վերջին թագավոր Հաղպերտ Ալ-ը իր հարեմն արքայական վրանով և երկիրը թողնում է հաղթողի ձեռքը, իսկ ինքը փախչում է գեղապի Միջին Ասիա և մահանում այնտեղ, որով վերջ է զրգում Արևմտյան Ասիայի ամենավիթխարի պետությանը — Սասանյան դինաստիային, որն ավելի քան 420 տարի տիրում էր Սուաջավոր Ասիայի մի շարք երկրներին և շատ անդամ ան ու սարսափ էր ներշնչում Հռոմա-Բյուզանդական հղու կայսրությանը։

Օմարը 637 թվին դրավում է Երուսաղեմ քաղաքը։ Ազանվաճում է Նեղոսի հովիտը և հասնում մինչև Տրիպոլի Նա 641 թվին դրավում է Եգիպտոսի՝ Աղեքսանդրիա քաղաքը և այրել է տալիս այնտեղի հռչակավոր զրագարանը, որը հիմնվել էր Աղեքսանդր Մակենտոնացու ժամանակաշրջանից և ուներ մոտ հազար տարվա անցյալ։ Օմարն այդ հարուստ գրադարանն այրելով առել է՝ «Այն, ինչ որ կտ այս զրքերում, իր մեջ ուարունակում է Ղուրանը»։ Օմարը քանդում և կործանում է ավելի քան 4.000 եկեղեցի Այսպիսով, 634—641 թ. թ. արաբական խալիֆաթը հաջորդաբար զրավում է Պաղեստինը, Փյունիկան, Միջան (Ասորիթը), Միջագետքը, Պարսկաստանը և Եգիպտոսը։

Արաբական խալիֆաթի հետագա նվաճումները ծավալվում են դեպի Արևմուտք, Աֆրիկայի հյուսիսային և Միջերկրական ծովի հարավային ափերով հասնում են մինչև Զիբրալտար և Իսպանիա։ 711 թվի Քսերեսի ճակատամարտից և Քուտափրա-ը ին Մուսլիմի նվաճումներից հետո, արաբական խալիֆաթի սահմանները ձգվում են Կենտրոնական Ասիայից մինչև Աստրանոյան օվկիանոսը և Կովկասյան լեռնաշղթայից մինչև Ճընդեկական օվկիանոսը։ Այսպիսով, արաբական խալիֆաթը վերոհիշված էր զարգալու հետո, Տարգդարի առաջին քառորդում տիւրապետում է հին աշխարհի մեծագույն մասին և միաժամանակ

իր ձեռքն է վերցնում Արևելքի և Արևմուտքի միջն կատարվող տրանզիտ առևտուրն ու անտեսությունը, իսկ Արևմուտյան Եվրոպայի ժողովուրդները գառնում են՝ արաբների գնորդները։ Արարերեն լեզուն պաշտոնական հարաբերությունների լեզու է գառնում՝ սկսած Զիբրալտարից մինչև Հնդկաստան։

Արաբական խալիֆաթն իր նվաճումները կատարելիս հենավում էր մուսուլմանների վրա, որոնք կազմում էին կովող բանակը Սկզբնական շրջանում մուսուլմաններին արգելվում էր հողեր կամ կալվածներ ձեռք բերել։ Նվաճված երկրների աղջարնակչությունը պարտավոր էր կերակրել հաղթողների բանակներին։ Խալիֆաթի բոլոր հպատականավատները վճարում էին պլիսահարկ, իսկ հող ունեցողները, բացի գլխահարկից, վճարում էին նաև հողահարկ։ Մուսուլմաններն աղատ էին բոլոր տեսակի հարկերից ու տուրքերից։ Խալիֆները նրանց բնակեցնում էին նվաճած երկրների զինվորական գաղութներում և նրանց իրենց տեղից շարժում էին այն ժամանակ, երբ արշավանքների կարիք էր լինում։ Այդպիսի գաղութներ էին՝ Կահիրեն Եգիպտոսում, Կուֆան՝ Եփրատի վրա, Բասրան՝ Շատուլ-Արաբի վրա, Մերվը Միջին Ասիայում և Մանազզը՝ Ինդուսի վրա *).

Արաբները նվաճելով հին աշխարհի երկրների մեծագույն մասը՝ ժառանգում են նաև նվաճած երկրների, առանձնապես անտիկ աշխարհի կուլտուրան Թորդ դարում Արաբիայում արագ թափով զարգանում են աշխարհագրական, տիեզերագիտական, բժշկական, բնագիտական և մաթեմատիկական գիտությունները։ Արաբիայում հատկապես զարգացավ հանրահաշիվը։ Արաբաշխարհները ճանապարհորդում էին շատ երկրներ և իրենց թարմ տպավորությունները գրի առնում։ Նրանք ուսումնասիրում են Արիստոտել Փիլիպոսիայի, Եվկլիդես մաթեմատիկոսի, Պաղոմեոս աշխարհագրի, Գալին բժշկի և ուրիշ շատ գիտնականների գործերը և ձեռք են բերում անտիկ աշխարհի գիտական ու փիլիսոփայական նվաճումները։

*) Ավարը բաժանելու համար խալիֆ Օմարը կազմեց զերագույն հաշվի պալատ՝ գիվան։ Այստեղ կազմում էին բոլոր մուսուլմանների ցուցակները, յուրաքանչյուրի բաժինը բորչում էր այնքան, որքան ժամանակ նա ծառայել էր հավատին և ինչ չափով մասնակցել էր սրբազն պատերազմին։ Ավարի մեծ բաժինը հասնում էր Մահմեդի ազգականներին։

Արար զիտնականները դարձացնում և բարձր աստիճանի համացնում մաթեմատիկական և աստղաբաշխական զիտությունները, Նրանք հաշիվներով պարզում էին մոլորակների և գիսավորների շարժումները, լուսնի և արեգի խավարումները: Արարիայում զարգանում են նաև ճարտարավետությունը, գեղարվեստական գրականությունը և նկարչությունը: Արարական կուլտուրան, համեմատած իր ժամանակի Եվրոպայի կուլտուրայի հետ, շատ բարձր աստիճանի վրա եր գտնվում: Արարական կուլտուրան իր ազգեցությունն է թողել հայկական կուլտուրայի վրա 10-րդ դարից սկսած:

Ա. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՎԱՃՈՒՄԸ (640—700)

Հայաստանի ժաղաքական դրաւրյունը արարական
արշավանդների նախօրյակին

Արարական խալիֆաթի նվաճումներով պատմական Հայաստանի համար: Նոր դարաշրջան է բացվում, որը հեղաձջում է Փեռոդալական Հայաստանի ռանտեսական և քաղաքական կյանքը:

Պարսկա-բյուզանդական պետությունների միջև տեղի ունեցած երկարամյա պատերազմներից, պատմիկների և բյուզանդացիների հալածանքներից և ներքին խռովություններից քայլայման գույը հասած Հայաստանն արարների արշավանդների առաջ անպաշտպան էր:

Արարական խալիֆաթի նվաճումների նախօրեին Հայաստանը գտնվում էր օտարերկրյա զավթիչների լծի տակ: Նա 628 թվի դաշնադրությամբ վերաբաժնված էր Մերձավոր Արևելքի շուրջը պայքար մղող երկու հզոր սրբաւությունների՝ Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև: Հայաստանի մեծ մասը՝ երկու երրորդը բաժին էր ընկել Կայսրությանը, իսկ ավելի փոքր մասը՝ մեկ երրորդը, անցել էր Պարսկաստանին:

Պարսկական բաժնի Հայաստանը շարունակում էր կառավարվել մարզպանների միջոցով, կենտրոնն էր Դիլին քաղաքը, մարզպանն էր Սմբատ Շումիի որդի Վարապահիրոցը (628—633), իսկ բյուզանդական մասի Հայաստանը կառավարվում էր կայսրի կողմից նշանակված պատրիկների կամ պարտների միջոցով:

կենտրոնն էր Կարին (Թեոդոսիոլիս) քաղաքը: Բյուզանդական Հայութանի կառավարիչն էր՝ Մժեժ Պնունին:

Սակայն Բյուզանդական կայսրությունը, որը տիրում էր Հայաստանի մեծագույն մասին, անհրաժեշտ քանակությամբ զորք էցը պահում այնտեղ երկիրն արարական արշավանքներից պաշտպանելու համար, որովհետեւ թե Բյուզանդիայի և թե Պարսկաստանի ռազմական ուժերը խիստ թուլացել էին նրանց միջև տեղի ունեցած երկարամյա պատերազմների հետևանքով: Հետեւաբար, արարական խալիֆաթի արագ նվաճումները Մերձավոր Արևելքում արդյունք էին ոչ միայն նրա ռազմական ուժերի առավելությանը, այլև Սասանյան Պարսկաստանի և Բյուզանդական կայսրության ռազմական ուժերի խիստ անկմանը:

Պարսկա-բյուզանդական երկարամյա պատերազմներն իրենց հերթին ազգեր էին նաև Հայաստանի ռազմական ուժերի թուլացման վրա: Երկրում խոշոր գեր խաղացող Բագրատունի, Գնուռնի և Սահառունի իշխանություններն իրար գեմ մղած կոփառերի հետևանքով խիստ թուլացել էին:

Բյուզանդական կայսրությունը 630-ական թվականներին կրոնական հալածանք էր սկսել հայերի զեմ: Հերակլ կայսրը 633 թվին եկել էր Կարին քաղաքը և այստեղից բանակցությունների մեջ էր մտել հայոց եղբ կաթողիկոսի հետ՝ հայերին և հայ եկեղեցուն իր կողմը գրավելու համար: Նա Մժեժ Գնուռնու միջոցով եզրին հրավիրում է Կարին, որպեսզի նրա իշխանությունը օրինավոր ճանաչվի նաև Սրբամտյան Հայաստանի վրա: Մժեժը՝ միաժամանակ սպառնում է, որ եթե կաթողիկոսը չներկայանա կայսրին, նրա հետ չհազորդվի և հայ եկեղեցուն չմիաբանեցնի հունականի հետ, Սքեմայան Հայաստանն անջատել կտա Արևելյան Հայաստանից և այնտեղ նոր կաթողիկոս կնշանակի: Այս խիստ սպառնալիքը ստեղծում է ծանր կացություն: Եղբ կաթողիկոսը վախճնում է հայ եկեղեցու նոր երկպառակությունից արարական արշավանքների ծանր պահին: Կաթողիկոսը կայսրի առաջարկը անուշադիր չի թողնում: Նա անմիջապես խորհրդակցում է Թեոդորոս Թշտունու և ուրիշ նաև Խարարաների հետ, որոշ եղբակացության գալու համար:

Թեոդորոսը, Թշտունյաց տօհմի և Ռշտունիքի մեծ իշխանն էր: Սիրեսս սպառմազիքը նրա գործունեության մասին ասածին

անգամ հիշատակում է Կոմիտաս կաթողիկոսի մահվանից հետո, երբ նա 628 թվին ակտով կերպով նոր կաթողիկոս էր առաջ քաջում Քրիստոսիորին իսկ դա ցույց է տալիս, որ Թեոդորոսը մեծ հեղինակություն էր ձեռք բերել երկրում և նա պետք է տարիքով լիներ ոչ պակաս, քան 30—35 տարեկան և ձնված պիտի լիներ մոտավորապես՝ 593—598 թ. թ. զբանում: Վարապատիրոց մարզպանի ծավալուն շինարարության ժամանակ, 631 թվին, նա ձեռք է բերում Արեելյան Հայաստանի զորքերի ընդհանուր հրամանատարի՝ սալարապետի պաշտոնը: Բայց քանի որ 633 թվին Վարապատիրոց Բաղրատունին, վախենալով Ատրպատականի մարզպան Ռոստոմից, անցել էր Արևմտյան Հայաստան իր ընտանիքով, Արեելյան Հայաստանում՝ հայ իշխանների մեջ աշքի էր ընկնում Թեոդորոս Ռշտունին, որն արդեն սկսել էր խոչոր գեր խաղալ երկրում: Այլ պատճառով, Եղբայրացին հերթին դիմում է նրան, որը տաղանդավոր զորավար էր, մեծ հայրենասեր և դիվանագետ իշխան Թեոդորոս Ռշտունին հականունական հոսանքի կողմնակից էր և չէր սիրում հույներին իրենց խորամանկությունների համար:

1 Թեոդորոս Ռշտունին և ուրիշ աչքի ընկնող նախարարներ, հաշվի առնելով արաբների վերահսկութանքը, հույների հետ չթշնամանալու համար, խորհուրդ են տալիս կաթողիկոսին գնալ Կարին, կայսրի մոտ և հայոց իրավունքն ու գավառնությունն արիությամբ պաշտպանել: Եղբ կաթողիկոսն իշխանների խորհրդից հետո, մի քանի հայ վանականների հետ միասին մեկնում է Կարին և բանակցությունների մեջ մտնում կայսրի հետ: Կաթողիկոսն ընդունում է հունական գավանանքի ուղղությունը և կայսրի հետ Կարինի եկեղեցում հաղորդվում է: Հերակլը այդ զիջման գիմաց եջմիածնի վանքին է նվիրում Կողըն աղանանքերի մի մասը, որից հետո Եղբը վերապառնում է Դվին: Թեև հայոց կաթողիկոսն այս զիջումն արեց, բայց այդ դեռ չէր նշանակում, որ հայերն արգեն ընդունել են քաղկեդոնական գավանանքը: Դա քաղաքական տուրք էր, որ կատարեց Եղբը Հերակլի պահանջների: Հանդեպ, արաբների նվաճումների նախօրեին միասնաբար պայքարի գուրս գալու համար: Նույնիսկ հունատայց Թեոդորոս Ռշտունին արաբական վտանգի պատճառով մէ առ ժամանակ

հակվեց հույների կողմը: Հետևաբար, Եղբին չի կարելի մեղադրել քաղկեդոնական դավանանք ընդունելու մեջ:

Սակայն վերոհիշյալ զիջումներից հետո էլ բյուզանդական արքունիքը և Հերակլ կայսրի երկրպագու Մժեժ Գնունին շարունակում են հալածանքը հայ իշխանների դեմ: Այդ պատճառով Քյուզանդիայում ապաստանած հայ իշխանները սկսում են միաշնալ հույն իշխանների հետ և դավադրություն կազմել Հերակլի դեմ: Կայսրի դեմ սկսած դավադրությանը մասնակցում էին նաև Վարագատիրոցը և նրա որդին՝ Սմբատը: Բայց առաջինը խորհուրդ է տալիս դավադիրներին, որ Հերակլին միայն գոհազուրկ անեն և ոչ թէ սպանեն: Դավադրությունը բացիկելուց հետո, կայսրը բոլոր դավադիրների ձեռքերն ու քթերը կտրել է տալիս, միայն խնայում է Վարագատիրոցին և նրա որդուն, որոնց 634 թվին աքսորում է Աֆրիկա: Իսկ Մժեժ Գնունին կայսրի թելադրությամբ հալածանքներ է սկսում երկրում: Նա ձերբակալում ու զղթայում է Դավիթ Սահառունուն և ուղարկում է Պոլիս, որն իրեն թե նույնպես մասնակից է եղել ապստամբությանը: Բայց Դավիթ Սահառունուն հաջողվում է 635 թվին աքսորի ճանապարհին աղատվել շղթաներից, փախչել ու վերադառնալ Հայաստան և կանգնել հայկուկան զորքերի գլուխը: Այնուհետև նա, հայ իշխանների օգնությամբ, հարձակվում է Մժեժ Գնունու վրա, հաղթում, սպանում է թե Մժեժին և թե նրա օդնական վարագողնել Գնունուն, որից հետո հայ իշխանների պահանջով Հերակլ կայսրը ստիպված է լինում ոչ միայն արդարացնել Դավիթ Սահառունուն, այլև նշանակել նրան Հայաստանի կառավարիչ կյուրապաղատի տիտղոսով, որն այդ պաշտոնում մնում է երեք տարի (635—638): Վերոհիշյալ անցքերը տեղի ունեցան 634—635 թվերին, երբ 634 թվի վերջներին Յարմուկի ճակատամարտում արաբները լուրջ պարտության էին մատնել բյուզանդացիներին: Բայց զրանով չեր վերջանում Բյուզանդական կայսրության ներդությունները Հայաստանում: Դավիթ Սահառունու դեմ շարունակվեցին դավագրությունները, մինչև որ նրան զենքի ուժով հեռացըրին (638 թ.): Դրանից հետո Հայաստանի երկու մասերն էլ փառարեն մնում են առանց դեկավարի: Սերեռու պատմագրի ասելով՝ «անմիաբանեալ ամէնայն պատացն, կոռուսին զերկիրս Հայոց»:

Այսպիսով, արաբական արշավանքների նախօրյակին, Հերակլ կայսը փոխանակ միտքանություն ստեղծելու հայերի և հույների միջև, կազմակերպելու նրանց ռազմական ուժերը և գուրս բերելու արաբների դեմ, ընդհակառակը, բռնել էր երկու ժողովուրդների միջև արհեստական դժողովություններ ստեղծելու ուղին, անտեղի առաջ բերելով՝ կրոնական գավանանքի խնդիրը. այդ հոդի վրա նա հայ իշխանների ու ժողովրդի մեջ սկսել էր հայածանք, որով հոգ էր ստեղծել արաբների նվաճումների համար:

Արաբների արշավանքների նախօրյակին, Մեկ հայ իշխանների մեծ մասը իրենց զոյտությունը պահպանում էին Հայաստանում, բայց չեղոքացել և կուչ էին եկել իրենց ամրոցներում. միայն աչքի ընկնող զեր էր խաղում Թեսողորոս Բշտունին, որը հետեւում էր օրփա կուրպին և մատածում էր երկրի փրկության մասին. Այս էր արաբական խալիֆաթի արշավանքների նախօրյակին Հայաստանի ներքին քաղաքական վիճակը:

Արաբների առաջին արշավանքը գեպի Հայաստան

Պաղեստինի, Արիայի, Միջագետքի և Պարսկաստանի նվաճումներից հետո, հերթը գալիս է Հայաստանի գրավմանը: Արաբների առաջին արշավանքը դեռ Հայաստան տեղի է ունենում 640 թվին Արդուլ Ռահիմ զորավարի գլխավորությամբ: Արաբական զորագնդերը 637 թվի Քաղիսի ճակատամարտից հետո Սադի զորավարի գլխավորությամբ շարունակում էին իրենց նվաճումները Պարսկաստանում: Սադին իր զորագնդերի մի մասին, Արգուլ Ռահիմ զորավարի դեկտէմբռությամբ, ուղարկում է գեղի Հայաստան:

Արաբական զորագնդերը Հայաստան են մտնում Միջագետքից հարավի կողմից: Նախ զրավում են Մոկաց նահանքը, Վարդիկ Մոկացի և Սահուռ Անձնայի իշխանները փոխանակ դիմագրություն ցույց տալու արաբներին, անձնատուր են լինում նրանց և արաբական գնդերին առաջնորդում են զեպի երկրի խորքը: Արաբական զորամասերը Մոկասից Բիթլիսի կիրճով մտնում են Տարոն, որտեղ Տիրան Մամիկոնյանը լուր է ուղարկում բոլոր հայ իշխաններին, որ գան և միասին կավեն արաբների դեմ: Բայց շատ քիչ իշխաններ եկան օգնության: Տիրանը միայն իր տոհմի եշ-

լսաններով ու 8.000 դորքով զիմաղրություն է կազմակերպում՝ նա մի քանի անգամ վճռական հականարկած է տալիս արտըներին, սպանում է դավաճան հայ իշխաններից Սահուռ Անձեւացուն, բայց վերջում ինքն էլ պարտություն կրելով ընկնում է հերոսի մահով ուրիշ երկու Մամիկոնյան իշխանների հետ։ Արարաները գրավում են Տարոնի գավառը և ափերում սրբավայրերը՝ Աշտիշատը, Գլակը և Մատնավանքը։ Ֆյդ նույն ժամանակ արարաները հերթականությամբ գրավում են նաև Սասունը, Աղձնիքը, Զորբորդ Հայքը, Արդնը և Բաղեշը։ Ապա, հաղթահարելով հայերի բոլոր դիմագրությունները, շարժվում են դեպի երկրի խորքը գրավելով Բղնունիքը (Խլաթի շրջանը), Աղիովիտը և Առերանի գավառները ահ ու սարսափ տարածելով գրաված բոլոր վայրերում։ Այսուհետեւ արարական բանակը երկու մասի բաժանվելով շարժվում է գեղի հյուսիս։ Արարական դնդերի մի մասը գնում է գեղի Ջավախքի գավառը, նպատակ ունենալով մտնել Թբիլիսի և գրավել Վրաստանը, իսկ բանակի հիմնական մասը, կոտրելով հայերի դիմագրությունները, Վանա լճի հյուսիսային ափերով, Բերկրիի ձորով, Կողովիտ գավառով, Օրգովիք (Զողլի) լեռնանցքով մտնում է Արարատյան դաշտը, նպատակ ունենալով դրավել Դվին քաղաքը։

Հայ նախարարները արարաներին ճանապարհին չեն կարողանում կունդնեցնել, Թեոդորոս Թշտունու ցուցմունքով Թեոդորոս Վահեվունին, Խոջյան Առավելյան և Շապուհ Ամատունին լուր են ուղարկում Դվին, որ քաղաքը ամուր պաշտպանեն արարաներից մինչև իրենց օգնության հասնելը։ Երջապատի դյուզացիները մտնում են քաղաք և քաղաքացիների հետ միասին կազմակերպում են քաղաքի պաշտպանությունը։ Հայերը քանդեցինեամծմորի կամուրջը, արարաների արշավանքի առաջն առնելու համար, բայց թշնամին Վարդիկ Մոկացու առաջնորդությամբ անցնավ գետը և հունիս ամսին, հասնելով Դվինի մոտ գտնվող Խոսրովի վակարտ անտառին, պաշտեց քաղաքը։

Արարաները 640 թվին, երեք ամիս պաշտում են Դվին քաղաքը, բայց չեն կարողանում գրավել այն, որովհետեւ հայերը լավ էին ամրացրել պարհաները և հերոսական դիմագրություննեն ցույց տալիս թշնամուն և ետ մզում նրա բոլոր հարձակումները։ Պատմական տեղեկությունները վկայում են, որ այդ-

Ժամանակ Դվինում էր ապրում 12 տարեկան մի արար, Արդուկ Ազիգ անունով։ Սա, երբ անում է, որ արարները չեն կարող պահում դժվարել քաղաքը, մթի գիշեր, գաղտնի, Դվինի պարիսպի նեղ անցքերից վեր բարձրանալով՝ բղավում է բերդապահներին, թե արարները քաղաքը գրավել են։ Պահակները ահից փախչում են, իսկ արարները սանդուղքներով բարձրանում են պարիսպներից և 640 թվի հոկտեմբերի 6-ին շատ հեշտ կերպով մտնում են քաղաք և գրավում այն։

Դվինի առումից հետո արարներն անխնա ավերում, թաղնում և մեծ կոտորած են սարքում։ Շրդ գարի պատճակից Սերեսով առելով ԺԲ (12) հազար մարդ են կոտորում, ապա մեծ քանակությամբ ավար ու ԼԵ (35) հազար մարդ գերի վերցնելով վերտառնում են Սիրիա, ասպատակ սփռելով ճանապարհին հառջիպած վայրերում։ Արարական բանակը վերադարձի ճանապարհին Կոգովիտիքավառում հանդիպելով հայոց զորավար Թեոդորոս Աշտառու փոքրաթիվ զորքին, որը գալիս էր Դվինին օգնության, հանկարծակի հարձակվում են արարների վրա, գերիներին ազատելու և ավարը ետ խելու նպատակով։ Բայց պարավելով ետ են քաշվում, իսկ արարներին հաջողվում է գերիների և ավարի մհծագույն մասը տանել իրենց հետ Սիրիա Դրանով վերջանում է արարների առաջին մեծ արշավանքը գեղի Հայաստան։

Այսուհետեւ Թեոդորոս Աշտառուի զորավարը, որի հեղինակությունը շատ էր բարձրացել երկրում, հատկապես արարների արշավանքի ընթացքում, իր զորագնդով մեկնում է Դվին՝ այնտեղի գործերը կարգի բերելու, զորքը կազմակերպելու և հետագայում արարների նոր արշավանքներին հաջող դիմագրություն ցույց տալու համար։ Դվինի գրավումն ու կոտորածն արագացնում են ծերունի եզրը կաթողիկոսի մահը՝ 641 թվի սկզբին։ Թեոդորոսը, որ եկել էր Դվին քաղաքը անմեղու և կարգի բերելու, ստիպված եղավ գրադվելու նոր կաթողիկոսի ընտրությամբ, որովհետեւ երկիրը փաստորեն մնացել էր առանց աշխարհիկ և հոգեոր զեկավարների։ Դվին հրավիրելով մի շաբթ իշխանների ու եպիսկոպոսների, կաթողիկոս են ընտրում Տայք նահանգի իշխան պյուղի զյուղացի Ներսիսին (641—661), Այսպիսով, Երևան Գրք կաթողիկոս է դառնում այն ժամանակ երբ

Դվինում գեռես չորացած չէր անմեղ գոհերի արյունը և նրա կաթողիկոսությունը փաստորեն սկսվեց դիմեներ թաղելով։ Այդ նույն ժամանակ (641) մահանում է նաև Հերակլ կայսրը։ Ներքին որոշ տարածայնություններից հետո կայսր է դառնում 12 տարեկան կոստանդ Ա-ը, որին հայ պատմագիրները կոստանդին են կոչում։ Նոր անունով։ Նոր կայսր կոստանդը բոլոր աքարագած հայերին ազատություն է շնորհում և վերադարձնում իշրենց տեղերը։ Հայաստան են վերադառնում նաև Վարագուհիրոցը և իր որդի Սմբատը։

Ներսիս կաթողիկոսի և իշխանների պահանջով կոստանդ կայսրը Վարագուհիրոցին նշանակում է Հայաստանի կառավարիչ իսկ Թեոդորոս Ռշտունուն Հայաստանի զորքերի հրամանատար-սպառապետ և պատրիկության աստիճան։ Անշուշտ Թեոդորոս Ռշտունին դրանից առաջ սպառապետ էր, կայսրը միայն վեց վերացնում է նրան իր սլաշտոնում։ Որանով նա աշխատում է այդ նշանավոր հայ զորավարին և զորքին ավելի սիրաշահել։ Վարագուհիրոց կառավարիչը ծերացած լինելով շուտով մահանում է, և նրա փոխարեն Հայաստանի կառավարիչ են նշանակում նրա որդի Սմբատին։ Կյուրազաղաղատի աստիճանով։ Իսկ ներսիս Տայեցի կաթողիկոսը հաշվի տանելով, որ պարսիկներն այլևս իրենց բրազուքները չեն կարողանում վերականգնել Հայաստանի նը-կատամամբ, արարտներն ել գնալով ուժնդանում են, թեքվում է գեղի հույնները և մեծ հույսներ է կապում բյուզանդական կայսրի հետ։

Թեոդորոս Ռշտունին, հայ ժողովրդի կյանքն ու զոյությունը վերահաս վատանդից փրկիլու համար, նույնպես հակվում է զեղուի հույնները, մեծ հույսներ զնելով բյուզանդական կայսրի զինական ազնության վրա, որ հայ և բյուզանդական զորքերի միացյալ ուժերով կծարդեն արարտներին։

642 թվին կոստանդ կայսրը Պրոկոպ զորավարի վկիավորությամբ կայսերական մի զորաբանակ է ուղարկում Հայաստան, որը հայկական զորքերի հետ միասին պիտի պաշտպաներ երկիրն արարտների նոր արշավանքներից։

Արաբների երկրորդ արշավանքը դեպի Հայաստան

Յըրաբների երկրորդ արշավանքը գեղի Հայաստան տեղի է ունեցել 642—43 թ. թ., որովհետև «Մարաց մեծ կոփվը» արաբների և պարսիկների միջև կայացել էր 643 թվին՝ Նեհավենդում, որտեղից հաղթանակով էին դուրս եկել արաբները։ Պարզ էր, որ զրանից հետո արաբական բանակը պիտի արշավեր դեպի Հայաստան Սարպատականի կողմից՝ Զուլֆայի և Նախիջևանի ուղղությամբ։

Արաբներն Սարպատականը զրավելուց և ավերելուց հետո, 642 թվին մասնում են Պարսկահայաստան, զրավում ու թալանի են հնթարկում Գողթան գավառը և «ցաստակերտ» Նախիջևանը։ Այդ ժամանակ բյուզանդական Հայաստանի սահմանագլխին բանակ զրած Հայոց զորավար Թեոդորոս Բշտունին և Պրոկոպ հույն զորավարն իրար հետ տարածայնության մեջ էին գտնվում, որի հետեւանքով Թեոդորոսը իր 8 հազար հայկական զորքով հեռանում է Պրոկոպի մոտից, գնում է Կոգովիտ զավառի հարավային կողմը գանվող Գառնի դավառը և սպասում այնտեղ։ Թե՛ պատմիչների մատ ուղղակի ատացույցներ չկան նրանց միջև եղած տարածայնությունների պատճառները պարզելու համար, բայց մենք հաստատ պնդում ենք, որ այդ տարածայնությունները տեղի են ունեցել Պարսկահայաստան ներխուժած արաբական զորքերին զիմագրություն ցույց տալու և չտարու շուրջը, այսինքն՝ հայրենասեր իշխան Թեոդորոսն աշխատել է համոզել Պրոկոպին, որ արաբներին դիմակը լուսած ցույց տան ոչ միայն բյուզանդական Հայաստանի սահմանագլխին, այլև Պարսկահայաստանի սահմանագլխին և առհասարակ թույլ չտան արաբներին մտնել Հայաստան։ Խոկ Պրոկոպը դեմ է եղել Թեոդորոսին և աշխատել է պաշտպանել միայն բյուզանդական Հայաստանի սահմանը։ Անա երկու զորավարների միջև տեղի ունեցած տարածայնությունների սրատճառները հստ երկույցթին բյուզանդական անբարտավան և ապաշնորեն զորավարը մեծ հօւս էր գրել իր 60 հազարանոց բանակի վրա, բայց այդ անբարտավանությունը ծանր է նստում հունական բանակի վրա։


Արաբները Նախիջևանը զրավելուց հետո, իրենց զորքը բաժանում են երեք մասի և երեք ուղղությում շարժվում են գե-

պի Հայտատանի տարբեր կողմերը: Առաջին զորամասը շարժավում է գեղի Սյունիք և Աղվանք, երկրորդը՝ Այրարատ և երրորդը՝ Վասպուրական:

Դեպի Այրարատյան աշխարհը շարժվող զորամասն ասպատակ սփակելով իր անցած ճանապարհին, համեմով Երևան քաղաքին, պաշարում է այն, բայց չի կարողանում գրավել իսկ գացուց է տալիս, որ այդ ժամանակ Երևանի բերդը և Երևան քաղաքը բավական մեծ են եղել և իրաշոր գեր են խաղացել Այրարատյան աշխարհում: Արարական զորամասը չկարողանալով գրավել Երևանը, թողնում է քաղաքի պաշարումք և շարժվում է դեպի հարավ՝ Իզգիրով: Օրդոֆի կերձով մտնում է Կողովիտ գավառը և պաշարում Արծափ գյուղը: Մտիայն արարներն այստեղ ևս հանդիպում են լուրջ զիժադրության և միայն բերդապահների անդգուշության պատճառով նրանք իմանում են Կախանակտուցի բարձունքի գաղտնի անցքը և այնտեղից ներս մտնելով կատորում են պահապաններին ու 643 թվի օգոստոսի 10-ին կիրակի օրը դրավում են Արծափ գյուղն ու բերդը:

Սակայն շուտով Թիուզորոս թշուռնին օդնության է հասնում Արծափին, որը ոչ միայն ետք է դրավում, այլ և իր 8 հազարանոց զորաբանակով լուրջ ջարդ է տալիս արարական զորամասին, որում ու դուրս է քշում երկրեց, ետք ելելով ողջ ավարն ու գերիները նույն վախճաննին է արժանանում նաև Այունիքի և Աղվանքի վրա արշավող զորամասը: Այս զորագնդի վրա են հարձակվում Այունիքի և Աղվանքի գրբերը Նախիջևանի գալատի սահմանում և ջարդում ու ցրում նրան: Այլ ընթացք ունեցան Վասպուրականի միա արշավող արարական զորագնդի զործողությունները:

Արարական այս զորագունդը շարժվելով գեղի Վասպուրական, Արտադ գավառի միջով հարձակվում է Մարտոցայքում գտնվող Պրոկոպ զորավարի 60 հազարանոց բանակի վրա և ջարդում նրան «Ի դաւառին» կողովոի և սահմանս Բազուձորն և Մարդոցայից», Բյուզանդուկան բանակը, որը կոչված էր պաշտպանելու բյուզանդուկան Հայտատանի սահմանը, անմարտունակ գուրս եկավ իր զոռողամիտ զորավարի պատճառով: Պատմիչների ասելով, վերոհիշյալ երկու բնակավայրերը գտնվել են բյուզանդական Հայտատանի և պարսկական Հայտատանի սահմանագլխին,



Խոյից գեղի Կողովիտ աանող Երկու հին ստղմուղիների վրա: Մարդոցայքը գտնվել է Խոյից Արտաղ, Արաղայի դաշտով դեպի Կողովիտ գավառը տանող ճանապարհի վրա, իսկ Բաղուձորը (Բազեի ձորը) գտնվել է Խոյից Արտաղ և Կողովիտ գավառը տանող ճանապարհի վրա: Այս բնակավայրերում էին գտնվում բյուղանդական գորամասները:

Պրոկոպիոսը Թեոդորոսի հեռանալուց հետո գորքը տեղափոխեց Մարդոցայքում, որպեսզի զուրս գար արաբների դեմ, բայց թշնամին կանխեց Պրոկոպին և հանկարծակի հարձակվելով հույների վրա, 10 հազար զորքով նրա 60 հազարանոց բանակը ջարգեց: Բյուղանդական բանակը մեծ գոհեր տալով խուճապահար բռնեց նահանջի ճանապարհը: Արաբական այս զորամասը, չնայած, որ հաղթեց հույներին, բայց նույնպես զերիներով և ավարով վերադարձավ Արաբիա 643 թվին: Այսպիսով, հայերն իրենց քաջ ու հմուտ զորավար Թեոդորոս Ռշտունու զլխավորությամբ, փոքրաթիվ զորքով ջարդեցին արաբներին, այն ինչ, գոռող Պրոկոպը իր 60 հազարանոց բանակով պարտություն կրեց 10 հազարանոց արաբական զորամասից: Դրանով վերջացավ արաբների Երկրորդ արշավանքը:

ՎԱՐԱԲՆԵՐՆ իրենց վերոհիշյալ երկու արշավանքների ընթացքում չեն կարողանում ամբանալ Հայաստանում, նրանք վերցրել էին ավար ու զերիներ և վերադարձել Արաբիա: Նրանց այս արշավանքներն ավելի շատ ունեցել են ասպատակության և ավտրասության բնույթ:

Հայ-հունական հարաբերությունները, արաբների երրորդ արշավանքը և Թեոդորոս Ռշտունու կենքած պայմանագիրը
Մուավիայի հետ

ԱՐԱԲՆԵՐԻ Հայաստանից հեռանալուց հետո, երկիրը մոտ 8 տարի վերծ մնաց արշավանքներից և ձեռնամուխ եղավ ավելացաքների ու գյուղերի վերտակառուցմանը: Ծավալվեց նաև եկեղեցական շինարարությունը. վերտշինվեց Դվինի ո. Սարգիսի եկեղեցին, որը այրել էին արաբները: Մի եկեղեցի կառուցվեց Խորիրապում, հիմք դրվեց Զվարթնոց հոյակառ եկեղեցու շինարարությանը:

Հայերը վանքերի ու եկեղեցիների շինություններով աշխատում էին ամբազնդել հայ լուսավորչական եկեղեցին, որի գեմ տոննձումներ էին անում հույները Բայց այդ շինարարության թափը շուտով կանգ առավ, որովհետեւ երկրում եղած բյուզանդական զորավարներն ու պաշտոնյաներն իրենց ձնշումներով, ծանր հարկացին կեղեքումներով և կրոնակավանական նոր հաւածանքներով շատ խիստ նեղեցին հայերին.

Բյուզանդական զորավարները գեռես Մարդոցայքի ճակատամարտից սկսած մշտապես մեղադրում էին Թեոդորոս Ռշտուն, որ իրքեւ թե նա դավաճանել է հույներին Մարդոցայքում, այդ պատճեռով էլ արարները հաղթել են: Մինչդեռ Թեոդորոսի կողմից դավաճանական ոչ մի քայլ տեղի չեր ունեցել նա միայն հույների հետ միասին չեր կովեր այլ առանձին, և շատ ավելի նվիրված, քան իրենք՝ հույները: Որոշ մեղադրանք էլ հարուցեցին Հայաստանի կառավարիչ Սմբատ Բագրատունու հասցեին, որ նա հունական քաղաքականություն չի վարում և զո՞նվում է Ռշտունու ազգեցության տակ: Այդ մեղադրանքն սկսել էր Պրոկոպ զորավարը արքունիքի առաջ՝ իրեն արդարացնելու համար, որին իրավացի կերպով մեղադրում էին Մարդոցայքում կրած պարտության համար:

Թեոդորոս Ռշտունու գեմ եղած մեղադրանքները հույն զորավարներն ուժեղացրին 644—645 թվերին, մինչև որ Թովմա զորավարի խարդախությունների հիմա՞ վրա 646 թվին նա ձերբակալվեց և ուղարկվեց Բյուզանդիա՝ դատվելու համար: Բյուզանդիա աքսորվեց նաև Հայաստանի կառավարիչ Սմբատ Բագրատունին:

Հույներն այդ հալածանքները հայերի դեմ արեցին այն ժամանակ, երբ արարները նորից սկսել էին իրենց արշավանքները:

Թեոդորոս Ռշտունին երեք տարի կալանքի մեջ մնաց Բյուզանդիայում, բայց իր համառ կամքի, աշխատանքի և Բյուզանդիայում եղած հայրենասիր հայ իշխանների միջոցով արդարացվեց և վերադարձավ Հայաստան 649 թվին ու նորից իր ձեռքը վերցրեց երկրի սազմական ուժերի գեկավարությունը, ինչպես նաև Հայաստանի կառավարման պաշտոնը, որովհետեւ Սմբատ Բագրատունին չեր վերադարձել Հայաստան:

Թեռգորսոս Մշտունու բացակայության տարիներին հույները
կրոնական նոր հալածանք սկսեցին հայերի դեմ: Կոնստանդ կայս-
րի հրամանով Պոլսից Հայաստան է գալիս հայտնի հայ վիլի-
սոփա Դավթի Բաղրեկանդցին, որը 648 թվին Դվինում ժողով
դումարեց և պահանջեց, որ հայերն ընդունեն քաղկեդոնական
դավանանքը: Թեև Ներսես Տայեցի կաթողիկոսը բռնեց դիջում-
ների ճանապարհը, բայց հայերը դեմ էին այդ զավանանքին և
հույներին երբեք չէր հաջողվում Հայաստանում տարածել քաղ-
կեդոնականությունը և զրկել հայ եկեղեցուն իր անկախությու-
նից, որի միջոցով հայ ժողովուրդը պահպանում էր իր ինքնա-
վարությունը:

Հայ բյուզանդական պայքարի ջրջանում արարներն Օմա-
րի սպանությունից հետո, Օսմանի ժամանակ նորից վերսկսե-
ցին իրենց տրշավանքները, Նրանք իրենց բանակը երեք մասի-
քաժանելով ձևանամուխ եղան նոր նվաճումների: Արաբական մի-
գորամասը Աֆրիկայի հյուսիսային մասերով շարժվում է դեպի
Խոպանիա, երկրորդը՝ Ասորիքից՝ գետի Կիլիկիա և Փոքր Ասիա,
իսկ երրորդը՝ գետի Միջագետք ու Պարսկաստան, որովհետեւ
Սասանյան գինաստիայի վերջին թագավոր Հաղկերտ III-ը Մի-
ջին Ասիայից փորձեր էր անում վերականգնել իր թագավորու-
թյունը: Վերջին երկու զորամասերը սպանում էին նաև Հա-
յաստանին: Այդ պատճառով, հայ ժողովուրդը նորից կանգնում
է վտանգի առաջ, նամանավանդ, որ երկրից բացակա էր Թիու-
զորսոս Մշտունի հայրենասեր զորավարը:

Բյուզանդիան, որ տիրում էր ամբողջ Հայաստանին, ոչ մի
պաշտպանություն ցույց չէր տալիս, նա իր սեփական հողը չէր
կարողանում պաշտպանել: Երկրում եղած հունական գնդերն ու
Նրանց հրամանատարները գոխանակ հայերին իրենց շուրջը հա-
մախմբելու և միասնաբար պայքար կազմակերպելու թշնամու-
դեմ, ընդհակառակը, հայերի նկատմամբ սկսել էին խիստ կեղե-
քումներ ու հալտծանքներ: Այդ հոգի վրա Հայաստանում առա-
ջանում են նոր տարածայնություններ արտաքին ուժերի դնաւ-
հասուման շուրջը և կազմակերպվում է հականունական ուժեղ հո-
ռանք, որին հարեց ու զլխավորեց Թեռգորսոս Մշտունին, երբ
Բյուզանդիայից վերապարձավ Հայաստան:

649 թվին արարական նավատորմիզը ծովից, զորքը ցաւ-

մաքից սպառնում էին Բյուղանդական կայսրությանը Պոլսի դոների առաջ: Կոնստանդի կայսրը միայն կարողանում է պատերազմական տուգանք վճարելու դնով և առամյա (649—652) հաշտության գաշինք կնքել և փրկել կայսրությունը կործանումից: Բյուղանդիայի այս օլաբությունից հետո կովող կողմերի ուժերի գնահատման հարցը շատ ուժեղ կերպով է դրվում Հայաստանում: Այս վճառական սղանին արարենքը 650 թվին կատարում են իրենց երրորդ արշավանքը գեղի Հայաստան: Արարական դորագնդերն այս անգամ դարձյալ Հայաստան են մըտնում Ատրպատականի կողմից, այժմյան Զուլֆայի վրայով: Նըսանք առանց լուրջ գիմագրության զրավում են Նախիջևանը, Դվինը, Արծափը և ուրիշ շատ վայրեր: Բայց աստիճանարար ժողովրդի կողմից նրանց գեմ կազմակերպվում է կատաղի դիմադրություն և վերահաս ձմռան սառնամանիքները, ուտելիքի պականը ստիպում են արարենքին ետ վերակառնալ, իրենց հետ տանելով գարձյալ ավար և գերիներ: Այդ պատճառով արարենքի այս երրորդ տրշավանքը նույնպես կրել է ավտրապության և ասպատակության բնույթը: Հայաստանում եղած բյուղանդական դորքերը զրեթե գիմագրություն ցույց չտվեցին արարենքին:

Արարենքի երրորդ արշավանքը և Բյուղանդիայի բռնած շիքը հայերի նկատմամբ, ինչպես նաև նըա կրած պարտությունը խալիթաթից, ստիպում են հայերին, հատկապես Թեոդորոս Բշտունին, բռնել չորիքների փոքրադույնի կողմը և փըրկել Հայաստանը: Առասարակ Թեոդորոս Բշտունի զորավարը սկզբում մերժեց թե՛ բյուղանդական և թե՛ արարական օրիենտացիաները: Նա աշխատեց պահպանել հայ ժողովրդի անկախությունը և նախաձեռնող եղավ նրա պատմական բախտի պաշտպանությանը: Ապա միջոդդային գետքերի ամենածանր ժամանակաշրջանում կանգնեց հայ ժողովրդի սաղմական ռոժերի գլուխը և անկաշառ ու անձնվեր կերպով պաշտպանեց իր հարազատ ժողովրդին: Նա հակվելով Բյուղանդիայի կողմը, աղատեց Հայաստանը կայսրության նվաճողական ճանկերից և վերջինի անվանական իշխանության տակ՝ վաստորեն երկրի իրական տերն ու կառավարիչը հանդիսացավ: Բայց երբ արարական վտանգը լուրջ կերպարանք ստացավ և անկախության հույսերը անցան անհաջող, նա քնարեց չարիքների փոքրագույնը և անցավ արարենքի

կողմը, փրկելու երկիրը նրանց աշխարհակործան արշավանքներից ու հույների հալածանքներից:

Թեսողորոս թշտունու համախոհները թվով քիչ էին, երկրի իշխանների մեծ մասը գեռնս Բյուզանդիայի կողմն էին և իրենց կապերն ու ակնկալությունները չէին կարել կայսրությունից Բյուզանդիայի կողմն էր նաև կաթողիկոս Ներսեսը, որը մի շաբթ նախարարներ իր կողմը գրաված, համառ կերպով հակառակում էր Թշտունուն: Նրանք գտնում էին, որ արաբների վտանգը հընարավոր է հեռացնել Հայաստանից միմիայն Բյուզանդիայի օժանդակությամբ:

Քաղաքական այս տարբեր ուղղությունները գնալով ուժեղ զանում են: 650 թվից հետո և աստիճանաբար իշխանների զգալի մասը գնում է Թշտունու հետեւից: Նա հաշվի առնելով միջազգային բարդ քաղաքական իրադրությունը, բանակցությունների մեջ է մտնում խալիֆաթի Սիրիայի փոխարքա, նշանավոր զարավար Մուավիայի հետ, որն Արաբիայում մեծ ազդեցություն ուներ:

Արաբական խալիֆաթն այդ ժամանակ բաժանված էր երեք փոխարքայության՝ առաջին՝ բռն Արաբիա Մեկկա կենտրոնությունով, երկրորդ՝ Միջազգետքն ու Պարսկաստանը Տիրուն կենտրոնով և երրորդ՝ Պաղեստինը, Սիրիան և փոքր ասիական երկրը ները Դամասկոս կենտրոնով: Հայաստանը մտնում էր այս երրորդ փոխարքայության սահմանների մեջ, որա համար էլ Թշտունին բանակցությունների մեջ է մտնում Դամասկոսի փոխարքայի հետ:

Արաբական փոխարքայի հետ սկսած նախնական բանակցություններից հետո, 651 թվին, հակառակ Կոնստանդ կայսրի կամքի ու նախազգուշացումների, Թեսողորոս Թուշտունին մեկշնում է Դամասկոս Մուավիայի մոտ և կնքում է Հայաստանի համար ձևանակու հետեւյալ պայմանագիրը:

1. Հայաստանը ճանաչում է արաբական խալիֆաթի գերիշխանությունը:

2. Հայաստանը խալիֆաթին յոթ տարի հարկ չպիտի վճարի, յոթ տարուց հետո վճարում է այնքան, որքան կկարող դանա:

3. Հայաստանը պետք է պահի 15,000 հեծելազոր, որի ուս

ճիկը պարտավորվում է վճարել խալիքաթը, իսկ այդ զորքի սը-
նունը մատակարարում է Հայաստանը:

3. Հայաստանի հեծելազորը բացի Ասորիքից, մնացած բոռ-
լոր տեղերը պիտի կովի գնա:

5. Սրաբական խալիքաթը հանձն է առնում զորքով օդնիւ
Հայաստանին՝ բյուզանդական կայսրության կամ այլ թշնամի-
ների հարձակումների ժամանակ:

6. Հայաստանում արար պաշտոնյա չպետք է նշանակվիր-
երկիրը պիտի կառավարեն հայերը:

7. Սրաբական խալիքաթը Հայաստանից եքը հարկ գանձի,
պարտավոր է զրամի հետ գուգընթաց վերցնել նաև հացահատիկ-
ինչպիս երեւում է պայմանագրի կետերից, գաշինքը վերին

աստիճանի ձեռնոտու է Հայաստանի համար: Սրաբական փոխար-
շան անշուշտ նման ձեռնոտու պայմանագիր է կնքել Ռշտունու-
հետ մի նպատակով՝ սիրաշահել հայերին և դուրս բերել նրանց
բյուզանդական կայսրության ազգեցությունից, թեկուղ մեծ զի-
ջումներով: Թեողորոս Ռշտունու և Մոււավիայի միջև կնքված վե-
րոհիշյալ դաշնադրությունն իսկապես խոշոր հարգած է հասցը-
նում բյուզանդական ազգեցությանը Հայաստանում:

Հայագետ պատմաբաններն ու բանասերները սովորաբար
թեոդորոս Ռշտունու և Մոււավիայի միջև կնքված պայմանագրի
թվականը գնում են 652 կամ 653 թվերին: Մենք ճշտել ենք,
որ այդ պայմանագիրը կնքվել է 651 թվին, Կանստանդ կայսրի
քաջակորուրյան II տարում, իսկ պայմանագիրը կնքվել է 7
տարով և ոչ թե 3, ինչպիս ցույց են տալիս Սեբեոսի պատ-
մուրյան 1879 թ. ս. Պետերբուրգի և 1939 թ. Երևանի երատա-
րակուրյանները:

Վերոհիշյալ պայմանագիրը կնքելուց հետո, Թեոդորոսը
Դամասկոսից վերադառնում է Հայաստան և լուրջ պայքարը
սկսում իր հակառակորդների դեմ: Կոնստանդ կայսրը մի շարք
դիմումներ է ուղարկում Ռաւաշունուն, որ նա իր հարաբերու-
թյունները իղի արտքների հետ, սակայն այդ բոլոր գիւմունիե-
րը մնում են անհետեանք: Դրանից հետո կայսը փորձ է անում
Ռշտունուն և հայ իշխաններին իր մոտ կամ կարին քաղաքը
կանչել բացարություն պահանջելու, սակայն այդ փորձը ևս
մնում է անհետեանք: Իսկ բյուզանդական արքունիքում զինվո-

քականներն ու բարձր պաշտօնյաները ճնշում են զործագրում կայսրի վրա, որ նա զի՞նքի միջոցով իրեն ենթարկի «անհնառդանոց» հայերին:

552 թվի աշնանը 24 տարեկան կանսաւանդ կայսրը արքունիքի ճնշման տակ 100 հազարանոց բանակի վլուխ անցած արշավում է գեղի Հայաստան՝ զի՞նքի դորությամբ իրեն ենթարկելու հայերին և սրածելու թեոդորոսին և նրա կողմանկիցներին, որոնք առանց իր թույլավության և կամքին գաշինք են կնքել խալիֆաթի հետ, որովհետև Հայաստանը սաղմական մեծ նշանակություն ուներ կոյսրության համար: Սակայն երբ անցնում էր Դերջան քաղաքից, նրա գեմ ելան խալիֆաթի մարդիկ, ցույց տվեցին խալիֆի նամակը, որի մեջ զբանական էր, «Հայք իմ են, անդ մի երթար, ասզա թէ երթաս՝ ևս զամ ի վեցայ քոյ, և առնեմ զքնող որ անդը էն փախչել ոչ կարես», իսկ կայսրն իր հերթին ողատախանութե՝, «Աշխարհն իմ, և ևս երթամ: զու եթե զաս ի վերայ իմ՝ Աստուած արդարութեան գատաւոր է»: Կայսրըն այսպես արհամարհելով խալիֆի պահանջը և զորքն առաջ շաբթելով համնում է կարին քաղաքը և կանդ առնում այնտեղ: Այն ժամանակ ծերունի Օսմանի թույլ ոկնտաւթյան մեջ առաջ էր Էկել կոկմասեր և խալիֆաթը կորցրել էր իր նախկին հզորությունը: Այդ էր պատճառը, որ Կոնստանդը հաշվի չի առնում խալիֆի բողոքը:

Կայսրը խիստ սրբառակիքով իր մոտ կարին է կանչում հայ իշխաններին, կաթողիկոսին և աչքի ընկնող հոգեգործականներին: Այդ ժամանակ մի շաբթ իշխաններ՝ Ծոփաց, Սպիրի, Բագրատունյաց, Մանուաղի, Դարանաղի, Եկեղյաց, Կարինի, Տայաց, Վանանդա, Շիբակի, Բասենի, Խոսիսունյաց, Գնթունյաց և այլն, որոնք թեոդորոսի կողմն էին, բայց հաշվի առնելով խալիֆաթի տկարությունը և Բյուզանդիայի հզորությունը, առաջնավելով անցնում են հույների կողմը և կաթողիկոսի հետ ներկայանում են կարին՝ կայսրին: Իսկ թեոդորոս Աշտունին հաստատ մեաց իր կնքած դաշինքին և 40 նշանավոր իշխանների հետ, որոնց թվում՝ Վրաստանը, Աղվանքը, Սյունիքը, Քշտունիքը, Վասպուրականը, Վահեկունիքը և այլն իրենց զի՞նքութական գնդերով մտան Աղթամար կղզին, որը մշտունին համարութ ամբացը և գարձրել էր անտոիկ ամբոց:

Կոնստանդ կայսը զայրանալով թեռփորոս մշտունու վրա՝ սրան աղատում է սպարապետության պաշտոնից և նրա փոխառքն հայկական զորքերի հրամանատար-սպարապետ է նշանակում Մուշեղ Մամիկոնյանին, որն անցել էր հույների կողմբ; Այսուհետև իսկամամբ, ասպատակեց նրանց եքիրները, կոտորեց և կողոպատեց մի շարք նախարարական տոհմերին, բանադրիկց ու աքսորեց շատ էջանների, ցրիկ տվեց նրանց զորամասերն ու գընդերը; Բայց Ախտամար կղզին չկարողացավ զրայիկ որտեղ թեռփորոս մշտունին մի շարք իշխանների հետ մնաց անսատան և սպառում էր պատեհ առիթի; Այդ բոլորից հետո կայսը 20.000-անոց բանակով եկավ Դվին և իջևանեց հայրապետանոցում, մոտիկից հետեւելու իրեն չհնազանդվող իշխաններին և պատժելու նրանց: Ապա Դվինի եկեղեցում Ներսես կաթողիկոսի հետ մաղթանք կատարեցին, իրար հետ հաղորդվեցին և հաստատեցին քաղկեդոնական գավանանքի ուժաւը: Այսպիսով, եթե դրանից 19 տարի առաջ Կարին քաղաքում Եղք կաթողիկոսը միայն խոնարինվում է Հերակլ կայսրի հրամանի առաջ, առաջ Ներսեսը ոչ միայն խոնարինվում է, այլև ընդունում է քաղկեդոնական գավանանքը և գանձում է նրա ջերմեռանդ պաշտպանը Հայաստանում: Դրանով, նա հենված բյուզանդական կայսրության 100-հազարանոց բանակի վրա, իր հոսանքով ժամանակավորապես հաղթանակ է տանում և թշտունու հայրենասեր մեծ իշխանին կուչ է բերում Ախտամար կղզում:

Սակայն Բյուզանդիայում, Կոնստանդ կայսը բացակայության հետեւանքով, շուտով առաջ են գալիք ներքին խոտվություններ, միաժամանակ հյուսիսային ցեղերը վերսակն սկսել էին իրենց արշավանքները գեղի կայսրության սահմանները: Այս հանգամանքները սախովում են կայսրին 652 թվի վերջին բաշական հիմնական մասով վերադառնալ Պոլիս, Հայաստանի կառավարումը հանձնելով իր օգնական Մավրիանոս զորավարին, նրա որոշակիության տակ թողնելով որոշ թվով բյուզանդական լեռնաներ և հայկական զորագնդեր:

Թիոդորոս մշտունին օգտվելով կայսը Հայաստանից հեռանալուց և բանակի մեծ մասն իրեն հետ տանելուց, գուրս է գաւկ կղզուց, ավագնում է իր զորքի թիվը և 653 թվի դարնա-

նը խալի փաթից 7000-անոց մի զորագունդ օգնություն ստանաւ-
լով հարձակվում է բյուզանդական զորքերի վրա, ջարդում է
նրանց և քշում Գուգարքի և Վրաստանի կողմերը: Վերոհիշյալ
վայրերումն էլ բյուզանդական գոռող բանակը լուրջ պարտու-
թյուն կրելով, Մավրիանոս զորավարի զիխավորությամբ նահան-
ջում է նախ Տրավիզոն և ապա գետի կայսրության խորքերը
իսկ Թեոդորոսը հայ-արարական զորագնդերով ոչ միայն մաք-
րում է Հայաստանն ու Վրաստանը բյուզանդական զորքերից,
այլ և լուրջ հարված հասցնելով թշնամուն, հետապնդելով նրան,
գրավում է նաև Տրավիզոնը: Մավրիանոս զորավարի ու նրա
բանակի հետ Հայաստանից հեռացավ նաև Ներսես Տայեցի կա-
թողիկոսն իր կողմանակիցների հետ, որովհետեւ նա շատ խիստ
կեցագով թշնամացել էր Ռշտունու հետ:

Սյունեսև Թեոդորոսը պատմում է մի քանի տասանվող
իշխանների, սակայն մեծ մասին ներումն է շնորհում, իսկ իր
փեսա Համազատալ Մամիկոնյանին խալի փաթի միջացով նշանա-
կել է տալիս Հայաստանի կառավարիչ և վեց տարի (653—658)
խաղաղությամբ կառավարում Հայաստանը, զարկ տալով երկրի
տնտեսական ու կուլտուրական կյանքին: Կրկին անդամ ծավալվեց
շինարարությունը, վերակառուցվեցին քաղաքներն ու գյուղերը,
վանքերն ու եկեղեցիները, գյուղերն ու պալտաները Բյուզանդա-
կան զորամասերի գեմ հաջողությամբ կռվելուց հետո, Թշտունին
նորից գնում է Դամասկոս և Մուավիայից ստանձնում է ոչ միայն
Հայաստանի, այլև Վրաստանի ու Աղվանքի զորքերի հրամանա-
տարությունը մինչև Դերբենդի կիրճը և այդ երկրների կառա-
վարումը, պայմանով, որ գրանց ևս հպատակեցնի արաբներին:
Իսկ Ներսեսը, նախ գնում է Պոլիս, ապա վերադառնալով Հա-
յաստան, քնակություն է հաստատում Տայոց աշխարհի իր հայ-
քենի Խշորան գյուղում և վեց տարի մնում այնահեղ և Դվին է
գալիս միայն Ռշտունու մահից հետո: Սյապիսով, թիհ Հայաս-
տանը գարձավ արարական խալի փաթի հպատակ մի երկիր, բայց
նա առժամանակ պաշտպանեց իր տնտեսական ու կուլտուրա-
կան անկախությունը:

Հայաստանի քաղաքական դրույթունը 7-րդ դարի II կեսին

656 թվին, Օսման խալի մահվանից հետո, Արարիայի
ներսում ծայր են առնում ներքին խոռվություններ ու կոհիմներ,

որոնք զնալով դինաստիական պայքարի բնույթը ևն ստանումն չայաստանումն էլ որոշ չափով սկավում են ներքին տարածայնություններ Մուավիայի և Ռշտունու միջև կնքված պայմանագրի ժամկետի լրացման շուրջը:

658 թվին լրանում է Հայաստանի և Արարիայի միջև կընքված 651 թվի 7-ամյա պայմանագրի ժամկետը: Ծերունի սպառապեսը թեև տկար էր, բայց ստիպված եղավ 658 թվին, իրհետ վերցնելով մի քանի հավատարիմ իշխանների, կրկին անդամ գնալ Դամասկոս, մի կողմից կարգավորելու երկրի ներքին գործերը, իսկ մյուս կողմից նոր պայմանագիր կնքելու խալիքաթի և Հայաստանի միջև և կարգավորելու երկու երկրների քաղաքական փոխհարաբերությունները:

Ստկայն Ռշտունին իր տկարությունը չկարողացավ հաղթահարել, օտար կլիմայական վատ պայմանները արագացրին նրա մահը և 658 թվին հայ հայրենասեր, տաղանդավոր գորավար Թեոդորոսը վախճանվում է Դամասկոսում, չկարողանալով Մուավիայի հետ նորից կարգավորել երկու երկրների միջև եղած քաղաքական փոխհարաբերությունները: Նրա դիակը բերում են Հայաստան ու թաղում: Այսպիսով, հայ ժողովուրդը կորցրեց իր 7-րդ դարի ամենանշանավոր գորավարին և պետական գործչին իր պատմության ամենածանր դարաշրջաններից մեկում, երբ այզպիսի զորավարների և զործիչների գեռ շատ խիստ կարիքն ուներ: Բայց նրա 30-ամյա անդուր գործունեությունն էլ բավական է, որ նա դառնա հայ ժողովրդի ամենասուրեկի զորավարներից մեկը: Որովհետև Թեոդորոս իշխանը շնորհիվ իրդինվորական տաղանդի և դիվանագիտական հմտությանը, մերպատմության ամենածանր պահին, փրկեց ժողովրդին արտական աշխարհակործան արշավանքներից և բյուզանդական ծանրկեղեքումներից:

659 թվին, Թեոդորոս Ռշտունու մահվանից հետո, Դիվին է վերադառնում Ներսես Տայեցի կաթողիկոսը, որն իր հակառակորդի ահից վեց տարի բացակայել էր երկրից և բնակում էր Տայոց աշխարհում: Նա օգտվելով Արարիայում շարունակվող ներքին կոփակներից, նախարարների մեծ մասին իր կողմը գրավելով, նորից բոնում է բյուզանդական օրիենտացիայի հին ուղին: Վրաստանն ու Աղվանքը, ինչպես նաև Սյունիքը, նույնպես

անցնում են հույների կողմը։ Համազառպ Մամիկոնյանը դորսի փեսան, որն արաբների կողմից էր նշանակվել Հայաստանի կուսավարիչ, գախենալով, նույնպես հետեւում է Ներսեսի ընթացքին և Կոնստանդի կայսրի հրամանով դարձյալ ճանաչվում է երկրի կառավարիչ կյուրապաղատի տիտղոսով և մատ երեք տարի (659—661) և շարունակում է կառավարել Հայաստանը։ Եյդ աւարիներին գարձյալ երկրում շարունակվում է Ներքին շինարարական աշխատանքները։ Ներսեսն ավարտում է իր կիսատ թողած Զվարթնոց եկեղեցու շինարարությունը, որը մի հոյակապ կոթող է։ Սակայն Ներսեսի գործունեալթյունը երկար չի տևում, նա ընդհատվում է արաբների նոր արշավանքների սպառնալիքով և նրա մահով։

659—661 թ. թ. գինաստիտիան կոիֆերը շարունակվում էին խալիֆաթի ներսում ավելի բորբոքված ձեռվ։ Դամասկոսում ուժնեղ գիրք գրավող Մոււավիա փոխարքան, որ Մելկայի Օմայանների խոշոր վաճառականական տոհմից էր, հենվելով աշխամտյան արաբների ու Ծեկկայի վաճառականների վրա, հրաժարվում է հանգանդվել Ալի խալիֆին, որը Մահմեդի եղբոր որդին էր և Մարգարեի միակ աղջկա ամուսինը։ Խալիֆաթի ներսում ներքին կափառերն ուժեղանում են։ Բյուզանդիան առիթից օգտագիր նորից փորձեր է տնում գրավել Հայաստանը և կյուրապաղատի բարձր պաշտոն տալով Համազասպ Մամիկոնյանին, աշխատում է նրա միջոցով կարգավորել իր գործերը Հայաստանում, իսկ Ներսես Տայեցին, որ արդին վերադարձել էր երկրը, գառնում է դրության տերը։

Արաբիայում անդի ռւսեցած գինաստիական կոիֆերը 661 թ. վերջանում են Մոււավիայի հաղթանակով, Ալին և նրա որդիները՝ Հասանը և Հյուսեինը սպանվում են, իսկ Մուավիան եիմք է պնում Արաբիայաւմ նոր դիճառտիայի, որն իր տոհմի անունով կոչվեց Օմայան դիճառտիա։

Իինաստիական կոիֆերը վերջում գնալով կրօնական ընույթ են ստանում և մասմեդական կրօնը—իսլամը բաժանվում է երկու մասի՝ հերձվածի՝ սունիների և շիաների։ Առաջին ուղղությանը հետեւում են արեմտյան արաբները և Մելկայի վաճառականները, որոնք ձգտում էին, որ Ղուրանի (Մահմեդի ուսմաւնքը պարունակող գիրքը) մեջ եղած բոլոր հավելումները,

Հունին հաշըս խալիֆների ժամանակ զբաժած ավանդությունները, պետք է մնան Այդ բոլոր հավելումներից կազմվեց մեղքիրք՝ «Սուննա» անունով, այսաեղից էլ այդ ռւզգությունն ստացավ սունի անունը: Իսկ երկրորդ ուղղությանը հետեւում էին Շեղինեի ու արեւելյան արաքները, պարսիկները և արեւելյան զաղությների մահմեղականները: Մրանք հետեւում էին Ալիին ու օրինական էին համարում միմիայն Մահմեդի տոհմից եղած խալիֆներին ու աշխատում էին խլամական կրանք մաքրել ավանդություններից, այսինքն այն ամենից, ինչ որ Մահմեդից չեր գալիս իրեւ սրբազն զիրք ընդունում էին միայն Ղուրբանը: Այս ուղղության կողմանակիցները կոչվեցին շիաներ:

Արաբիայում հաղթանակով գուրս եկող Մոռավիան մեծ փոփոխություններ մտցրեց արաբական խալիֆաթի կյանքում: Նա, որ հմուտ զինվորական էր և տաղանդավոր պիտակական գործիչ, խալիֆաթին կանոնավոր զիրք ու ձեւ տվեց: Անտրուպի խալիֆները դառնում են ժառանգական, որովհետեւ հիմնվեց զինաստիո, ավաբառության որատերագիտները տեղի տվեցին նվաճողական պատերազմների, պետությանը տրվեց աշխարհիկ բնույթը թե իր վարչական ու զինվորական կազմով և թե իր տնտեսական հիմքով ու ֆեոդալական կազմակերպությամբ:

661 թ. Մոռավիան ջարդելով իր հակառակորդներին և իր զիրքերն երկրում տմբապնդելուց հետո, ուշադրություն է զարձնում առաջին հերթին Հայաստանի վրա: Նա հաշվի առնելով հայ իշխանների մեծ մասի Շեքվելը գեղի Քյուղանդիա և վերջինի ոտնձգությունները հայերին տիրելու ուղղությամբ, սպառնալից հրաման է ուղարկում Հայաստան, որով ուսհանջում է, որ ճաշաշեն արտօրական իշխանությունը Շյյդ միջացին: մահացել էր Հայաստանի կառավարիչ կյուրապաղատ Համազասպ Մամիկոնյանը: Հայ իշխանները երկար ժամանակ ներսես կաթողիկոսի մոտ խորհրդակցելով այն կարծիքին էին, որ կայորից պետք է պահանջել նոր կառավարիչ-կյուրապաղատ: Վակայն վերջում, հաշվի առնելով խալիֆաթի հզորանալը, սպառնալիքը և այն, որ հայերի 1775 պատանդներին կոտորել էին Արաբիայում և թողել միայն 22 հոգի, ներսեսի նախապահությամբ զումարված հայ իշխանների ժողովում «հայ նախարարներն ու իշխանները, հանձն են առնում խմայելացիների բանությանը հպատակվել»:

Ա Դամասկոս պատանդ են ուղարկում Գրի 17. ամ ի կոնյակին
ու Սմբատ Բագրատունուն: Քսան տարուց ավելի հօջ զաքականություն վարող Ներսեսը ստիպված եղավ թեքվել իշխանների: Կողմը և ընդունել արարական օրիենտացիան: Բայց նա այդ որոշումը հաղիվ ընդունած, մահանում է 661 թվի աշխանը: Այնուհետև իշխանները նոր գեսպան են ուղարկում Դամասկոս՝ Մուռավիա խալիֆի մոտ և խնդրում են նրանից Հայաստանի կառավարիչ նշանակել Համազասպ Մամիկոնյանի եղբայր՝ Գրիգոր Մամիկոնյանին, որը պատանդ էր ուղարկվել Դամասկոս:

Մուռավիան ընդունում է հայ իշխանների պահանջը, Հայաստանի բոլոր պատանդներին ազատ արձակելով վերադարձնում է Արենց տեղերը, որոնց թվում Սմբատ Բագրատունուն և Գրիգոր Մամիկոնյանին: Նախարարների պահանջով 662 թվին Գրիգորին նշանակում է Հայաստանի կառավարիչ, մահացած Համազասպ Մամիկոնյանի փոխարքենու Միաժամանակ տարեկան 500 դահեկան հարկ վճարելու պարտավորություն է սահմանում: Խալիֆ Մուռավիան Հայաստանի նոր կառավարիչ Գրիգոր Մամիկոնյանի վրա պարտավորություններ է դնում, որ նա պիտի պահպանի երկրի ներքին կարգը և սահմանված 500 դահեկան պետական հարկը հավաքի և ուղարկի արքունի դանձարան: Այսպիսով, Մուռավիա խալիֆը բացի մի կետից՝ հարկ վճարելը, անփոփոխ է պահում 651 թվի Թեհուզուսու մշտունու հետ կնքած Հայաստանի համար ձեռնադր պայմանագիրը, որով Հայաստանն իր ներքին ինքնավար գործերում մնում է անկախ: Նու միաժամանակ վերականգնում է իրավազրկված իշխանների քաղաքական և հողային իրավունքները: Նա սահմանում է Հայկական զորքին ոռճիկ տալը, տարեկան 100 հազար դահեկան զումարի չափով, իսկ եթե ոտ համեմատենք Հայաստանից գանձվող 500 դահեկան հարկի հետ, նոր պարզ կլինի խալիֆաթի զիջող քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ, որը պարզ ու որոշ ցույց է տալիս, որ Հայաստանն անվանական է հնթարկված եղել արաբական խալիֆաթին այս շրջանում:

Առասարակ Մուռավիա խալիֆը, թեև ագան, բայց վերին աստիճանի խելոք և իմաստուն պետական զործիչ էր Նա գիտեր, թե ինչպիս բաշխել և հավաքել հպատակ երկրների հարկերը

Դայ ու արշները 662—688 թ. թ. շրջանում ոչ մի արտօնացչունեն հարկերի շատության մասին, որովհետև 500 դահեկան չնչին հարկ էին վճարում խալիֆաթին: Մաւալիա խալիֆի վերոհիշյալ զիջող քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ, ի հարկե, ուներ իր պատճառները. գըանք էին՝ 1) կտրել հայերին քյուղանդական կայսրության ազգեցությունից, 2) երկրի տնտեսական քայլացայումը և արաբների գեռնս Հայաստանում ամուր կերպով չհաստատվելը և 3) արաբական խալիֆաթը զբաղված էր իր ընդարձակ նվաճումներով. եթե Հայաստանում ճնշումները խստացնեին, կարող էր առաջ դալ ապստամբություն: Ահա, թե ինչն էր ստիպում Օմայան զինաստիայի հիմնադրին մեղմ քաղաքականություն վարել Հայաստանի նկատմամբ:

Ավելի քան քառորդ դար Հայաստանը վայելում է լիակատար խողաղության շրջան և սկսվում են շինարարական լոյն աշխատանքներ: Գրիգոր Մամիկոնյանն աշխարհաշեն կյանք վարեց: Զարդացավ կուլտուրան ու տնտեսական կյանքը, ընդարձակվեց դպրոցական ցանցը, զիտական կյանքն աշխուժացավ: Այս գարաշը չան շահանումն է, որ լայն զիտական զործունեություն ծավալեց հայ նշանավոր մաթիմատիկոս Անանիա Շիրակացին:

Հայաստանի այս արտօնված զրությունը սկսում է փոխվել այն շրջանից, երբ խալիֆաթի ներսում ծայր են առնում ներքին խռովություններ:

Հայաստանի արաբա-բյուզանդական մրցման օրեկտ
7-րդ դարի վերջին

679 թվին արաբները, որոնք 7 տարի Պոլիսը պաշարել էին, լուրջ պարտություն են կրում և ջարդվելով ետ են նահանջում ու ստիպված են լինում 30-ամյա խաղաղության պայմանագիր կնքել Բյուզանդիայի հետ, վերջինին վճարելով տարեկան 30,000 ոսկի և 50 ձի, որը շատ ծանր է նստում խալիֆաթի վրա:

680 թվին մահանում է Մոււավիա խալիֆը, որի հաջորդ ները (Եպիտը՝ 680—683, Մոււավիա II՝ 683—684 և Մրվանը՝ 684—685) չեն կարողանում գլխավորել պետությունը: 683 թվից խալիֆաթի ներսում ծայր են առնում ներքին արյունալի կորիվ-

ներ, որոնք շատ ծանր են նստում Արարիայի վրայ ։ Եռյնիսկ ուղմամոլ Աբգուլ-Մելիքը (685—705), սկզբում չի կարողանում կասեցնել ներքին այդ խռովությունները և պետությունը բաժանված է մնում երեք խալիֆների միջև։ Խալիֆաթի կրած պարտությունը Բյուզանդիայից և նրա ներսում առաջ եկած ներքին խռովություններից սիրտ առած Վրաստանը, որը շատ սեբտ կերպով կապված էր կայսրության հետ, Ատրներսին իշխանի գլխավորությամբ փորձում է թոթափել արտքական լուծը։ Վրաստանի այդ ձգտումը կասեցնելու համար խալիֆաթը Բյուզանդ դորավարի գլխավորությամբ մի բանակ է ուղարկում Հայաստանի վրայով գեղի Վրաստան, որպեսզի պատժի ըմբռոստ վրացիներին։ Սակայն արարական այդ բանակը լուրջ պարտություն է կրում վրացիներից և ետք չողրավում գեղի Հայաստան, և ասպատակությունների է սփոռմ Հայաստանի հյուսիսային գավառներում, թեև հայերը խալիֆաթի դեմ ոտնձգություններ չէին կատարել։ Դրանից հետո Անգրկովիասի արարական տիրապետությունների վրա են արշավում խաղարները հյուսիսային կողմից, որոնց դեմ 682 թվին Հայկական զորագնդով զուրս է դալիս Հայաստանի կառավարիչ Գրիգոր Մամիկոնյանը, որը թեև ջարգելով խաղարներին ետք մզում արտքական տիրապետություններից, բայց ինքն էլ նրանց դեմ մզած կոիվներում ընկնում է հերքուի մահով։

Յասղիկն ու Սամվել Անեցին Պրելյորի մահը դնում են 682 թ., իսկ Հովհաննես կաթողիկոսը՝ 684 թվին։ Ամենահավանականը 682 թիվն է։ Դա ցույց է տալիս, որ Գրիգոր Մամիկոնյանն ավելի, քան քսան տարի խաղաղ կառավարել է Հայաստանը։

Գրիգոր Մամիկոնյանի մահվանից հետո, թեև հերթականությամբ Հայաստանում իշխում են Աշուա Բազրատունին՝ երեք տարի և Ներսնի Կամսարականը՝ չորս տարի, բայց երկիրը նըրանց մահվանից հետո տագնապակի մի շրջան է ապրում։ Պատմագիր Ասողիկն ասում է, «Յայսմ ժամանակ հալածումն և ավերումն սաստիկ էնաս աշխարհիս Հայոց», իսկ Հովհաննես կաթողիկոսն ավելացնում է. «Խաղաղութիւնն վրդովիցաւ և սասանումն սաստիկ դՀայաստան էնաս պատեալ պաշարեաց»։

Վրարայուղանդական նոր կոիվների շրջանում հայերի

Պրությունը դառնում է անտանելի, նրանք չկիտեին, թե որ կողմ թեքվեն իրենց կյանքն ապահովերու համար։ Սակայն չնայած զրան, հույները մինչև 688 թիվը չարձակվեցին Հայաստանի վրա։ Խալիֆաթի կողմից նշանակված կառավարիչները հերթականությամբ կառավարեցին երկիրը։

Վ 685 թվին խալիֆաթի գլուխում է կանգնում ռազմամոլ Արդուլ-Մելիքը, բայց նա հազիվ կարողանում է իր իշխանության տակ պահել Ասորիքը և 13 տարի ռազմատուգանք վճարելով Բյուզանդիային, պայքար է մզում Արարիայի և Միջագետքի արարական գոտուրքաների գեմ, որոնք իրենց խալիֆ էին հայտարարել Իսկ նույն թվին Բյուզանդական կայսրության գլուխն է կանոնակամ Հուստինիանոս Ա-ը (685—695), որը նույն պես ռազմասեր կայսրներից էր և երկար ժամանակ զրադիւմ է պատերազմական գործողություններով։ Վեքոհիշյալ երկու ռազմամոլները երկար ժամանակ պայքար մղեցին Մերձավոր Արևելքի շուրջը գերիշխանության համար, և նորից Հայաստանը կովախնձոր է դառնում արարարյուղանդական պետությունների միջև ու նորից տակն ու վրա է լինում Հայաստանի քաղաքական կյանքը։ Բյուզանդիան գեռես տիրում էր մի շարք հայաշատ գավառների՝ Ամասիային, Կապադովիային (արեւայան մասը), Մերաստիային և Միլիտեներին, այսինքն՝ նախկին Փոքր Հայքին, Արարներին ևնթակա էին Եփրամից դեպի արևելք ընկնող գավառները այսինքն՝ Մեծ Հայքը։ Սրբարյուղանդական պետությունների ձեռքին կովախնձոր է գասում վերջինս։ Բայց շնորհիվ Արարիայում տեղի ունեցած ներքին խռովությունների, Բյուզանդիան սկսած 688 թվից մինչև 698 թիվը աիրում է նաև Մեծ Հայքին։

Հայաստանը մինչև Բյուզանդիայի կողմից զրավվելը, հաշու ու խռիսաղ էր նա զերծ էր թե արարների արշավանքներից ու կողոպուտներից և թե հույների կրոնական հալածանքներից։ այդ պատճառով հայերը մեծ մասամբ զրադիւմ էին երկրի ներքին շնարարական աշխատանքներով։

Կայսրությունը մեղմ քաղաքականություն վարելով հայեր և նկատմամբ, նպատակ ուներ սիրաշահել նրանց, զրավել իր կողմը և գուրս բեղել արարների գեմ, որովհետև հալածելով հայերին, միշտ թշնամացնում էր նրանց իրեն հետ։ այժմ սի-

քաղանելու քաղաքականությամբ աշխատանց հայերին մոտեցնելիքնեն: Այդ քաղաքականության մեջ կայսրությունը ձեռք է բեռում որոշ հաջողություն:

688 թվին Հուստինիանոս Ա, չեղյալ հայտարարելով իր հոր արարների հետ կնքած 679 թվի 30-ամյա պայմանադիրը, Ղեղվոնդիոս զորավարի գլխավորությամբ մի բանակ է ուղարկում Սքենք, արարական տիրապետությունն ու աղդեցությունը Հայաստանից վերացնելու և իր քաղաքականությունն ու դավանանքն այնտեղ տարածելու համար:

Բյուղանդական զորավարը հայերից պահանջում է, որ նրանք արարներին գուրս քշեն Հայաստանից և ընդունեն հույներին: Սակայն հայ իշխանները պատասխանում են, որ իրենք օտարների գեմ կովկեր ժամանակ կայսրությունից երբեք օդանություն ու պաշտպանություն չեն ստացել ընդհակառակը, միշտ կրել են զրկանք ու հալածանք Հայ իշխանների այդ համարձակ պատասխանից հետո, Ղեղվոնդիոս զորավարն իր բանակով հարձակվում է Հայաստանի վրա, զրավում և քար ու քանդ է անում 25 գավառ, 8000 տուն հայերի գերի է տանում, ան ու սարսափ տարածում երկրի չորս կողմը: Սպանվածների թիվը հայտնի չէ, միայն պատմիչներն հայտնում են, որ «կոտորածն եղաւ բազում»:

Հայերը, որ արարների ներքին խոռվությունների պատճառով չերպղացան նրանցից օգնություն ստանալ, ստիպված եղան ընդունել բյուղանդական տիրապետությունը և, ներսէ Կամսարականից հետո, կը կին անգամ 688 թվին Աշոտ Բագրատունուն նշանակեցին Հայաստանի կառավարիչ: Առ ավելի մերկ վելով կայսրության քաղաքականությանը, բյուղանդական արքունիքի ուշադրությունը զրավեց իր վրա: 689 թվին Հուստինիանոս Ա կայսրը 40.000-ոց նոր բանակ է ուղարկում Հայաստան, այնտեղից արարական գնդերին մաքրելու համար: Աշոտ Բագրատունին օգնեց կայսերական զորքերին և Հայաստանը դուրս եկավ իւալիֆաթի տիրապետությունից ու անցավ Բյուղանդիայի գերիշխանության տակ: Հայաստանը ենթարկվեց ծանր հարկերի ու կրօնական հալածանքների: Ինչպես երեսմ է, 7-րդ դարում արարական տիրապետությունը Հայաստանի վրա ավելի տանելի է եղել քան բյուղանդականը: Աշոտ Բագրատունին Հա-

Հաստանը կառավարեց չորս տարի, որի ընթացքում Կըկիրը վերստին անցավ իր խաղաղ, շինարարական աշխատանքներին: Վերաշնվացին ունորոպվացին հույների քանդած գավառները, քաղաքներն ու գյուղերը: Աշոտը կառուցել ավեց Դարույնքի (Հին Բայազիտ) նշանավոր եկեղեցին:

Բայց զբանով չի վերջանում Հայաստանի շուրջն սկսված արարաբյուղանդական կոփիները: 692 թվին Պարսկաստանի վըա իշխող Մողուզ Խալիֆը, որ կոփիներ էր մղում Արդուլ-Մելքիքի գեմ, մի կորագունդ է ուղարկում Հայաստան, այդ երկիրը Բյուզանդիայի գերիշխանությունից դուրս բերելու և իրեն հնիքարկելու համար:

Արարական զորագունդն այժմյան Զուլֆայի կողմից մըտնելով Հայաստան, զրավում, կողոպտում է Զուղա և Խրամ քաղաքները, իսկ բնակիչներին կոտորում է: Աշոտ Բագրատունին հայկական գնդերով դուրս է գալիս Հայաստան ներխուժած արարական զորամասի գեմ, ջարդում ու ցրում է նրանց: Սակայն թշնամին ավելացնելով իր կոփող ուժերը, կրկին անզամ անցնում է հարձակման հայկական գնդի վրա, Հրամանատար Աշոտ Բաղրատունին մահացու վերք ստանալով մեռնում է ու թաղվում Դարույնքում, իսկ արարական գնդերը ետ մղելով հայերին, մասնում են երկրի խորքերը: Այն ժամանակ Հուստինիանոս Ա-ն ինքն անձանք մեծ բանակի զլուխ անցած 693 թվին շարժվում է դեպի Հայաստան, այնտեղից արարներին դուրս քշելու համար: Նա իր զորքի մի մասն ուղարկեց Աքաստան, իսկ մյուս մասը՝ Աղվանք: Նախ վերոնիշյալ երեք երկրներից արարներին դուրս քշեցին, հետո ճնշեցին երեք երկրներում եղած հականունական գժգոնությունները, և նորից Հայաստանը մտավ կայսրության գերիշխանության տակ: Այսուհետեւ Սահակ Զորոփորեցի կաթողիկոսը հինգ եպիսկոպոսների հետ աքսորվեց Պոլիս, որը ոք գժգոն էին կայսրության քաղաքականությունից:

Հայաստանի կառավարումը հանձնվեց Ներսեն Կամսարականին (692-695), որից հետո Հայաստանի կառավարիչ է գառնում Ամբու Բագրատունի Բյուրատյանը: Հուստինիանոս կայսը շուտով վերադարձավ Պոլիս, որովհետեւ այնտեղ սկսվել էին ներքին խռովություններ:

695 թվին Դեռնդիս Բյուղանդացին զինվորական խռովու-

թյուն բարձրացը կց Հուստինիանոս կայսրի դեմ, գահընկեց առեց նրան, քիթը կտրեց ու աքսորեց խաղաքների մոտ և ինքը դարձավ կայսր։ Կայսրի փոփոխության արդյունքն եղավ Սահակի աքսորեց ազատվելը և Հայաստան վերադառնալը։ Պատմիչների ասելով կաթողիկոսը ոչ միայն Հայաստանում, այլև Պոլսում նույնպես չի ընդունել կայսրի պահանջները կրօնաւկան զիջումների մասին։ Բայց Հայաստանը շարունակեց մատկայական դերից խաղաքականության տակ։ Սակայն Բյուզանդիայի ներքին քաղաքական դրությունը գնալով թուլանում է գահակալական խոռվությունների պատճառով։ 698 թվին Ապուխմատին իր հերթին զահընկեց անելով սպանում է Դեռնդիոս կայսրին և ինքը գրավում է դահը։ Գահակալական այս կորիները լուրջ կերպով թուլացնում են կայսրության հիմքերը և նա ի վիճակի չի լինում իր ձեռքում պահել Հայաստանը։ Իսկ զրաեւ հակառակ, արաբական խալիֆաթն աստիճանաբար դուրս է գալիս ներքին կորիներից և հողորանում։ Ասորիքի խալիֆ Արդուլ-Մելքը որ երկար ժամանակ զինաստիական պայքար էր մղում Ալիի կողմանակիցների դեմ, 694 թվին ջարդում է Պարսկաստանի և Միջագետքի փոխարքա զորավար Մողապին, որն ինքն իրեն խալիֆ էր հոչակել ու իրեն է ենթարկում խալիֆաթի արևելյան գաղափառները։ Այնուհետև նաև սկսում է իր պայքարը Արաբիայի խալիֆ Արդայի դեմ և վերջինքը 698 թվին նրան հաղթում է ու գրավում հարավոյին մարզերը, Այսպիսով, Արդուլ-Մելքը միահեծան տեղ է դառնում ամբողջ Արաբիային, վերականգնում է Օմայանների զինաստիան և մայրաքաղաքը Մեկկայից տեղափոխում է Դամասկոս։ Իր այս հաղթանակից անմիջապես հետո նա իր զենքը դարձրեց զեպի Բյուզանդիան և Հայաստանը։ Մանավանդ գետի առաջինը, որը գրավիլ էր ոչ միայն Հայաստանը, Վրաստանը և Աղվանքը, այլև բավական առաջ էր շարժվել գետի արաբական երկրները։ 695—698 թ.թ. բյուզանդացիները մեղմ քաղաքականություն վարելով հայերի նըկատմամբ, նրանց որոշ չափով գրավիլ էին իւնաց կողմը։ Արաբարձրութանական կորիների շրջանում Հայաստանը խիստ կերպով տուժում է։

698 թվին Արդուլ-Մելքը խալիֆը մի մեծ քանակ տալով իր կղբայր արյունաբրու Մահմեդ-բին-Մրվանին, ուղարկում է դնողի

Հայաստան: Սա սկզբում բանակցությունների մեջ է մտնում կայսրի հետ Հայաստանը խալիքաթին վերադարձնելու կապակցությամբ:

Բանակցություններն անցնում են աղարգյուն և սկզբում է պատերազմական գործողություններ հռւական դորարանակաների գեմ: Մի քանի ճակատամարտերում Մրվանն իր բանակով ջարդում է բյուզանդական գնդերին, դաւրս է քշում Հայաստանից և գրավում է այն: Արյունաբրու Մրվանը երկու տարի մնաց Հայաստանում, ասպատակեց երկրը, սիսակմատիկ կերպով կողոպտեց ու կոտարեց այդ երկրի բնակչությանը: Նա իր վայրագություններն սկսեց Մոկաց հահանգի Զերմանոր գավառից: Ով նրա գեմ դուրս էր զալիս, անխնա ջարդվում էր, Հայ իշխաններն անմիաբան էին, միասին հանդես չէին գալիս թշնամու գեմ, այդ պատճառով էլ պարաւթյուն էին կրում: Իսկ բյուզանդական վարձկան զինվորները շատ քիչ գիմադրություն ցույց տվին: Մրվանը հայերին անջատանջառ ջարդելով, մըանում է երկրի խորքը և անխնա թալանում նախարարությունների հարստությունները, ինչպես նաև կողոպտում է վանքերի և եկեղեցիների ունեցվածքը: Եերգերում և ամրոցներում ապաստան գտածներին խարեյությամբ դուրս էին բերում, տղամարդկանց կոտորում, իսկ կանանց ու երեխաներին գերի տանելով վաճառում էին: Դրանով իսկ մեծ նեղություններ էին որատճառում երկրին և որն առիթ է տվել Դեռնդ պատմագրի հետեւյալ հասկածին: «Երանել զմեռեալուն՝ որք խաղաղական հանգստութեամբ յաշխարհես փոխեցան»: Ինչքան գաժան է եղել Մրվանի քաղաքականությունը, որ պատմագրիը մեռնելը գերադասել է կենդանի հնալուց:

Մրվան զորավարի գեմ երկու տարի գիմադրեց Սևանա կըզպին, որն ամուր մի բերդ էր, որտեղ շատ ու շատ մարդիկ էին ապաստան գտել, աղատվիկ կոտորածից և փրկել իրենց հարստությունը թալանից: Մրվանը լաստերով կամուրջ շինեց, նրա վըր ըայով զորք մտցրեց կղզին և զոհերի մեծ գնով գրավեց այն կղզին գրավելուց հետո, այնտեղ գտնվածներին գերի ուղարկեց Դամասկոս վաճառելու համար: Ինչ վերաբերվում է այնտեղ հաշվարքածին գրաված հարստությանը՝ ավարի ու թալանի հնթարկեց այն, առաջուծի բաժինը վերցնելով իրեն, մնացած մասը բաժանեց իր

հրոսակներին, իսկ կղզու ամրություններն էլ անխնա քար ու քանդ արեց: Այսպիսով, Մրգան զորավարն իր բացառիկ պաշտոնը Հայաստանում 698—700 թ. թ. ավարտում է երկիրը խիստ կողոպտելով ու քար ու քանդ անելով, բնակչությանը անխնակոտրելով ու գերավարելով, բոլոր դիմադրական կետերն ընկը ճելով և ամենուրեք՝ Հայաստանը, Վրաստանը և Աղվանքն ենթարկելով արաբական խալիֆաթի դաժան կեղեքմանը: Նա գրանով 700 թվին վերջացնելով իր դերը, Հայաստանի կառավարիչ է նշանակում Ապղլային, իսկ ինքը բանակի հիմնական մասով վերադառնում է Դամասկոս: Ապղլայի արամադրության տակ թողնելով որոշ քանակի զորք և պաշտոնյաներ: Իսկ Հայաստանի կառավարիչ Սմբատ Բյուրատյանը մնում է միայն հայկական զորագնդի հրամանատար, Սահակն էլ մնում է որպես կաթողիկոս: Այդ շրջանում Մամիկոնյան և Կոմմարական նախարարությունները դործում էին հօգուտ Բյուզանդիային իսկ սպարապետ Սմբատ Բագրատունին դործում էր հօգուտ Խալիֆաթի և վարձատրվում էր Հայաստանի իշխանությամբ:

Արդյա ոստիկանով է սկսվում փաստորեն արարների (ըստ հայ աղբյուրների՝ հագարացիների-խսմայելացիների-սարաւակիոսացիների) տիբապետությունը Հայաստանում: Մինչ այժմ ավելի քան 60 տարի (640—700 թ. թ.), թեև Հայաստանն ընդունել էր խալիֆաթի գերիշխանությունը, բայց դա կրել էր լոկ ձևական, անվանական բնույթ, ավելի շատ այդ եղել է նվաճման շրջան: Խալիֆաթի իսկական տիբապետության շրջանը Հայաստանում սկսվում է 700 թվից՝ Արդյա ոստիկանով:

III. ՀԱՅԱՍՏԱՆՆ ՕՄԱՅԱՆ ԴԻՆԱՍՏԻԱՅԻ օՐՈՒ (700—750)

Խալիֆարի վարած քաղաքականությունը Հայաստանում

Օմայան դինաստիան 7-րդ դարի վերջին, Հայաստանը վերջնականապես գրավելուց հետո, այլևս ուղղական հայ իշխաններին—բնիկ Փետրալներին չի վատահում երկրի իշխանությունը, և Հայաստանը սկսում է կառավարել կենտրոնից նշանակված արար կառավարիչներով, որոնք կոչվում էին ոստիկաններ:

Արաբական խալիֆաթի ոստիկանը նույն պաշտոնն էր:

վարում Հայաստանում, ինչ ո՛ը մաքզանը՝ Սասանյան տիրապետության ժամանակ՝ Ոստիկանի կենտրոնառեղին հանդիսանում էր Դվին քաղաքը: Ոստիկանը կենտրոնից իր հետ բերում էր զորք և շքախումբ: Հարկահավաք-պաշտոնյաները կոչվում էին եմիր: Դվինի ոստիկանի կառավարման և զինվորական իրավասության ներքո էին գտնվում Հայաստանը, Վրաստանը և Աղվանիքը՝ երմենիա (Ermeniata) անունով: Էրմենիան, որպես փոխարքայություն, արարական վարչական սիտեմով, բաժանվում էր չորս մասի՝ առաջինը կազմում էր Սյունիքը և Աղվանից երկիրը Պարտավ կենտրոնով, երկրորդը՝ Գուգարաց աշխարհը և Վրաստանը Յիղիս կենտրոնով, երրորդը՝ Հայաստանի կենտրոնական մասը (Ացրարատ նահանգը): Դվին կենտրոնով և չորրորդը՝ Հայաստանի հարավային մարզերը Հյուսիսային Միջագետքով, որի կենտրոնը Ամիդ (Դիարբեքիր) քաղաքն էր, Վերոհիշյալ մասերում նստում էին առանձին կառավարիչներ, որոնք ենթարկվում էին Դվինի ոստիկանին և գլխավոր հարկամատայանը ղանվում էր Դվինում: Սակայն եղել են գեպքեր, երբ նըանցից ոմանք դուրս են եկել Դվինի ոստիկանի ազգեցության տակից՝ կամ անկախացել են, կամ ել ենթարկվել են ուղիւ փոխարքայությունների:

Արարական իսլիֆաթը ինչպես մյուս հպատակ երկրներում, նույնպիս և ֆեոդալական Հայաստանում սկասած 700 թվից վարում էր հողերի գրավման, ետքային և երկրի ուղմական ուժերի ու նախարարների բնացեցման քաղաքականություն: Արարաներն իրենց ձեռքն էին վերցնում երկրի կառավարման զլխափոր վարչությունները. «Արեելքում կառավարությունը միշտ էլ ունեցել է միմիայն երեք վարչություն, — Փինանսական (կեղեքում երկրի ներսում), ուղմական (ներքին և արտաքին երկրների ավարառություն) և հասարակական աշխատանքների վարչություն (հողատարություն վերաբարերության մասին») (Մարգարետ և Էնգելս, «Նամակներ», Ա. հատոր, էջ 91—92, Երևան, 1936թ.):

Արարաները վերոհիշյալ վարչություններից իրենց ձեռքն էին վերցնում առաջին երկուսը, որոնք վերաբերվում էին երկրի կողոպտմանն ու կեղեքմանը, իսկ մյուս վարչությունը, ինչպիս նաև կը ունական ու կենցաղային գործերը, թողնում էին հայերի ձեռքը: Հետեաբար, արարաները երբեք հետամուտ չեն եղել

փոխելու Հայաստանի արտադրական հարաբերությունները: Խա-
մբաթը Հայաստանում սկզբից և եթ վարում էր հողերի բռնա-
գուման ու ռազմական ուժերի բնաջնջման և հարկացին քա-
ղաքականություն:

Սասանյան Պարսկաստանի իր եքսպանսիայի ընթացքում
իր ազդեցությունն ուժքաղաքականությունը Հայաստանում ամ-
րացնելու համար հնարավոր էր դոնում պահպանել նախարարա-
կան կարգը, նախարարների վաղեմի արտոնյալ իրսովունքները
և աշխատում էր հայ փեսկալներին կապել պարսկական արքու-
նիքի և ազնվականության հետ, այսինչ, արարները նախարար-
ներին հաշվի չեին առնում, քանի որ հոգատեր իշխանները վա-
խենալով, որ կարող են զրկվել իրենց հողերից ու հաջոտություն-
ներից, մեծ մասամբ թշնամանում էին արարների դեմ, այդ
պատճառով նախարարական տոհմերին ուղղակի ոչնչացնում էին
և զավթում նրանց հողերը: Հայ և արար պատճիչները հաղոր-
դում են նախարարների մասսայական կոտրածների մասին
արարական հրամանատարների և էմիրների ձեռքով, ինչպես նաև
նախարարական հողերը պրավելու և արարական գաղթական-
ներով բնակեցնելու մասին: Այսպիսով, սկսած Յըրդ դարի սկզբ-
քից, էրմենիայի շատ մասերում՝ Դվինում, Նախիջեանում, Սրձ-
նում, Բերկիում, Խաթթում, Կարինում (էրզրում), Մանագ-
երտում, Պարտավում և Իրկրի այլ խոշոր կենարոններում հաս-
տատվում են արարները, որոնք իրենց ձեռքն էին դցել մեծ
տարածությամբ իշխանական հողեր՝ գյուղերով և շինականնե-
րով: Հետագայում հիմնվում են նաև արարական գաղութներ:

Սակայն արարական խալիֆաթի եքսպանսիան չեր սահ-
մանափակվում միայն հողերի զավթումով, իշխաններին կոտ-
րելով, իրենց շահագործման տերիտորիան լայնացնելով միայն
այլ և այլ եքսպանսիան ձգում էր կուտակել նաև հարստու-
թյուն՝ զրամական հարկի, սենատայի միջոցավ, որի խթանը հան-
գիսանում էր Հայաստան ներխուժած առևտրա-գաշխառու-
ական կապիտալը և թե պարբերաբար կատարվող գիշատիչ թա-
շանները: Որպահական խալիֆաթի նվաճումը հիմնականում չեր
փոխում Հայաստանի առաջարական հղանակը: Թէ Արարիոն և
թէ Հայաստանը գտնվում էին միևնույն սոցիալական փոր-
մացիայում, բայց գտնվելով զարգացման ապրեհը աստիճան-

ների վրա: Տարբերությունը գլխավորապես առևտրավաշխատ-
ութական կազմակալի մեջ էր, որը բացակայում էր Հայաստա-
նում: Առևտրական կազմակալը մուտք էր գործել Հայաստան գրե-
թե արաբնավաճողների հետ միասին և տիրապետող բնատնախու-
թյան մեջ լայն չափով ճանապարհ էր հարթում դրամական շըբ-
ջանառության համար: Թեև դրամական շըջանառությունը Հա-
յաստանում գոյություն ուներ գեումս Սասանյան տիրապետու-
թյունից առաջ բայց դրամական ունտան մեծ դեք չէր կատա-
րում, կարող ենք ստեղ, որ դրամական ունտան փաստորեն Հա-
յաստան է մուտք գործել V-VI դարերում միայն: Իշխողը եղել
է արդյունավճար ունտան:

Արաբական տիրապետությունը Հայաստանում իր հետ բե-
րեց հատկապես դրամական ունտա, որը փողի պահանջ է առա-
ջացնում շահագործվող բնակչության մեջ, որը ստիպված էր մե-
տաղյա գրամանիշներ ձեռք բերելու համար իր արտադրանքի
արգասիքները հանել շուկա:

Խալիֆաթի վարած երկրորդ քաղաքականությունը, զա՞ հար-
կային գանձումներն էին: Արաբները Հայաստանից հարկերը
հիմնականում գանձում էին դրամով և մասամբ էլ նատուրայով:
Գանձված հարկը երկու տեսակ էր՝ գլխահարկ «Մուկազումէ»,
գանձված հարկի մեծ մասը, և հողային հարկ-«վազիֆէ»: Գլ-

խահարկը գանձում էին աշխատով ձեռքերից—տղամարդկանցից,
իսկ հողահարկը գանձում էին միայն հող ունեցողներից: Բառ
արար պատմիչ Արու Յուսուփ «Հողային հարկի գիրք»
(Քիթար ել խարաջը) աշխատության, գլխահարկը՝ նույնպես
գանձվել է ըստ անցվածքի և բաժանվել է երեք կատեգորիա-
մի՝ 1. հարուստ՝ 48 դիրհեմ, 2. միջակ՝ 24 դիրհեմ, 3. աղքատ՝
12 դիրհեմ: Բայց Յակուրիի գրքի, գլխահարկը գանձելու ժամա-
նակ հարկատուի ծոծրակին կնիք պետք է խփվեր: Նույն բանը
հաստատում է նաև Ղեռնդ պատմագիրը:

Հողային հարկը գանձելու գեպքում արաբական խալիֆա-
թը սկզբնական շըջանում, ըստ Յակուրիի գրքի, սահմանել է
մի գարիր (14:5 քառակուսի մետր) որթատունկի տարածության
համար 10 դիրհեմ, մի գարիր արմավենու տարածություն համար
8 դիրհեմ, մի գարիր շաքարեղեգնի՝ 6 դիրհեմ, մի գարիր ցորենի
4 դիրհեմ և մի գարիր գարու տարածության համար՝ 2 դիրհեմ:

Հարկերի այս դումարն ավելի է շատանում 8-րդ դարի վերջին քառորդում: Խնչղիս երեսում է, հողահարկը նույնպես սահմանվել է ըստ բերքավության, ճշշտ տյապիս, ինչպես գլխահարկը: Մի դիրհեմը հավասար է մոտ 50 ոսկի կոտելիի: Բացի հողային հարկեց, Հայաստանից գանձում էին նուև անասնահարկ, գետերին հանքերի և ջրի օդագործման հարկեր: Գանձվում էր նաև առևտահարկ՝ բաժ և պահանջվում էր կոռ ու բեզառ:

Հարկերը դանձելու համար՝ Դիլինում կար արքունի հարկամատյան և մտայան վարող հաշվեառներ, որտեղ արձանագրվում էին երկրի բոլոր հարկատու օբեկտները և աշխատող ձեռքերը: Հարկերը կանոնավորելու համար հաճախ կատարում էին աշխարհ հագիր-հաշվեառում և հարկ հավաքում տարեկան երեք անգամ՝ գարնանը, ամռանը, աշնանը, յուրաքանչյուր անգամ սահմանված հարկի ^{1/3} մասը: Հարկահավաքների մի մասը բերում էին կենտրոնից:

702—703 թ.թ. հայութի 1 մեծ ապստամբությունը
Խալիֆարի ղետ

Օմայան գինաստիան վերահաստատելով իր տիրապետությունը Հայաստանում, 8-րդ դարի շեմքին արտա կերպով փոխում է իր քաղաքականությունն առաջին հերթին գեղեցիկանակարարարական տները, որովհետեւ նա իրեն ուժեց էր զգում նաև միջաղգային ասպարիզում: Նախկին սիրազանող քաղաքականությունը, հետագա ապստամբությունները կանխելու համար, փոխարինվում է խոշոր նախարարական տների ոչնչացման և Հայաստանի ուղղմական ուժերի ամայուցման քաղաքականությամբ:

Այդ գաֆան քաղաքականությանն անմիջապես ձեռնամությունում է լինում: Արգլա ոստիկանը, որին էր վերադարձից հետխիստ պատվեր էր ավել Մըրգան ղորավարը: Պատմիչների ասելով, ոստիկանը, «Այդ ժանդ, ժպիրհ և չարաբարոյ» մարդը նպատակ էր զրել իր առաջ՝ ջախջախել հայերի զիմաղբական ուժերը և փորձում էր «Հայոց աշխարհից վերացնել աղասախումբ տոհմը, նրանց հեծյալ զորավարների հետո», շուրջ Մըրգլան սկսում է ձերբակալել համասկոս ուղարկել երկրի աչքի

ընկնող իշխաններին, բանտարկելէ տալիս շատ աղատների ու ցրում իշխանների զորքերը և գրավում նրանց՝ կալվածները, ավարի տալիս ունեցվածքը: Արդյա ոստիկանը միաժամանակ սկսում է կրոնական-հալածանք, Դավիթ Դիվինեցուն մահմեղական կրոն չընդուանելու համար սպանել է տալիս խաչի վրա: Այս փաստը և նման շատ ու շատ վկայություններ հերքում են այս տեսակետը, որ իբրև թե արարները կրոնական հալածանքի չեն հնաթարկել քնակչությանը: Սակայն վերսիւշալ հալածանքներով չի վերջանում ոստիկանի սկսած դաժան քաղաքականությունը: Նա խստացնում է հարկերի հավաքումը և ապօրինի գնանձումները, որոնց հետևանքով երկիրը կողոպտվում է և կանգնում աղքատացման շնմքին: Այսպիսով, սկսվում է արարական խալիֆաթի ծանր քաղաքականությունը Հայաստանում, որի դեմ իր գենքը պիտի բանձրագներ ժողովուրդը:

Արդյա ոստիկանի այլ ազօրինի և անիրավացի գործողաւթյունների գեմ բողոքում են հայկական զորադինդի հրամանատար՝ Սմբատ Բագրատունի Բյուրատյանը և Սահակ կաթողիկոսը: Բայց ոստիկանը, հենված իր ուղմական ուժի վրա, որն ուներ 10.000-ից ոչ պակաս զորք, 702 թվին ձերբակալում է նրանց և շղթայակապաքսորում է Դամասկոս, որպեսզի ինքնաղատ գործի Հայաստանում: Սահակ կաթողիկոսը, որին վիճակված էր իր կաթողիկոսությունը անցկացնել երկրի տաղնապամ շրջանում, շղթայակապ հասնում է Դամասկոս և պահպառ է այնուղի որպես պատանդ, իսկ Սմբատն աքսորի ճանապարհից մի կերպ աղապատում է կապանքներից, փախչում, վերադառնում է Հայաստան ու Ռշտունյաց և Մոկաց գավառներում կազմակերպում է աղստամքություն՝ արարական դաժան լուծը թութափելու համար:

Սմբատը, որն աքսորի ճանապարհին ազգավելով շղթաներից վերադարձել էր Հայաստան, սկզբում հաստատվում է վանա լճի հարավային արջաններում, հատկապես Մոկաց և Թշունյաց գագառների լեռնացին մասերում և միաժամանակ նախադարաստում է ապստամբությունը: Նա աստիճանաբար արարների գեմ է դուրս բերում այդ դավառների լեռնականներին և հետո էլ ոտքի է հանում ողջ բնակչությանը: Մի քանի ամսվա ընթացքում իր շուրջն է համախմբում շատ իշխանների

և 2.000 հոգուց ավելի կովող ուժը՝ Արդարության հայերի մտադրությունն իմանալով, փորձում է խորամանկությամբ Ամբարին և հայ իշխաններին իր մոտ կանչել և դաժան դատաստան տեսնելը բոլորի հետ Բայց Սմբատը, որը գիտեր ոստիկանի խարդախությունները, ոչ միայն չգնաց, այլ և իշխաններին թույլ չտվեց գնալու Միաժամանակ արագ թափով նախապատրաստվեց արարների գեմ կովելու:

Ոստիկանը ըմբոստ հայերին և նրանց զորքին ջարդելու համար մի զունդ է ուղարկում: Ապստամբ հայերը Սմբատ Բագրատանու գլխավորությամբ Ռշտունյաց գավառի Գուելանք գյուղի մոտ կովի հն դուրս գալիս արաբական դնդի գեմ և լուրջ ջարդ առաջին նրան Այդ գնդից 280 արար ազատվելով ապաստան են գտնում Գուելանքի եկեղեցում, բայց հայերն անմիջապես պաշարում են և սպառնում այրել: Արարների ղեկավարներից մեկը, տեսնելով որ ելք չկա, դուրս է գալիս եկեղեցուց և զիմում է հայերին հաշտության առաջարկով: Սմբատը մերժում է Բանակցություն վարողը խնդրում է իրեն խնայել որպեսզի ինքը համոզի բոլոր արաբներին անձնատուր լինել: Ապստամբների այնուհետև եկեղեցուց դուրս եկող բոլոր արարներին սրախողով են անում, իսկ բանակցություն վարողին էլ զցում են Վահաճովը: Այսպիսով, արարների հայերի ապստամբությունը ճնշելու առաջին փորձը մատնվում է անհաջողության: Հայերը բարձրացնում են անկախության դրաշը:

Գուելանքի հաղթանակից հետո, Սմբատի մոտ հավաքվում են նոր իշխաններ իրենց զորքերով և որոշում են շարժվել զերպ Հայաստանի միջնաշխարհ՝ Դպին քաղաքը և այնտեղից դուրսքանը Սրբաւ ոստիկանին: Սմբատ՝ Բագրատունու հետ էլ նաև Թիոդորոս Ռշտունյան որդի՝ Վարդը, որն իր հոր նման քայլշխան էր և Սմբատի ականք օգնականը:

702 թվի վերջներին Սմբատն իր զորքով ու իշխաններով վասպուրականի վրայով շարժվում է ղեղի հյուսիս և մտնում է Այրարատյան դաշտը: Բայց Սրբաւն, որը գտնվում էր Նախիջևանում, արարական 5000 հեծելազորի գլուխն անցած (ըստ Վարդան պատմիչի 8000 հոգի), դուրս է գալիս ապստամբ հայերի ղեմ: Սմբատը թշնամու հզորությունը տեսնելով, բարձրանում է Մասիսի առորոտում գտնվող Ակոռի գյուղի մոտ եղած

Վարդանակերա ավանը և գեսալանի միջոցով հաշտության բառակցություններ է սկսում Արդլա ոստիկանի հետ՝ գործը հաշտությամբ վերջացնելու համար։ Հայերը գեսալանի միջոցով ոստիկունիքները, որ իրենք իրենց երկիրը, ընակությունները, այդիներն ու անդաստանները թողնում են արարաներին, միայն թե նրանք թույլ տան իրենց ապահով կերպով հոռանալ Հայաստանից և գնալ բյուզանդական ուահմանը։ Հայերի նպատակն էր խարել Արդլային, մի առժամանակ հոռանալ Հայաստանից, գնալ Տայք նահանգի սահմանակից բյուզանդական վրձանները, ավելացնել զորքի թիվը՝ և հարմար ժամանակ հարձակվել արարաների վրա և գուրս քշել նրանց Հայաստանից։

Արդլա ոստիկանը մերժում է հայերի պահանջը և պատրաստվում է հարձակվել նրանց վրա։ Սմբատ Բագրատունին անմիջապես իր զորքը տեղափորում է Վարդանակերտ ավանում, գյուղի փողոցներում կառուցում են բարիկադներ, զիրքեր են գրավում, թույլ չտալով թշնամուն զիշերը մտնել զյուղ։

Հաջորդ առավոտ՝ 703 թվի հունվարյան օրերից մեկը, հայերը դուրս եկան ալսաերազմելու արարաների գեմ։ Նրանք կովկին արիությամբ ու հերսությամբ և ջարդեցին թշնամու զերազանց ուժերը, և «ատակէին ի սուր սուսերին»։ Զարդվող արարական բանակը մեծամեծ զոհեր տալով փախչում է Վարդանակերտից, հայերի ձեռքը թողնելով մեծ քանակությամբ սազմավազ ու զիրքներ։ Հունվարյան ցրտաշունչ ձմռանը, արարական զորքը զիշերը գուրս մնալով սառել էր և կորցրել իր մարտունակությունը, զրա համար էլ հաջորդ առավոտ ի վիճակի չեն լինում լավ կովկու, և մեծ զոհեր տալով փախչում են։ Արարական զորքի որոշ մասը սառած Արաքս գետի վրայով անցնելիս սառուցը կուրպիւմ է, և զինվորներից շատերը ընկըզմվելով գետում, խեղդվում են։ Եահանջող արարական զորքերից 300 հոգի ապաստան են գտնում Վահան ետմարականի գուսատը Շուշանի ապարանքում։ Տիկին Շուշանը միջնորդություն է հարուցում Սմբատ Բագրատունու առաջ և փրկում է 300 արարաներին կոտորածից։ Արդլա ոստիկանը իր ջարդված բանակով փախչում է Դամասկոս, խալիքի մոտ։

Եյդ նույն ժամանակ Ներսես կամսարական իշխանն իր զոհական նախարարների ու ազատների հետ միասին Վանանդ-

գալվառում ջարդում և երկրից դուրս է քշում արաբական մի ուրիշ զորագնդի: Դրանով արաբական բոլոր գնդերը, որոնք գտնվում էին Հայաստանում, ջարդում ու դուրս են քշվում Հայաստանից:

Վարդանակերտի ճակատամարտը շատ ծանր նստեց արաբների վրա, նրանք գրեթե կորցրին իրենց զորքի կեսը: Վարդանակերտի ճակատամարտը դառն գույներով են նկարագրել արար և հայ պատմագիրները մինչև 10-րդ դարը, արաբները նույնիսկ չեն ուղեցիլ, որ իրենց հիշեցնեն այդ ճակատամարտի մասին:

Վարդանակերտի հաղթական կովի ավարից, Սմբատ Բագրատունին և իշխանները, բաժին են ուղարկում բյուզանդական Ապսիմոր կայսրին: Իսկ գրա դիմաց, կայսրը, որպես փոխհատուցում, Սմբատին տալիս է կյուրապաղատի տիտղոս, արաբական ընտիր հածույգներ և թանկագին նվերներ:

Այդ հաղթանակից և Բյուզանդիայի օդնությունից ովեարգելով, հայերը միծ հույսեր ունեին: որ կարող են թոթափել արաբական ծանր լուծը: Սակայն, չնայած դրան, Սմբատը կասկածելով արաբներից, զնում և ամբանում է Տայք նահանգում, կինտրան ընտրելով թուղարք ամրոցը և այնտեղից կարգադրություններ է անում ու կառավարում երկիրը, ինչզես նաև ոտզմական պատրաստություններ է տեսնում արաբների: Կոր հարձակումներին զիմագրելու համար:

703 թվի դարնանը, հայերի ապատամբությունը ճնշելու, ըմբուաներին կոտորելու, երկիրը կողովուելու, եկեղեցիներն ու վանքերը թալանելու համար, Աբրուլ-Մելիք խանի վը կազմակերպում ու պատրաստում է մի բանակ ու Մահմեդին-Ռիզա զորագարի զլիավորությամբ ուղարկում է գետի Հայաստան: Դրանով հայերի գրությունը ծանրանում է: Նրանք փաստորեն ահի և երկյուղի միջ էին: միայն որոշ հույսեր կապիլ էին բյուզանդական կայսրության հետ Բայց Բյուզանդիայի զրությանը նույնպես ծանր էր, նա ինքն էր հայերից օգնություն խնդրում և աչ թե օդնում նրանց: Այս բոլորը ստիպում են հայերին արաբների հետ հաշտվելու ուղին բռնել և փրկել իրենց երկիրն ու կյանքը թեկուղ միծ զիջումների գնով: Այս նպատակի համար Սմբատ Բագրատունին դեսպան է ուղարկում Դամասկոս՝ Սահակ կաթո-

զիկոսի մոտ, և նրա միջոցով բանակցություններ է վարում խալիքութիւններ: Դա ցույց է տալիս, որ կաթողիկոսի դերը մեծ էր: Նա իրավունք ուներ երկրի անունից բանակցությունների մեջ մտնել օտարերկրյա պետությունների հետ: Սահակ կաթողիկոսն արդեն մի տարուց ավելի գտնվում էր Դամասկոսում, որպես պատանդ և իր հակաբյուզանդական քաղաքականություն վաշնու համար վայելում էր խալիքի համակրանքը: Սահակ կաթողիկոսի հականունական գործելակերպին ու նրա արժանիքներին մոտիկից ծանոթ էր նաև Մրգան գորավարը Հայաստանում և լած ժամանակ: Հետեւարար կաթողիկոսի դիրքն ու հեղինակությունը մեծ էր խալիքաթիւարքունիքում:

Սահակ կաթողիկոսն իր այդ դիրքն ու հեղինակությունն ուղարկութելով, Հայաստանի և հայ իշխանների անունից բանակցությունն էր է սկսում Արդուլ Մելիք խալիքի հետ և վերջացնում է գրական արդյունքով: Խալիքը զիջում է հայերին ու Վրեժինդիք Ջիլինում, նա ազատում է կաթողիկոսին իր պատանդությունից, տալով նրան ներման գրություն, և ուղարկում է Հայաստան Ոկրայի հետեւյց: Վերջինս, որ իր մեծ բանակով արշավում էր գեալի Հայաստան, տեղեկանալով Սահակի և Արդուլ Մելիքի բանակցությունների արդյունքի մասին, իր հաղթարշավ բանակի ընթացքը զանգազեցնում է և ետ և դառնում կաթողիկոսի հետ անսակցիությունը համար գետես Հայաստան չհասած և հայերի հետ կավի չըռնված: Ոկրա զորավարին արդեն հայտնի էր խալիքի այն ցուցումը, որ Հայաստանը զրավելիս խռուսիել անտեղի արյունահեղությունից:

Սահակ կաթողիկոսը թեև աքսորի մեջ տանջված, տկարացած, ծերացած և հիվանդացած, բայց և այնպիս հանձն է առանում շտապ մեկնել Հայաստան և կանխել Ոկրայի աշխարհական պեր արշավանքը: Սակայն ճանապարհին զգալով, որ մահը մոտ էր ամենի ջաղաքն արարերեն լիդվով նամակ է զրում Ոկրայի վրա և լուքը 703 թիւ ամառը Միջագետքի Խոտան քաղաքում վախճանվում է, ոբանեղ նրա մահվան հաջորդ օրը հասնում է Ոկրա զորավարը և տիրում է նրա մահվան պատճառով: Սահակ կաթողիկոսն իր նամակով հայտնում էր Ոկրա զորավարին իր և խալիքի միջև անդի ունեցած բանակցությունների արդյունքի մասին և միաժամանակ խնդրում էր նրանից, որ զիջումներ

անի և իր ժողովրդին չկոտորի, երեխը չավերի, իսկ իր ցանկությունը չկատարելու դեպքում՝ անհճում է։ Առաջակ կաթողիկոսի հետ եղած հոգևորականներն ու իշխանները մեռած կաթողիկոսի անունից նույնակես խնդրում են և Ոկրան ստիլված է լինում զիջել և հրամայում է իր զորքին, որ դադարեցնեն իրենց արշավանքը զեպի Հայոց երկիրը։ Ապա հայտնում է հայ իշխաններին, որ մասացության տան երկու երկու երկրների միջն եղած թշնամությունը, իսկ ինքը մոռանում է Վարդանակերտի ճակատամարտը և արարների կոտորածը։ Այսուհետեւ հրամայում է բոլորին անխոտիր վերադառնալ իրենց տեղերը և ապահով կերպով աշխատել ապրել ու հարկ վճարել տերությանը։ Միաժամանակ վերականգնում է իշխանների իրավունքները, Դրանով էլ վերջանում է հայ-արաբական կոնֆլիկտը և հայերի Տագատագրական մեծ ապստամբությունը և ամբողջական կոնֆլիկտը դեմ։ Այսուհետեւ Ոկրայի օգնությամբ Սահակ կաթողիկոսի գիտել բերում են Հայաստան ու թաղում Դվինում։ Ոկրան իր բանակի մերժասով մնում է Հայաստանում, որպես ոստիկան (703—708 թ.թ.) և հինգ տարի կառավարում է Հայաստանը։

Բյուզանդա-արաբական նոր մրցումը Հայաստանի շուրջը և հայ իշխանների ու նրանց զորքերի կոտորածը նախիջևանում

Ուշաւ ոստիկանը երեք տարի (703—706) խաղաղ կառավարում է Հայաստանը և երբեք չեն հիշեցնում Վարդանակերտի ճակատամարտը, իսկ հայերն էլ նոր շարժումներ հանդես չեն բերում արաբների գեմ և չեն թեքվում զեպի Բյուզանդիան, 705 թվին Արգուլ-Մելիքին հաջորդում է նրա որդի Վալիտ կամ Վլիթ խալիքը (705—715), որը հորից պակաս ուղամասեր չեր, իսկ Բյուզանդիայում կը կին անգամ կայսը է դառնում քիթը կտրած և խազարների մոտ աքսորված ոչ պակաս ուղամասեր Հուստինիանոս Ալբը։ Սա նորից ուշազրություն է զարձնում Հայաստանի վրա և պատրաստվում է կորիզներ մզել արաբների գեմ և ետք զրավել Հայաստանը նրանցից։ Իսկ Վլիթ խալիքը, որ մի կողմից իր զորքերը հասցիել էր մինչև Սպանիա, իսկ մյուս կողմից մինչև Հնդկաստան, Բուխարա և Կաշգար, որպեսզի հայերը չօգնագործվեն Բյուզանդիայի կողմից, Ոկրան ոստիկանին

հրամայում է Հայաստանից վերացնել հայ նախաբարեներին իրենց Պոբքերի հետ միասին։ Սմբատ Բագրատունին հաշվի առնելով արաբների նոր խստություններն ու ճնշումնեցք իր զորքով և իշխանների մեծ մասով ունցնում է հույնների կողմը, հույսունենալով վերջինների օդնությամբ ձեռք բերել կոբցրած անկախությունը։

Բայց այս անգամ էլ հայերի բախտը չժպագ, բյուզանդական զորքը, որ հաջողաբար զարգաց էր Կորինը և հաղթականութիւնը շարժվում էր զեղի երկրի խորքը, 706 թվին վահանդ դափառի Դրաշովիրա վյաւղի մուտքի ուսնեցած պլիասվոր ճակատամարտում պարտվեց արաբներից և ետ շարրավեց։ Օկրան հույններին ջարդելով, հալածելով գուրս է քշում Հայաստանից և զրավում կարին քաղաքը, իսկ Սմբատ Բագրատունու զըռությունը ծանրանում է։ Նա որ վերոհիշյալ քաղաքական պայմաններում իր ճակատարությունը չկարողացավ պահպանել, կայսրի ցուցմունքով մի քանի իշխանների հնատ իր զորքով հեռացավ Հայաստանից և ընակության հաստատեց Փոթի քաղաքում։ Սև ծովի ավիքն։

Թէրա ոստիկանը հույններին Հայաստանից զուրս քշելուց հետո սկսում է հալածել նաև հայերին, այն էլ ամենազաժան կերպով։ Նրա հրամանով Նախիջևանի Քամմ (Կաշմ) կառավարիչը հրավիր է ուղարկում երկրի զիխավոր իշխաններին ու ազատներին, որ իրենց հեծեխառքով ներկայանան իրեն, իրենց ոսքին ստանալու համար, զբանով ասել ուղելով, որ իսլիմի չարությամբ չի տրամադրված զեղի հայերը։ Նա ուղում էր հայլական գորքին օգտագործել նոր կոփնների ժամանակ։

Քամմի հրավերով, չնայած Փոթիից՝ Սմբատի նախազգուշացումներին, սրոշ իշխաններ իրենց զորքերով ներկայանանում են Նախիջևան, Քամմին։ Սա խորածաննկությամբ սկզբում խարում է իշխաններին, զինաթոփ անում, ապա երգում տալու պատրժվակով բոլորին լցնում է Նախիջևանի և Խրտմի եկեղեցիները։ Դոներն ու բաստուաները մտկել տալով կրակի է տակիս և այրում։ Պատմագիրներն այս եղեցական ակաց նմանեցնում են Քարելունի հնոցը նետած երեք մանուկների այրման գետքին։ Նախիջևանի և Խրտմի եկեղեցիներում այրված իշխանների ու Պորքերի թիվը հազարից ավելի է եղել։ Այդ զեպքը կատարվել

է 707 թվին։ Դրանով որոշ չտիրով արաբները լուծում են վարպանակերտի վրեժը։

Նախիջևանի և Խրամի կոտորածից հետո, արաբները գերի երենց վրեժը հաղեցած չհամարելով, սկսում են ասպատակել երկիրը։ Նրանք իշխաններին ձերբակալելով բանարկում, զիսափորներին նեղություններ ու խոշտանգումներ տալիս, փրկարնք պահանջում։ Այդ ճանապարհով իշխանների ունեցվածքը հափշտակում էին, սակայն, պատմիչների ասելով, իշխաններն իրենց ունեցվածքը տալով, դարձյալ չէին ազատվում խոշտանգումներից։ Դրանից հետո արաբներն սկսում են նաև կրոնական հալածանքներ։ Նրանք իշխաններից պահանջում էին կրոնակով լինել Այդ հողի վրա Սմբատ Բագրատունուն, Գրիգոր և Կորյուն Արծրունիներին, Վարազգապուհ Ամատունուն և նրա եղբայրներին ու բազմաթիվ այլ նախարարների գլխատեցին։ Այսպիսվել, լուրջ հարված հասցեին իշխաններին ու նրանց ուղղմական ուժին, իսկ հալածանքներից զերծ մնացած իշխանները կամ դուրս էին փախել երկրից, կամ կուչ էին եկել անառիկ բերդերում և ամրոցներում։ Սմբատ Բագրատունին մեկ անգամ փորձ արեց մտնել Հայաստան, բայց հարված ստանալով ետ քաշվեց։

Արաբները Հայաստանի ղեկավար մասին—նախարարներին ջարդելուց հետո, սկսում են ավելի ազատ զործել երկրում։ «Այն ժամանակ, ասում է Ղեղոնդ պատմագիւղը, թափուր եր մնացել Հայոց աշխարհը նախարարական տօնմերից, ինչպես ոչխարաները պայմերի մեջ»։ Արաբները դրանից ավելի են քաջալերվում և մկսում են ավերել ու ավարել զերել ու զերավարել կողոպտել ու անապատ դարձնել երբեմնի շեն ու հարուստ Հայաստանը։ Արաբական հրոսակեները Դվինում էին հավաքել երկրի կողոպտած ավարն ու զերիները և այնտեղից ոստիկանի մեջսով 707 թվին ուղարկում են Դամասկոս։ Աքսոր են ուղարկում նաև Շուշան կամ սաբականին, որն ազտել էր 300 արաբների կյանքը, և նրան Հաբելարանքներով սպանում են Խառան քաղաքի բանառմ։

Դվին քաղաքի բնակչությունը նույնական խիստ նեղվում էր արաբներից։ Փոթիի Սմբատ Բագրատունու խրախուսանքներով դվինցիները և երկրի մյուս մասերի բնակչությունն ապստամբության փորձեր են անում։ Խալիֆաթը հաշվի առնելով, որ հայերը Բյուզանդիայի և Փոթիի Սմբատ Բագրատունու միջոցով կարող են

առաջ բերել նոր ապստամբություն, նոմանավաճող, որ ըյուղանագական Ֆիլիպ կայսրը Վրաստանից և Աղվանից աշխարհից վտանգ էր սպառնում խալիքաթին, այդ պրությունը կանխելու համար 708 թվին Օկրոս ոստիկանին ետ է կանչում Հայաստանից և նրա փոխարեն Երմենիայի ոստիկան է նշանակում 80-ամյա Արդուլ-Ազիզին, որը 640 թվին՝ 12 տարեկան հաստելում գտնվում էր Դվինում և օդնեց արարներին քաղաքը զրավելու ժամանակ:

Պատմիչների ասելով Արդուլ-Ազիզն աշխարհաշն ոստիկան էր: Նա Վլիթ Մալիքի հրամանով մեղմացնում է արարների վարած խիստ քաղաքականությունը Հայաստանում: Դավարեցվում են հալածանքները, վերջ է տրվում երկրի կողոպտմանը, թիթեացվում են հարկերը, և 712 թվին աղատ են աբձակում բոլոր բանտարկյաներին ու աքսորյաներին: Արդուլ-Ազիզն իրենց պաշտոններում ու կալվածներում վերահաստատում է ոչ միայն Դամասկոս և Սրբարիա տքորոված ու բանտարկված իշխաններին, այլ և հունական տնրիտարիա փախած ու բերգերում ամրացած նախարարներին: 712 թվին իր կողմնակիցներով և զորքով Փոթից Հայաստան է վերադառնում Սմբատ Բագրատունին և վերականգնում իր պաշտոնում:

Արդուլ-Ազիզ ոստիկանը, որը երկար ժամանակ կառավարեց Հայաստանը (708—724), վերաշինում է Քասմի կողմից ավերած ու քանդած Դին քաղաքը, շինում ու ամրացնում է պարիսպներն ու զարպաները, ջրի խրամատները, և քաղաքն ավելի ընդարձակվում է և համեմտատական չափով սկսվում է երկրի խաղաղ շինարարական աշխատանքի շրջանը:

Հայաստանի դրույթումը 720—730 թվականներին

Արդուլ-Ազիզ ոստիկանի ժամանակ որոշ չափով կայունանում է Հայաստանի քաղաքական զրությունը: Սմբատ Բյուռատյանի 20-ամյա երերուն և հեղինեղուկ սպարապետության շրջանն անցավ շատ ծանր նա մերթ թեքվում էր տրաբների և մերթ հույների կողմը, բայց վերջին անգամ Հայաստան վերադառնակով, նա նորից իր շուրջն է համախմբում հայ իշխաններին և լծում ավերակ երկրի շինարարական աշխատանքներին: Սմբատին հաջորդում է Վասակի որդի Սշոտ Բագրատունին, որը

տաղանդավոր գիվանագետ էր և, հակառակ Սմբատին, միշտ վարեց տրաբական քաղաքականություն և ՅՅ տարի մասց իր պաշտոնում։ Սրա և Արդուլ-Ազիզ ոստիկանի ժամանակ լայն գործունեություն ծավալեց Հովհան Օձնեցի կաթողիկոսը (717—728)։ որն ընթացավ Սահակ Զորափորեցի կաթողիկոսի ուղիով, վարեց հակառական քաղաքականություն և բանեց խալիքաթի հետ հաշտ քաղաքականություն վարելու ուղին։

Հայաստանի ներքին գործերը կարգավորելու, Արարիայում դեմք աջարում՝ եղած հայ իշխանություն աղատ արձակելու հայ եկեղեցու ու քրիստոնյաների խնդիրները լուծելու համար 719 թվին նա մեկնում է Դամասկոս, Օմար խալիֆի մոտ, և երկար բանակցություններից հետո խալիֆի հետ կնքում է հետեւյա համաձայնությունը՝ 1) քրիստոնյաներին ստիպողական կերպով կրոնափոխ չանելը, 2) հոգեորականները, վաճառքերը և եկեղեցերին աղատ պետք է վիճեն տերությանը հարկ վճարելուց, 3) քրիստոնյաները, որտեղ էլ որ զանվելիս վիճեն, պետք է աղատ պաշտե իրենց կրոնը և 4) Արարիայում աքսորված ու բանտարկված բոլոր հայերը պետք է աղատվեն ու վերագառնան հայաստան և մի աժամանակ պետք է վերականգնվեն նրանց տոհմական ու կալվա ծային իրավունքները, Խալիֆաթը վերոհիշյալ զիջումները կատարում էր հետեւյալ նպատակներով՝ 1) որպեսզի հայերին սիրաշա հի ու զբավի իր կողմը և թույլ չտա, որ Բյուզանդիան օկտոպ գործի նրանց ուղարկան ուժը, 2) Հայաստանից հալածի աղանդավորներին, հատկապես պավլիկյաններին, 3) վերջ առ Հայաստանում գոյություն ունեցող Բյուզանդական ազգեցությանը թուլացած խալիֆաթի քաղաքականությունն ամբողջությանը տեղ և հայերին մշտապես կապի արարական տերության հետ 5) հալածի Հայաստանում եղած քաղկեդոնականներին։

Ինչպես երեսում է վերոհիշյալ համաձայնությունից, Հովհան կաթողիկոսի գործերը Դամասկոսում ունեցել են երկու քնույթ՝ 1) քաղաքական, որը նշանակում է խղել հարաբերությունները հույներից և կապվել արարական հետ և, խկապիս, Օձնեցու ժամանակ հույները մաքրվեցին Հայաստանից և 2) կրոնական, որը նշանակում է քրիստոնեական կրոնի աղատ պաշտամունքը, քաղաքական գալանանքի և աղանդների հալածումն ու դուր

Քշումը Հայոստանից, որոնք տեղ էին գտել երկրում կայսրության ազգեցության հնատեանքով:

Բյուզանդական կայսրը՝ Աննա Խավրացին, մի քանի անգամ զգուշացրեց Օձնեցուն, որ հեռու մնա արաբներից, բայց նրա զգուշացումներն անցան ապարդյուն: Կաթողիկոսը հաջվի չառավի կայսրի խորհուրդներն ու պահանջները, որովհետեւ նա լավ գիտեր խորամանկ կայսրների խարդախ քաղաքականությունը: Հովհան Օձնեցին իր բացառիկ գերը Դամասկոսում հաջող աշխարհելոց հետո, խալիֆից մեծամեծ նվերներ ստանալով վերադարձակ Հայաստան և 720 թվին Դիլինում հրավիրեց եկեղեցական ժողով, ուր քննության առնվեցին մի շարք խնդիրներ, մշակեցին եկեղեցական կանոններ, որոնցից կազմվեց կանոնագիրը: Ժողովը քննության առավ պավլիկյան ազանդի հարցը, զատապարտեց աղանդավորներին և միաժամանակ նզովեց նրանց հետ կապ հաստատողներին: Թաղքեղոնական գավանանշին նույնական հականարդած ավեցին և ամրապնդեցին հայ եկեղեցու գիրքերը նույնական սանձգությունը: Հովհան Օձնեցու ժամանակ է կազմվել Գիրք քրոնը: Ընդհանուր առամբ Օձնեցու կաթողիկոսությունը շատ արդյունավետ եղավ, և նրանից մեզ հասել է շատ զբական դորձեր:

Սրդուշ Ալիդ սատիկանի մեղմ քաղաքականությունը վերաշանում է 724 թվին: Նրան փոխարինող Ալիթ (Ալիփա) 724—729 թ. թ. և Մալիմ՝ 729—731 թ. թ. սատիկանները, ինչպես նաև Սահի զորավարը, որ պիտի կովեր խաղարճների զեմ, որոշ չափով խստացնում էն խալիֆաթի քաղաքականությունը: Խաղարճներն իրենց անվերջ արշավանքներով նույնպես մեծ վնաս են պատճառում Հայաստանին:

720-ական թվականներից սկսած Օմայան դինիաստիան ֆինանսական խիստ ճշնաժամ է ասլում: Գրանից գուրս գալու համար խալիֆները մի ձև գիտեին՝ ավելացնել հարկերը: Այդ նպատակով 725 թվին խալիֆաթի ներսում կատարվում է աշխարհագիր: Հայաստան է գալիս Հերթը, որը նույնական կատարում է աշխարհագիրը և ըստ նոր օրենքի մինչև այդ եղած ծխահարկը փոխվում է գլխահարկի և դրա հիման վրա էլ ավելանում են հարկերը, որոնք նորից բացասարար են ազգում երկրի անտեսական կյանքի և բնակչության նյութական դրության վրա:

Այս հանգամանքը ժողովրդի մեջ եղած գժղոհություններն առ վելի է ուժեղացնում:

Հիշամ խալիֆը (724—743) անմիջապես փորձեր է անում զբա առաջն առնելու, որովհետեւ խալիֆաթի ղըռությունը շատ ծանր էր: Նա 731 թվին Հայաստանից ետ է կանչում թե Մոլլմ ոստիկանին և թե Սահիդ զորավարին՝ որպես իրենց չարգարացնողների և նրանց վոխարեն 731 թվին Հայաստանի ոստիկան ու զորավար է նշանակում խալիֆայական գահի թեկնածու Մահմեդի Բին-Մրվանին, որը 8-րդ դարի սկզբին Հայաստանում էր և վարում էր խիստ քաղաքականություն: Նա անմիջապես Բազրապոնի Աշոտ Վասակյանին վերահստառում է իր պաշտոնում (731), որպես իշխանաց իշխան և Հայաստանի հնձելազորի հրամանատար-սպարապետ: Մրվանը զործադրեց բոլոր մի՛ ջցները՝ Աշոտի զիրքը երկրում բարձրացնելու և նրան օգտագործելու հռամար:

Մամիկոնյան տոհմից Գրիգոր և Դավիթ Մամիկոնյանները, ինչպես նաև Ամքատ Բյուրատյանի որդիները չեն ենթարկվում Մրվանին ու նրա կարգադրություններին, կարծելով, որ նորից խիստ քաղաքականաթյուն է վարելու նրանք նույնիսկ փորձեր են, արել Աշոտից խնդիր առաջնությունը: Այդ պատճառով 732 թվին Գրիգոր և Դավիթ Մամիկոնյանները Մրվանի կողմից ձերբակալվում և ուղարկվում են Դամասկոս՝ խալիֆին, իսկ Հիշամ խալիֆն էլ նրանց աքսորում է իմա անտուտը (Ասութիքի սահմանների մոտ) ցմահ:

Մրվան սատիկանն այս անգամ Հայաստանի նկատմամբ վարում էր մեղմ քաղաքականություն, որը բխում էր խալիֆաթի ներքին դրությունից: Օմայան զինասահայքը զեմ ծագել էին ներքին լուրջ խոռվություններ, որոնք սալառնում էին վերացնել զինաստիան: Նվազ վտանգ չէին ներկայացնում նաև բյուզանդական կայսրության զրդումով Հյուսիսային Կովկասում և Հարավային Ռուսաստանում ապրող խաղաքների արշավանքը: Ները գեպի խալիֆաթի անզրկովկասյան տիրապետությունները Խաղաքների արշավանքների ծայրը հասել էր մինչև Հայաստանի Զարեվանդ զավառի հարավային մասերը և լուրջ զնաս էին պատճառել երկրին: Այս բալորի հետեւնքով խալիֆաթը ստիգմած է լինում թեթևացնել Հայաստանից դանձվող պետական:

հարկերն ու տուրքերը, վերջ տալ հայածանքներին և ուղաժական ուժերի ոչնչացմանը և օգտագործել հայերի ուղաժական ուժն իր ներքին և արտաքին թշնամիների դեմ: Ահա սրբանք են 731 թը-վից հետո Հայաստանում խապիֆաթի վարած մեղմ քաղաքա-կանության հիմնական պատճառները:

Մրգանն իր վարած մեղմ քաղաքականությամբ հասալի էր նպատակին: Նա կարողացավ օգտագործել հայկական ուղա-ժական ուժերը խապարների դեմ և մեծ հաջողություն ունիցավու Մրլան ոստիկանը՝ Աշոտ, սղարապետի հետ միասին սկզբում Հայաստանն ու Անդրկովկասյան երեսները մաքրեցին խաղար-ներից, ապա, չսպասելով նրանց նոր հարձակումներին, ինքն Ա-շոտի հետ հայ-արաբական զորագնդերով կանխում են խաղար-ներին և 732 թվին հարձակվում են նրանց երկրի վրա և ասպա-տակում այն, ապա զրավում նրանց մայրաքաղաքը և ստի-պում են խաղարներին կնքել պայմանագիր, մուծել ուղաժատու-գանք և այլևս չհարձակվել արաբական երեսների ու տերություն-ների վրա: Ապա մեծ ավարտի ու ուղմատուգանքավ հաղթակա-նորին վերադառնում են Դվին:

Խաղարների դեմ տարած հաղթանակներից հետո, Հայաս-տանի գերքը մեծանում է խալիֆաթի աշքին: Հայ հեծելազորը նորից ցույց տվեց իր սխրագործությունները և ստիպեց խա-լիֆին նոր զիջումներ կատարել: Իսկ Աշոտ սղարապետը Մրգան ոստիկանի խորհրդով 732 թվի աշնանը՝ մեկնում է Դամասկոս, խալիֆի հետ մի շարք զորձեր կարդավորելու: Դամասկոսում նրան ցույց են տալիս մեծ բնգունելություն: Հիշամ խալիֆը տալիս է հայ զորքերի երեք տարվա ոռոճիկը՝ 300,000 զահեկան զորքը, որը երեք տարուց ի վեր դադարեցվել էր, և այնուհե-տե զորքի սոճիկը, ամեն տարի, սիստեմատիկ կերպով պիտի ու-ղարկեին տարեկան 100,000 զահեկան զումարով: Ապա կարգա-վորվում է երկու երեսների միջև եղած մի շարք միճելի հարցե-րը, ամրապնդվում է հայ-արաբական հարաբերությունները:

Հիշամ խալիֆը պրանով փորձում է սիրաշանել հայերին, օգտագործել նրանց ուղաժական ուժը և մշտապես կապված պահել խալիֆաթի հետ: Աշոտը կարգավորելով բոլոր գործերը, մեծամեծ նվերներ ստանալով վերադառնում է Հայաստան: Այ-

Այսպիսով, Օմայանների փոքրը՝ բռնի և զաժան միջոցներով տկարացնել Հայաստանի ռազմական ուժը, մատնվում է անհաջողության: Հայ իշխանները խոշոր հարգված ու վասա կրելուց հետո, աշխատում են վերականգնել իրենց գիրքերը: Սակայն, չնայած դրան, Օմայանների տիրապետության շրջանում Հայաստանի տնտեսության կյանքի դարդացման համար ստեղծվում են աննպաստ պայմաններ: Հայաստանը կորցնում է իր տրանզիտային ճանապարհի նշանակությունը՝ միջաղղային տոկորի մեջ, նա զանում է արարական խալիֆաթի ռազմաստրատիկական գործությունը: Սասանյան շրջանի Հայաստանի դարդացմած քաղաքները ժամանակավորապես կորցնում են իրենց առեւրատիվան նշանակությունը և դանում արարական իշխանության դադարական, վարչական կենտրոններ կամ զարակալանում վահանական վարչություն է:

IV. ՊԱՎԼԻԿՅԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՏԱՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԱՊՈՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

Գյուղացիուրյան դրույթունը Օմայանների շրջանում

640 թվից սկսած, կաքձ ընդհատութիւններով, մինչև VIII դարի առաջին տասնամյակը Հայաստանը զանում է արարատյուղանդական պայքարի թատերաբնիւ: Աբարեների սկզբնական արշավանքները, որոնք կրում են ավտրատությունների բնույթ, խոշոր վնաս են հասցնում երկրի տնտեսական կյանքին: Սրբագրական հարձակութիւններին դիմագրող քաղաքները թալանվում, ճրկեղվում են, իսկ ազգաբնակչությունը կոտորվում և զերի եր տարփում: Ժամանակավորապես հողթանակող բյուզանդական բանակներից ես նվազ տառապանքներ չեր կրում ժողովուրդը: Պատերազմական այլ տարիներին քաղաքների տնտեսական կյանքը կանգ է առնում:

Պատերազմական այդ զործողություններն ու ներքին առըստամբությունները քայլքայման դուռն ին հասցնում գյուղացի-

ական տնտեսություններին Հայաստանի աշխատավոր մասսաներն իրենց հատուկ տոկանությամբ գիմադրում են այդ արհավիրքներին և վտանգն անցնելուց հետո կրկին լծվում շինարարական աշխատանքների խալ այդ ժամանուի ծանրանում է տիբապեառողի հարկացին լուծը: Օմայան գինատիան, որը VIII դարի առաջին քառորդում խոչոր արշավանքներ էր ձեռնարկել: Սրեմուտքում, կանգնած էր ֆինանսական ճզնաժամի առաջ: Խամփաթի հղատակ երկրներում, որոնց թվում և Հայաստանում 725 թ., պետական հարկերի գանձումը կարգավորելու և պետական եկամուտները ավելացնելու նպատակով, կատարվում է ընդհանուր տշխարհագիր—ունեցվածքի և աշխատող ձեռքերի հաշվեառումն ու արձանագրումն արքունի հարկամատայնում: Այդ նույն թվին Հայաստան է գալիս Հերթը և կատարում է աշխարհագիր և ցուցակագրում է հարկի ենթակա բոլոր բեկուները: Սյս ժամանակաշրջանից է, որ հարկատիւթյան սիստեմը հիմնական փոփոխության է հնթարկվում: Մինչեւ այդ, հարկատառ միավորը ծուխն էր, այժմ հարկատու միավորը դառնում է աշխատող ձեռքը: Ծխահարկերգահարկիը փոփոխում է զիսահարկի, այդ պատճառով հարկատու դյուզացիության դրությունը խիստ ծանրանում է, որովհետեւ հարկատու միավորների թիվն ավելանում է:

Խալիփաթը Հայաստանում, որուեղ քաղաքականապես ամբուղընդելու նպատակով սկզբնական ըլշանում վարում էր մեզմ քաղաքականություն, VIII դարի սկզբից, շուրջ մի տասնումյակը երկրի սաղմական ուժը ոչնչացնելու քաղաքականություն էր վարում:

Հայաստանի աշխարհիկ և հոգեօր գեղագուները 698—708 թ.թ. ծանր ճշնաժամ են՝ ապրում և տնտեսապես քայլություն ու սնանկանում են և բանամարդությունը աւղին:

Սշխատավոր մասսաների աղքատացումը օրում է դասակարգութիւն պայքարը Հայաստանում: Բայց զասակարգացին այդ պայքարն արտահայտվում է կրոնական շարժումների քողի տոկ:

Ճնշվող ու շահագութվող մասսաների ապստամբական շարժումները ստանում են պողիկյան կամ պավիկյան շարժում անունը:

Պավլիկյան աղանդավորական շարժումը լայնորեն տարածվել էր Փոքր Աստայում, հաւակապես Բյուզանդական կայորության տիրապետություններում։ Այդ աղանդը, որի արմատներն ուստումնասիրողները հնագույն շրջանի մանիքյան աղանդավորական շարժման հետ են կապում, իր անունն ստացել էր Պողոսից։ Ենթադրվում է, որ այդ շարժման առաջնորդի անունը եղել է Պողոս, կամ պարզապես օպտագործվել է Պողոս առաջալի անունը։

Մանիքյան աղանդավորական շարժման երեք հիմնական դրույթները կազմում են։

ա) ամբողջ տիեզերքը, ներառյալ նաև մարդը, բարի և չարի, կովի և պայքարի մի խառնակույտ գանգված է։

բ) նախապես այս այսպես չեր։

գ) եվ ոչ էլ այսպես պիտի մնա։

Արեւելքի աղանդավորական շարժումների սոցիոլոգիան ըստ վանդակությունը հասկանալու տեսակետից վերև բերված դրույթները խիստ կարենու են։

Մեզ զրեթե չեն հառել աղանդավորների կողմից իրենց քառած վարդապետության մասին ուղղութեավագությունները։ Հաւկառակորդների կողմից այդ վկայությունները ոչնչացվել են։ Հիմանը վելով նրանց հակառակորդների տված տեղեկությունների վրա, պավլիկյանները որոշ փոփոխություններով պահպանել են մասիքյան աղանդավորների վերև հիշված դրույթները։ Նրանք պաշտոնական եկեղեցու մեկնությունից բոլորովին՝ այլ մեկնություն են առվել քրիստոնեական վարդապետությանը։ Նրանք մերժել են նրա բոլոր պաշտամունքներն ու արտաքին արարողությունները։ Դատելով գործնական կյանքի մասին նրանց առաջադրած խնդիրներից, կարելի է նվազագներ որ նրանք բացառում էին մասնավոր սեփականությունը և պաշտպանում էին համայնական կարգերը։ Թշնամի բանակը շատ է խոսում նրանց «պոռնիկ կյանք» վարելու մասին, մի մեղադրանք, որ համարյա անիտաիր վերաբերվել է բոլոր աղանդավորներին։

Պավլիկյաններն իրենց ծրագիրն իրականացնելու համար առաջադրում են՝ զինվել և բռնի միջոցներով տապալել գոյությունը

թյուն ունեցող կարգերը: Հայաստանում պավլիկյան աղանդավորական շաքժումները մեծ չափերի են համուռմ 650-ական թվականներին, առաջ V III դարի առաջին քառորդում, այն ժամանակը, երբ Հայաստանի Փետրալական դասակարգն ապրում էր քաղաքական ծանր ճշնաժամ:

650-ական թվականներին Այրաբատյան դաշտում, Սյունիքում և Աղվանից աշխարհում լայն ծափակ են ստանում պավամկյան շաքժումները, որոնք լուրջ վտանգ էին սպառնում հոգեստականության և նույնիսկ աշխարհիկ տարրին:

659—660 թ.թ. Ներսես III Տայեցի կաթողիկոսն օգավելով իշխանների օժանդակությունից, մոտ մեկ ու կես տարրի հալածանք հանեց պավլիկյանների դիմ: Նա նրանց շաքժումները ձնշում ու բոլորին էլ Հայաստանից աքսորում է և քար ու քանդ է անում նրանց կենտրոնատեղինները: Պավլիկյանների մեծագույն մասը դուրս մղվեց Երկրից, բայց մի մասը մնաց Երկրում ու թագնըվից:

Հայաստանից դուրս քշվող ու փախչող պավլիկյաններն անցնում են հարավ՝ Աղձնյաց գավառը և հատկապես Նիբրկերտ քաղաքում կտղմում են նոր համայնքներ և շարունակում են իրենց գաղափարները եռանդուն կերպով տարածել թե՛ Հայաստանում և թե՛ կայսրության արևելյան երկրներում:

Հավիան Օձեցին և պավլիկյանների շաքժման
լիկիդացիան

Պավլիկյանների համայնքների գործունեությունը դնալով ուժեղանում է Հայաստանի հարավում, հայ-արաբա-ըյուղանդական սահմանագլխին, Նրանք աստիճանաբար VIII դարի սկզբին տարածվում են մի կողմից գեպի կայսրության երկրամասները, իսկ մյուս կողմից՝ զեպի Հայաստանի խորքերը: Նրանք հարմար տարիթի էին սպասում կրկին անգամ ապատամբական շաքժումներ առաջ բերելու համար: Պավլիկյանների շաքժումները լայն ծափակ են ստանում Հայաստանում VIII դարի առաջին քառորդում, երբ արաբական խալֆաթը Հայաստանի Փետրալական տարրերին ոչնչացնելու քաղաքականություն էր վարում և Հերթի աշխարհազրի միջոցով ծանրացնում էր զյուղացիության հարեւնությունը:

Պայմանականների շարժումներն առանձնապես ուժեղ թափեն ստանում 719—721 թ.թ. Հայաստանի հարավում և նույնիսկ Միջնաշխարհում: Այս շարժումները կատացնելու համար առաջին հերթին պայքարի են դուրս գալիս հոգևորականները, որովհետեւ պավլիկյան շարժումները գլխավորապես նրանց գեմ էին ուղղված: Կաթողիկոս Հովհանն Օձնեցին իր մի շարք սպառալից ճառերով աշխատում է կասեցնել ու խափանել նրանց գործունեությունը, քայլ տեսնելով, որ այդ միջոցներն ապարդյուն են անցնում: այն ժամանակ 720 թվին Դիլինի եկեղեցական ժողովամ հատուկ որոշում է ընդունել տալիս ազանդավորների դեմ: Ժողովի 32-րդ կանոնական արգելվում է պավլիկյան կոչված «Մծղնյա» ազանդավորների հետ միենույն վայրում իջևանել, խոսել նրանց հետ կամ որեէ հարաբերություն ունենալ Հրահանդվում է հետանալ նրանցից, գարշել և ատել նրանց: Ծանր պատիժ է սպառանում նրանց, ովքեր կմտենան ազանդավորներին:

Սակայն, հոգևորականների որոշումներն ու պայքարն Օձնեցու զլիավորությամբ չեն կարողանում կասեցնել պավլիկյանների գործունեությունը, ընդհակառակը, քանի գյուղացիական մասսաների շահագործումը ստուկանում է, շարժումը նոր թափ է առնում և սպառալից ապատամբության ընույթ ստանում, մասամբ 726—727 թ.թ.:

Հոգեոր և աշխարհիկ ֆեոդալները, տեսնելով պավլիկյանների լայն ու ծովալուն գործունեությունը և նրանց սպառանութիքը նույն արարական խալիֆաթին, դիմում են Դիլինի աթար Վլիթոսի կանի պինական ուժի օգնությունը: Ներքին և արտաքին շահագործող պասակարդի միացյալ ուժերի ղբահով 726—727 թ.թ. հնարավոր է լինում ճնշել պավլիկյանների շարժումները և նրանց հետ կապված գյուղացիական ընդդվումները: Պարտության մատներված ուղղիկյանները հալածվում են քշվում Հայաստանից, իսկ մի մասն էլ թաքնվում է երկրի մութ ու խուլ անկյուններում:

Արարական սկզբում պասսիվ դիրք են բռնում պավլիկյան շարժման նկատմամբ և նույնիսկ շատ դեպքերում նախաստում էին նրանց աշխույժ զործունեությանը, որովհետեւ նրանց այդ շարժման մեջ արարական տեսնում էին Հայաստանի աշխարհիկ

և հոգեսոր ֆեռդալների թուլացումը: Առհասարակ խալիքաթը շատու շատ դեպքերում օդատաղործել է պավիլիկյաններին թե հայերի և թե բյուզանդացիների դեմ: Սակայն, երբ նրանք համոզվում են, որ պավիլիկյանների պայքարը վերջի վերջո սպառնում է նաև երենց շահերին, այն ժամանակ իրենց գինված ուժերով միանում են հայ ֆեռդալական ուժերի հետ և ձնշում նրանց շարժումները և հալածելով դուրս քչում Հայաստանից:

Պավիլիկյանների շարժումները 727 թվից հետո երկրի կենտրոնական մասերում կանգ են առնում, բայց նրանք շարունակվում են Աղձնյաց պավառում: Հայաստանից հարածվելով, պավիլիկյանների մեծ մասը նորից կենարոնանում է Աղձնիքում, Նփրւկերում և Մելիքտեննուում, այսինքն Հայաստանի, Բուզանդիայի և Արարիայի սահմանագլխում գտնվող վարչերում և քաղաքներում:

Զըրդ գարի սկզբին պավիլիկյանների գործունեությունը մեծավալ է ստանում: Նրանք այս անգամ իրենց կաղմամբ երպածնոր համայնքներով սղողում են բյուզանդական կայսրության վառքը աստիական երկրները: Զըրդ գարի արարարչյուղանդական պատերազմների ընթացքում խալիքաթը Բյուզանդիայի դեմ գուագործում էր պավիլիկյաններին՝ նրանց մի ժամկետ տեղափորելով Տեփրիկեռում (Տեփրիկում): Պավիլիկյաններն երկար ժամանակ պինդած վաշտերով ու ջոկատներով հարձակումներ էին գործում կայսրության սահմանների վրա: Միայն Վասիլի Տ-ի ժամանակի, երբ կայսրության գործերը պրավում են արարական հողամասերի որոշ մտող, 871—873թ.թ., կայսրության գործամասերին հաջողվառ է համառ կոփիլսերից հետո ճնշել պավիլիկյանների շարժումները և հիմնահատուկ կործանել նրանց կենարոնական քաղաք Նփրկերաբ: Նրանք շատ խիստ ջարդում ու կոտրում են պավիլիկյաններին, իսկ նրանց մնացորդներին տեղափոխում են Բալկանյան թերակղզու հյուսիսային մասը: Դրանով էլ վիրջանում է պավիլիկյանների շարժումները Հայաստանում և նրա ուսմանամերձ մասերում: Բալկանյան թերակղզի տեղափոխած պավիլիկյաններից սկիզբ են առնում Բուզարիայի բազորիաները և Եվրոպայի ալրիգյանները:

7—8-ըրդ գարերում պավիլիկյան աղանդավորների շարժումները Հայաստանում ուղղված էին տիրող ու շահագործող դասակարգի դեմ ու պաշտպանում էին ճնշված մասսաների շահերը,

զրանք հատկապես մեծ ու խոշոր ընդվզում էին պաշտօնական հիեազոցու և նրա սպասարկու հոգեկորականության դեմ և նպաստել են Հայաստանում զրական մտքի զարդացմանը։ Հետեւաբար, զրանով նրանց դերը եղել է զրականու Բայց նրանց գործունեությունը մի ծայրով էլ եղել է հետադիմական, նաև, որ այդ շարժումներն օդտագործվել են աշխարհը նվաճող արարների կողմից և երկրորդ՝ որ նրանք իրենց պայքարով հանգես եկան մի այնպիսի ժամանակ, երբ արարները կոտրում էին երկրի գիմաղբությունը, իսկ նրանք ջլատելով հայերի ռազմական ուժերը, ճանապարհ էին հարթում խալիֆաթի համար՝ ափելու Հայաստանին, կողոպտելու երկիրը և ոչնչացնելու նրա ռազմական ուժերը։

Օմայյան դինաստիայի անկամը և հայերի երկրորդ մեծ այլտամբուրյունը խալիֆարի դեմ

740-ական թվականներին, հատկապես Հիշամ խալիֆի մահավանից հետո խալիֆաթի ներսում ծայր են առնում մի կողմից ներքին գահակալական կորիները, իսկ մյուս կողմից սկսվում են զինաստիկան պայքարն ու շիաների ապստամբությունները, որոնք խոսվածույցը դրություն են ստեղծում խալիֆաթի համար, իսկ հպատակ երկրներում առաջ են գալիս նոր ակընկալարություններ՝ արարական լուծը թոթափելու համար։

742 թվին Հիշամ խալիֆին հաջորդում է Վլիթ II-ը, որը փոխանակ պետության գործերով զբաղվելու, ավելի շատ իր կյանքն անց է կացնում զեղության և անառակության մեջ, այդ պատճառով բոլորի համար զառնում է տաելի և մի տարուց հետո սպանվում, իսկ երկրի ներսում ծայր են առնում ներքին կորիներ։ 743—744 թ.թ. երկու խալիֆ գահ բարձրունալուց և գահընկեց լինելուց հետո, 744 թվի վերջին գահ է բարձրանում Հայաստանի ոստիկան Մրգանը՝ Սշոտ Բաղրատունի սպարապետի 15000 հեծելազորի օգնությամբ։ Բայց Օմայյան դինաստիայի վերջին խալիֆ Մրգանին չի հաջողվում խաղաղ կառավարել երկիրը։ Նա ստիպված է լինում վեց տարի արյունահեղ կորիներ մղել իր հակառակորդ Արբասյանների գեմ։

Վլիթ խալիֆի ժամանակ Հայաստանի ոստիկան Մրգանը նշանակվում է Միջազգետքի կառավարիչ, իսկ նրա փոխարքեն Հայաստանում ոստիկան է նշանակվում խաքըրին Մոլիմը, որի

Թրոք Մըրվանի հակառակորդ Վլիթ իւալիֆը 743 թվին աքսորից
աղատ է արձակում ու Հայաստան է վերադարձնում Գրիգոր և
Դավիթ Մամիկոնյաններին, որոնք ավելի քան 11 տարի գտնվում
էին աքսորում: Մըրանք Հայաստան վերադառնալուն պես արար-
սերի գեմ ուղիղի են հանում Վասպուրականը, իսկ Դավիթ Մա-
միկոնյանը նույնիսկ գավագրություն է սարքում Աշոտ Բագրա-
տունու գեմ՝ հանկարծակի նրա վրա հարձակվելով: Աշոտն իրեն
կարողանում է սլաշտավանել Դարույնք բերդում ամրանալով: Ա-
պա սլաշտավետ Բագրատունին 745 թվին մեկնում է Դամաս-
կոս՝ Մըրվանի մոտ, որտես հին բարեկամի և բողոքում Մամի-
կոնյանների արարքների գեմ: Աշոտի Դամասկոս մեկնելուց հե-
տո, Իսաք ոստիկանը Հայաստանի պատրիկության պաշտոնը և
Պոքէրի հրամանատարությունը վախենալով հանձնում է Գրի-
գոր Մամիկոնյանին:

Մըրվանը, որը հաղթել էր իր հակառակորդներին և ժամա-
նակավորապես ամրապնդել էր իր զիբքերը երկրում, աթքունի
հրամանով Գրիգոր Մամիկոնյանին հեռացնում է սպարապետու-
թյունից, իսկ Աշոտ Բագրատունուն վերահաստատում է իր
պաշտոնում և միաժամանակ հրամայում է Իսաք ոստիկանին՝
պատժել Դավիթ Մամիկոնյանին Աշոտի գեմ գավագրություն
կաղմակերպելու համար: Այդ պատճառով ոստիկանն Աշոտի հետ
միասին 746 թվին սպանում են Դավիթ Մամիկոնյանին Դրա-
նից հետո Աշոտը դառնում է ամենապղեցիկ գեմքը Հայաս-
տանում:

Բայց զրանով Գրիգորի ատելությունը Աշոտի նկատմամբ
չի մեղմանում, ընդհակառակը, գնալով ավելի ուժեղանում է,
որովհետեւ աքսորի 11 տարվա տանջանքների վրա ավելանում
է նաև եղբոր սպանության ցավը և հատկապես Հայաստանի նոր
կեղեցումներն ու երկրում ստեղծված նոր տագնապալից դրու-
թյունը: Նա հաշվի առնելով երկրում գոյություն ունեցող ծանր
դրությունը և գժգոհությունները, բյուզանդական Կոնստանդ Վ
կայսրի արարքների նկատմամբ տարած հաղթանակները Փոքր
Ասիսյում և իսալիֆաթի ներսում ծայր առած ներքին պատերազմ-
ները, իր շուրջն է համախմբում մի շարք իշխանների, որոշում է
ապատամբություն բարձրացնել, թոթափել խալիֆաթի լուծը և
միանալ կայության հետ: Գրիգոր Մամիկոնյանն արտաքուստ

Աշուաի հետ հաջա էր, բայց ներքուստ Աշուաի և խալի փաթի դեմ
ապստամբություն էր կազմակերպում:

Կարճ ժամանակում Գրիգոր Մամիկոնյանն իր շուրջն է
համախմբում երկրի իշխանների մեծ մասին և որոշում է ապըս-
տամբություն բարձրացնել: Այս վճեռը հայտնում էն Աշուա-
Բաղրատունուն, որը, սակայն, աշխատում է համոզել և հանգ-
նեցնել իշխաններին իրենց վտանգավոր մտադրությունից, պատ-
ճառաբաննելով, որ «Զենք կարող նրանց (արաբների) դորքերին
դիմուղին և մեր երկիքը հանել վիշտալների բերանից» (Ղետնդ):
Իսկ Գրիգոր Մամիկոնյանն սպառնալով Աշուաին առում է, «Եթե
մեր խորհրդին չմիանաս, քեզ և քո զուքին չի մնա այդ: Զենք
կարող զիմանալ Հայոց երկրում եղած առաջնապեհն» (Ղետնդ): Այդ
սպառնալիքից հետո, Աշուան ստիպված է լինում միաբանել Գրի-
գորի հետ և միանալ ապստամբներին: Ապա մերժում և արհա-
մարհում են իսաք ոստիկանին, 747 թվին՝ բարձրացնում են
ապստամբություն և ամրանում Ցայքի լիոնային մասերում,
հույս գնելով Պոնտոսում զանգող բյուզանդական կայսրության
զորքերի օդնության վրա: Այսպիսով, սկսվում է հայերի երկրորդ
մեծ ապատագրական ապստամբությունը խալի փաթի դեմ Գրի-
գոր Մամիկոնյանի գլխավորությամբ:

Սակայն շուառվ ապստամբ հայերի մեջ առաջ է գալիս ներ-
քին երկպառակություն: Աշուան սպառազիտը որոշ նախարարների
հետ հեռանում է ապստամբներից և դնում իր սեփական կալված-
ները՝ բազրիկանդ գավառը, նպատակ ունենալով նորից հաշուվել
արարների հետ: Գրիգորն Աշուաի այդ գավաճանական քայլն ի-
մանալով, իր զեքքով անմիջապես հետազնդում է սպարապե-
տին, որպեսզի արգելի նրա միացումը արարներին: Իշ-
խան Մամիկոնյանն իր գնդով հասնելով Աշուաին, 20 ջապատում
է նրան, ձերքակալում, կորացնում և ապա աղատ է արձակում:
Այսուհետեւ ջարդում է արարներին և դուրս քշում բերգալպա-
զորքերին ու կառավարիչներին Հայաստանից և պարզում ան-
կախության զրոյը: Իսկ դրանից հետո իր գնդով գնում է կարին
քաղաքը բյուզանդացիներին միանալու համար, որովհետեւ
նրանք մի անգամ են Հայաստանն ինտերվների զործիք էին
դարձնելու իրենց ձեռքին: «Քրիստոնյա» կայսրությունը, որը
հաճախ էր երգվում քրիստոնյա Հայաստանի անունով, այս ան-

գամ էլ օդավիելով արաբների ներքին խռովությաւններից՝ զբա-
վում է կարին և Մելիտենս քաղաքները, հայերին սոքի է հա-
նում արաբների գեմ, բայց վերջում չի զբաղվում Հայաստանի
հարցով:

Թեև Գրիգոր Մամիկոնյանին հաջողվում է հաղթել իր հա-
կառակորդներին և Հայաստանը մաքրում է արաբներից, բայց
նա չի կարողանում երկար իշխել և մտհանում է 748 թ., իսկ
նրա փոխարին երկրի իշխան ու ապստամբության ղեկավար է
դառնում Գրիգորի փոքր եղբայր Մուշեղ Մամիկոնյանը: Բայց
այ էլ կարճ է իշխում, շուտով մեռնում է, իսկ երկիրն ու ապրու-
տամբները մասն են առանց ղեկավարի Յուրաքանչյուր, գավառ
կամ նահանգ ինքն իրեն էառավարվում և ղեկավարվում է մինչև
751 թիվը:

Խալիֆաթի ներսում տեղի ունեցած ներքին խռովություն-
ներն ու կոիմները զնուզով ավելի են բորբոքվում և ղինաստի-
ական պայտքարի բնույթը ստանում: Արտրիայում երկու տոհմ
կար, որոնք իրենց իրավունք էին վնրապահում իշխել երկրում,
ուկայն որանց ձեռքից այդ իրավունքը ապօրինի կերպով հափշշ-
տակել են Օմայանները: Դրանցից մեկն Սլիհ տոհմն էր, որից
սերնդի բնաջնջումից աղաւալել էր նրա փոքր որդի Մահմեդը-
իսկ մյուսը՝ Մարգարի (Մահմեդի) հորեղբոր Սրբասի տոհմն էր:
Այս երկու տոհմերն իրար միացան այն ժամանակ, երբ Սլիհ
թռո Արդուկան իր իրավունքը հանձնեց Արբանի թունորդի
Մահմեդին, որն իր իրավունքը հանձնեց Իբրահիմին, որից ան-
ցակ Արուլ-Արբանին, որն Արբասյան գինաստիայի հիմնադիրը
զարձակ և շատ մարդ կուտրելու պատճառով կոչվեց Աս-Արքֆառ
(արյունաբրու, արյունուս(շտ)),

Օմայան գինաստիայի ներքին պահակալական կոիմներին
հաջորդում է Պարսկաստանի պարսիկ և Քրաքի արար կարգա-
ծատերերի և առևտրականների վրա հիմնվող շեաների ապրու-
տամբություններն Արուլ-Արբասի գլխավորությամբ: Օմայան
զինաստիայի վերջին Խալիֆ Արքանը ստիպված եղավ իր իշ-
խանության 6 տարում անցնդհատ կավել իր հակառակորդ Ար-
բասյանների գեմ, բայց վերջի վերջո նա տեղի տվեց հպոբացող
Արուլ-Արբասի առաջ վերջինս ուժիկանալով 750 թիվին ջարդեց
Օմայաններին: Մըլան խալիֆն սպանվեց Եղիպատսի Պուշիր

գյուղում և Արուլ-Արբասը նրա կտրած զլուխը դցեց իր ոտքերի տակ և դրանով հիմք գրեց Արբասյան դինաստիային Արարիայում:

Վ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԲԱՍՅԱՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ (750—856)

Արբասյան դինաստիան և հայերի ապատմբության ննշաւմը

750 թվին արտօս կան խալիֆաթի գլուխ է կտնգնում Արբասյան դինաստիայի առաջին խալիֆ Արուլ-Արբասը (750—754): Այսպիսով արաբական պետության համար սկսվում է մի նոր դարաշրջան, որովհետեւ այժմ Պարսկաստանը հազթել էր Սիրիային, ինչովեւ մի ժամանակ Սիրիան հազթել էր Պարսկաստանին:

Արբասյանները մարդկային պատմության մեջ թողել են լավ անուն և հիշատակ: Նրանք հովանավորում էին պետությունն ու կուլտուրան, սակայն, այդ բոլորը նրանք կատարեցին միայն Զ-ը դարձից հետո, իսկ մինչև այդ Արբասյանները շատ մեծ քանի պատճառել Առաջավոր Ասիայի երկրներին ու նրանց կուլտուրային: Միայն ինքը՝ Արուլ-Արբասն իր պետությունն ամրապնդելու համար աշխարհն արյունով ողողեց:

Արբասյանների հազթանակից հետո արաբական պետության արևմտյան երկրները չեն հազանդվում այնքան հեռավոր տերերին: Խսպանիան, Մարոկկոն և Եգիպտոսը դառնում են ինքնուրույն և չեն ճանաչում Արբասյան խալիֆներին: Խսպանիա ապաստանած Օմայան տան վերջին ժառանգներն անջատել են տալիս Արևմտյաքն Արևելքից և հետագայում հիմնում են Քսպանիայի Կորդովյան խալիֆայությունը: Շուտով իրենց անկախ են հայտարարում նաև Եգիպտոսի և Աֆրիկայի փոխարքաները: Դրանով արաբական խալիֆաթի արևմտյան բոլոր երկրներն ու նահանգներն անջատվում են Արևելքից: Իսկ Արբասյանին, այսինքն՝ Միջերկրական և Կարմիր ծովերից գեղի առենք ընկնող երկրներին, որոնց մեջ էր մասնում նաև Հայաստանը: Այսպիսով, արաբական պետությունը բաժանվում է Արևելյան և Արևմտյան մասերի:

Արուլ-Արբասը որոշ չափով կարգավորելով կընտրունական

Իշխանության գործերը, ուշադրություն է դարձնում հպատակ երկրների վրա, որոնք ապստամբել էին խալիֆաթի դեմ: Նա Միջազգեացի, Հայաստանի և Ասրազատականի կառավարումը և այդ երկրների ապստամբությունների ճնշումը հանձնարարում է իր եղբայր և խալիֆայության գահի թեկնածու Արքու Զափարչ-Ալ-Մանսուրին, որը մեծ բանակի գլուխ անցած արշավում է գեղի Հայաստան: Նա Արքու-Արքասից հրահանգ էր ստացել, որ նրա արյունուրշտ քաղաքականությունը տարածի նաև Հայաստանում:

751 թվին Ալ-Մանսուրը Միջազգեացի մի շարք գավառներում բռնկված ապստամբությունները ճնշելուց հետո, մեծ բանակով մտավ Հայաստան: Նա կարծ ժամանակաընթացքում ամենազաժան կերպով՝ ճնշեց հայերի ապստամբությունը և խիստ ճալածանքի ենթարկեց նրանց՝ շնորհիվ հայերի անմիտաբանության ու զեկավարության բացակայության: Ալ-Մանսուրն ապստամբությունը ճնշելուց հետո մի տարի ասպատակեց երկրը, կոտորեց և գերեվարեց բնակիչներին: Կողոպտեց, թալանի ենթարկեց շեն ու հարուստ քաղաքները և գյուղերը, ապա Հայաստանը կը կին անզամ ենթարկեց արաբական խալիֆաթի դաժան լծին, որը չորս տարի աղատ էր մնացել արաբական ճնշումներից ու կեղեցումներից: Նա կատարեց աշխարհագիր և երկրը գրեց ծանր հարկերի տակ: Համաձայն նոր աշխարհագրի, յուրաքանչյուր հարկատուի պարանոցին կապարե կնիք էր իշանվում, որպեսզի հարկատուն ամեն տեղ՝ հայտնի լինի:

Ալ-Մանսուրն իր բացառիկ պաշտոնը Հայաստանում ավարտելուց հետո, 752 թվին բանակի մեծ մասով շարժվում է գեղի Ասրազատական, իսկ Հայաստանուց՝ կառավարիչ-ոստիկան է թողնում Եղիտին. «Եվ երբ գնալով մեկնեցավ Հայաստանից, թողեց Հայոց աշխարհի վրա Ուսագի որդի Եղիտին որպես գատավարության և հարկապահանջության հրամանատար» (Ղեղվոնէ), որին հրամայում է իր վարած հարկային խիստ քաղաքականությունը շարունակել:

Ալ-Մանսուրը ճնշում է նաև Ասրազատականում եղած ապստամբություններն ու խոռվաթյունները, ապա այդեղից վերադառնում է Արաբիա և իր եղբոր՝ Արքու-Արքասի մահվանից հետո դառնում է խալիֆ 754 թվին: Նա հաշվի առնելով, որ

արևմտյան երկրներն անջատվել են խալիքաթից և պետության մայրաքաղաք Դամասկոսը մնացել է երկրի արևմտյան մասում՝ Ասորիքում, շրջապատված թշնամական տարրերով՝ Օմայանների կողմանակիցներով, աշխատեց պետության մայրաքաղաքը մոտեցնել երկրի կենտրոնական գավառներին, որպեսզի մոտինի երես հավատարիմ արևելյան տրաբներին և պարսկական տարրին: Այդ նպատակով 754—761 թ.թ. ընթացքում Միջազգետքում (Իրաքում), Տիգրիս գետի ոչ ափին, Սասանյանների հին մայրաքաղաք Տիգրոնի մոտ կառուցվում է խալիքաթի նոր մայրաքողաք՝ Բաղդադ անունով և պետության կենտրոնը Դամակոսից տեղափոխվում այնտեղ: Այդ նոր մայրաքաղաքի անունով արաբական պետությունը կոչվել է նաև Բաղդադի խալիքաթյուն, ինչպես գրանից առաջ, Օմայանների ժամանակ կոչվում էր Դամակոսի խալիքայություն: Արբասյանների ժամանակ սկսվում է ծանր հարկերի գանձումը:

Եզիտ և Հասան ոստիկանների կեդեռումները

Արարիայում՝ Արբասյանների պետության գլուխն անցնելուց հետո, ինչպես նշեցինք վերեւում, արաբական խալիքաթի համար նոր գարաջրջան է սկսվում: Նոր ձևավորվող գինաստիքան հաստատվում է Միջազետքում՝ Տիգրիսի ափին կառուցված Բաղդադ մայրաքաղաքում, որի պերճանքն ու շրեղությունն առասպելական է եղել: Նոր մայրաքաղաքի կառուցումը Տիգրիսի ափին, զինաստիքական կոինների ժամանակ քանիված վայրերի, ամրությունների ու ջրանցքների վերաշինումը, փոռաւային ճանապարհների կանոնավորումը, բանակի կարգավորումն ու ռազմազինումը և 8-րդ դարի Ակսի Արբասյանների մղած պատերազմները Հնդկաստանում և Փոքր Ասիայում, Փինանսական հսկայական միջոցներ էին կլանում:

Արբասյանների ժամանակ, ինչպես նշեցինք, խալիքաթի արևմտյան երկրներն ու գավառներն անկախանալով չեն ենթարկվում Արենլըին: Արբասյան դինաստիքան զրկվում է այդ հարբուստ գավառներից ստացվող եկամուտներից: Նոր հարկային գանձումների ամբողջ ծանրությունը ընկնում է Արևելքում արաբական տիրապետության տակ գտնվող երկրների վրա: Վեր-

Հինների թվում էր նաև երմենիան (Ermeniata): Պարզ է, որ խալիքաթի հարկային դանձումները պետք է ավելանային ինչպես մյուս հպատակ հեղիներում, ուույնպես և Հայաստանում: Ժամանակակից պատմիչ Ղելվոնդը մանրամասն նկարագրում է այն ծանր տառապանքներն ու տանջանքները, որոնց ենթարկվել եր հարգատու Հայաստանի աղքարնակությունը: Եղիտ ոստիկանը հետևողականորեն շարունակում է Ալ-Մանսուրի գաժան քաղաքականությունը և խիստ կերպով նեղում հարկատու ժողովրդին:

Եղիտ ոստիկանն երկրի կառավարման կարգավորումը հանձնում է Աշոտ Կույրի եղբօրորդի Մահակ Բաղրատունուն, որովհետեւ Աշոտը կորցրել էր իր հողինակությունը Հայաստանում 747—751թթ. ապստամբության շրջանում ու քաշվել էր Դարույնք ամբողջ և մեկուսացած կյանք էր վարում այնտեղ մինչև 761թվականը: Մակայն, Մահակ Բագրատունին, հաշվի առնելով ստիկանի գաժան բռնությունները, կտակածելով, որ իրեն էլ կարող են մեղադրել այդ բարբարոսությունների մեջ, չխառնվեց երկրի կառավարման գործին և սպասում էր նպաստավոր ժամանակի: Նա միայն զեկավարեց զորքը և առաջնորդեց պատերազմի, թեև «Հատապ սակ արծաթոյն, որ գայը ամի իւրաքանչիւր զորացն Հայոց» (Դելոնդ), այսինքն, հայ զորքի ոռճիկը կտրվում է, որը յուրաքանչյուր տաքի ուղարկում էր խալիքաթը:

Հայաստանի այս ծանր զրության ժամանակ (756—758) Բյուզանդիայի կոպրոնիմաս կայսրն Արտավազդ Հայկազնի ապստամբությունը ձնշելուց, կայսրության մեջ գտնվող հայերին հարվածելուց հետո, արշավանք է կաղմակերպում դեպի Հայաստան, նպատակ ունենալով ետ զրավել այդ երկիրը խալիքաթից և միաժամանակ պատճել ըմբռոտ հայերին: Նա նվաճելով Փոքը Հայքն ու Եփրատի հովիտը, հասնում է մինչև Կարին, գրավում է քաղաքը, ավելում, իսկ բնակիչների մեծ մասին զերի տանում: Հայ իշխանների որոշ մասը չհասկանալով կայսրի մտադրությունները, օգնում էին նրան Կարին քաղաքը զրավելու գործում, կարծելով, որ դրանով կազատվեն արարական գաժան կեղեքումներից, Բայց իզուր, նրանք չարաչար սխալ վեցին: Նոր նվաճողը պակաս գաժան չէր, քան հինը:

Բյուզանդիայի նվաճումները Հայաստանում և հարեան երկրներում երկար շատեցին: Արարները մեծամեծ ուժեր հավաքելով

դուրս եկան թշնամու զորագնդերի գեմ, ետ մղեցին նրանց ոռ զրավիցին Մելիտենի քաղաքը և մտան Կիլիկիա ու Մելասի ճաշկատամարտում ջարդեցին կայսրության զորամասերին և դուրս քեկցին Կիլիկիայից: Դրան զուգընթած Հայաստանի ոստիկան եղիտը ետ է զրավում Կարինը, իսկ քանդված քաղաքն էլ վերաշինում, բայց գերի տարված հայերի տեղը Արարիայից արար գաղթականներ է բերում և բնակեցնում այնտեղ: Բայց այդ գեղքերից հետո հայերի գրությունը չի բարելավվում, ընդհակառակը, ավելի ծանրանում է:

Եղիտ ոստիկանը նախ պատժում /է Բյուզանդիայի կողմն անցած իշխաններին, ապա ավելի ծանրացնում է երկրի հարկերն ու տուրքերը/ Սրանով Հայաստանի կյանքը դառնում է անտառնելի: Ծանը հարկերը գանձելու ժամանակ գործադրում էին ամենավայրագ ու գաժան միջոցներ: Ուշտղրավ է ժամանակակից պատմիչ Ղեղոնդի հետեյալ տեղեկությունները. «Շատերը քարանձավներն են փախչում և թագնվում, ոմանք ձյան տակ են մնում և անտառնելի աղեաններից աղատվելու համար գետն են նետում իրենց: Որովհետեւ իրենց հարկը չվճարող ռամիկներին ամեն տեսակ չարչարանքներով տառապեցնում էին, ոմանց փոկով էին ծեծում, ոմանց չարչարում էին տանջանքի գործիքներով, ուրիշներին մերկացնում և սաստիկ ձմռանը լինեն էին զցում: Գործադրվում էր նաև կաթաղանը:

Սրաբների գանձած հարկերը գնալով այնքան շատանում են, որ նախ սպառվում է երկրի արծաթի և ոսկու հարստությունը և երկրորդ՝ հարկատու բնակչությունն իր ստացած եկամուտներով չի կարողանում մարել իր վրա դրած հարկի գումարը, որ տարեց տարի ավելացվում էր արաբական խալիֆաթի արքունիքի կողմից: Հարկատու գյուղացիները ստիպված են լինում վճարել նրանց հարկը իրենց լծկան (եղներ ու գոմեշներ), բեռնատար (ձիերն ու ջորիներ) և կաթնատու (կովեր ու ոչխարներ) անառուններով, ուտելիքով, տան կահկարասիքով և նույնիսկ կանաց զարդեղներով, իսկ նրանք, ովքեր չեն կարողանում վճարել, գերի էին տարվում և ստրկացվում:

Հայաստանում պահվող հեծելազորի համար սահմանված 100.000 դահկան զումարի հայթայթումը, որ գալիս էր իսլիմաթից, զաղարեցվում է և ստիպում ու պարտավորեցնում են

Հայ նախաբարեներին՝ իրենց միջոցներով պահել դորքը, Հայ եկեղեցին և հոգեվարականությունը, որոնք տառաջ ազատ էին հարկերից և ամեն տեսակ տուրքերից, ոչ միայն հարկատու են դառնում խալիքաթից տուած, այլև հարկի գումարն այնքան մեծ էր, որ ստիպված են լինում եկեղեցիների ու վանքերի թանկարժեք անոթները վաճառել պահանջվող հարկերը վճարելու համար:

Հայաստանի կողոպուտն ու ավերը միայն դրանով չի վերաշնուրմ: Արաբական խալիքաթի թելազրանքով, Սյուլեման առանով մի պարսիկ զրուավար քանակով մանում է Վասպուգական և ասպատակում է երկիրը: Սակայն ժողովուրդը Վահան Արծրունու երկու որդիների՝ Սահակի, Համազատի և Գագիկ Արծրունու զլխավորությամբ ոտքի է կանգնում սեփական երկիրը նոր նվաճողից պաշտպանելու: Թեև տեղի ունեցած կորիզներում հերոսի մահով ընկնում են առաջին երկուուր, բայց Գագիկ Արծրունուն հաջողվում է ջարդել Սյուլեմանի բանակին և ետ շպրտել Հայաստանի սահմաններից, իսկ իրան էլ սովանել: Այնուհետեւ Գագիկ Արծրունին նորանոր կորիզներ է մզում արաբական միշտը զրուավարների գեմ և փրկում Հայաստանց:

Հայաստանի երկրորդ ազետը դախու է խաղարների կողմից բայց դարձյալ Եղիտի պատճառով: Վերջինս իրեն հումար ավելի անձնական հարստություն կուտակելու ձգտումով բարեկամություն է հաստատում խաղարների հետ: Նա ամուսնանում է վերջինների Խաքան թագավորի քույր Խաթունի հետ, որն իրեն հետ բերում է մեծ քանակությամբ զարդեղեններ ու հարստություն: Սակայն Խաթունը շուտով մահանում է, իսկ Խաքանը կասկածելով, որ իր քրոջը սպանել են հարստության համար և ոչ թէ մեռել է, և զա անշուշտ ճիշտ է, մի արշավանք է կազմակերպում դեպի Եղիտի տիրապետությունը, բայց զեատում է ոչ թէ ոստիկանին, այլ Անդրկովկասի ժողովուրդիներին: Խաղարները զրավում են Աղվանից աշխարհը, Վրաստանը ու Հայաստանի հյուսիսային գավառները և անինա ավերում ու կողոպտում են գրաված երկրամասերը:

Եղիտ ոստիկանը թեև ուներ ուազմական մեծ ուժ, բայց դուրս չկավ իր թշնամիների գեմ, ցույց չտալու համար խալիքաթին, որ նման արշավանք է տեղի ունեցել: Խաղարներին

Անգրկովկասից ետ են քշում հայկական, վրացական և աղվա-
նական ռազմական ուժերը:

Թագարների կողոպուտն ու ավերումները շատ շուտով վեր-
ջացան, բայց Եղիտի կողոպաւտները շարունակվեցին ավելի
խիստ ձևով, որը երկիրը հասցըն զառն աղքատության, չնայած
Սահակ Բագրատունու և Տրդատ կաթողիկոսի մի շաբք ըողոք-
ներին վերջինները հաշվի առնելով երկը ծանր զրությունը
ստիպված են լինում ըողոքի նաև Սէ-Մանսուք Խալիֆին, որը
762 թվին Եղիտին հետ է կանչում և նրա փոխարեն Հայաս-
տանում ոստիկան է նշանակում Բեքիրին կամ Բաքրին (762—
764), Սէ-Մանսուքը Եղիտին Հայաստանի ոստիկանի պաշտոնից
հետ կանչեց երկու պատճառով, առաջին՝ կանխել երկրում եղած
զժոհությունները, որոնք սպառնում էին ապստամբության
Քարձրացներ և երկրորդ, որ Եղիտը իր կողոպատած ավարից
բաժին քիչ էր հանել Խալիֆին, Սէ-Մանսուքը շուտագ հետ է
կանչում նաև Բեքիրին, որովհետեւ նա լավ չէր կողոպատում Հա-
յաստանը, նա Բեքիրի փոխարեն ոստիկան է նշանակում Կահաթ-
քայի որդի Հասանին (764—775), որն Եղիտից շատ ավելի
աղան էր և արծաթասեր, սամանավանդ, որ Խալիֆը հրում այն
էր «խոնարհացնել Հայոց Երկիրը չարաչար կերպով», որն ա-
պստամբության նշաններ էր հանդես բերում:

Հասան ոստիկանի ժամանակ էլ ամելի ծանրացավ Հայաս-
տանի վիճակը: Նրա հետ Հայաստան էր նկել Խորասանից մի
գործունք, որն իր վայրազություններով հայտնի է արարական
պատմության մեջ: Այդ զնդին արվել էր լայն արտօնություն-
ներ՝ աղատ գործել ըստ ցանկության: Այդ պատճառով զրամա-
կան հարկերը հավաքելու համար գործադրում էին բռնություն-
ներ, խոշտանգում ու տանջում էին թե մեծերին և թե փոքրե-
րին:

Հասան ոստիկանն ամեն տարի սովորություն էր դարձել
վերակենել էր կեղեքումները, կրօնական ու աղղային հալա-
ծանքներն երմեխայում: Նախարարների, Եշխանների և ուս-
միկների մեջ առաջ են զալիս նորանոր խոռվություններ և զժոհու-
թյուններ: Ժողովուրդը դաման ու անհանդուրժելի հարստա-
հարություններից չհոսանատվելով, աղատության եղը զանում
է ապստամբության մեջ, որովհետեւ բարվոք է համարում մեռ-

նելլ, քան այդ տանջանքներով ապրելը Խոկ արարէները հայերի գժողովություններին ու խոռվություններին վերջ տալու համար աշխատում էին է՛լ ավելի ուժեղացնել տանջանքները, կերեքումներն ու հարստաճարությունները: Բայց մեկ քառորդ դար տեղով այդ ծանր կացությունը զյուղացիությանը և քաղաքային ազգաբնակությանը, ինչպես նաև իշխաններին քայլացան դուռն են հասցնում: Փաստորին ստեղծվում է մի այնպիսի զրություն, երբ երկիրը վիշտապների բերանից, գուրս բերելու համար ժողովուրդը զիմում է ղենքի: Եվ 773—775 թ.թ. Հայաստանում ծայր է տանում համաժողովրդական մի խոշոր ապստամբություն, որին պլիավարում էին Մուշեղ Մամիկոնյանը և սպարապետ Սմբատ Բագրատունին:

773—775 թ.թ. հայերի երրորդ մեծ ապստամբուրյունը
խալիֆաթի դեմ

Արբաոյան զինաստիայի առաջին խալիֆների օրով (750—775) Հայաստանում ստեղծված անտանելի կացությունը ժողովրդին մզում է ապստամբության, որը ժողովրդական լայն մասսաների ընդունության տեսակետից Հայաստանում եղած խոշորագույն ապստամբություններից մեկն էր:

773—775 թ.թ. ապստամբության ազդանշանը տալիս է Արբավագդ Մամիկոնյանը: Նա հայկական մի զորագնդով զնում է Դվին, Ներկայանում Հասան սատրիկանին և նրա միջացով զինում է իր զորքին, որպես արարական զնդերի օժանդակ մաս խաղարների զնմ կռվելու համար: Նու 773 թվին իր գնդով զնում է Երբակ գալուոք, կանգ է առնում կումայրի զյուղում (այժմյան Լենինական) և օդուագործելով զյուղացիների գժգությունները արարական հարկահանների, զեմ, ապստամբությունները արարական հարկահանների, զեմ, ապատամբությունները բարձրացնում, սպանում է այդ գավառի արար հարկահավաքներին և նրանց հավաքած հարկերը բաժանում է Երենց մեջ, Սակայն Դվինից Հասան սատրիկանի կողմից ուղարկված արարական զորագունդը Մահմեդ զորավարի գլխավորությամբ ապստամբության առաջին փորձը խեղզում է: Արտավագդ Մամիկոնյանը արարական զնդի՝ զեմ իր վերջին հակատամարտը տալիս է Սամցին զավառում և կրկին պարտվում:

Անօգնական միացած ապստամբների գլխավոր ուժերը Հայաստանի սահմաններից հնուանում և գնում են Եղերացոց աշխարհը (Վրաստանի գավառներից մեկը), որտեղ Արտավազդը նույնիսկ հասնում է իշխանության:

Հասան ոստիկանը Շիրակի ապստամբությանը պատասխանում է հարկերի ծանրացմամբ: Երկրում անտանելի դրություններ էլ ավելի ծանրանում է: Սակայն Արտավազդ Մամիկոնյանի ելույթը ոգեգորել էր երկրի մի շարք աչքի ընկնող իշխաններին, որոնցից առաջին հերթին հանդես է գալիս Տարոն կագառտեր Հրահատի որդի՝ Մուշեղ Մամիկոնյանը: Սա 774 թ. սպանում է արար հարկահավաքներին, հարկերը խլում է ու ողջ գավառը ոտքի է հանում, արարների գեմ, իսկ ինու յուրայիններով շարժվում է զեպի հյուսիս և ամրանում Արտավազերս բերդում: Դրանով սկսվում է ապստամբության երկրորդ շրջանը:

Տարոնի ապստամբները 60 մարդ են մտցնում Բաղրեգանիք գավառը, որոնք սպանում են Ապումնուր հարկահավաքին և Բագրեանիք գավառի բնակչությանը ոտքի հանում արարների գեմը: Այսպիսով, Սասուն, Տարոնից մինչև Բաղրեգանը ու Շիրավեկավառների բնակչությունը ոտքի են կանգնում արարների գեմ:

Ապստամբությունը ճնշելու համար արարները կարինից 200 հեծելազոր են ուղարկում, ստկայն ապստամբ հայերը գիտ շեր ժամանակ, գաղանի կերպով հարձակվում են արարների վրա Խորս գյուղում, բոլորին կոտորում են և գրավում նրանց զենքերն ու ձիերը: Կարինի պահակախմբի կոտորածը թեև փոքր զեպք էր, բայց ամենուրեք ողեգորեց հայերին և ոտքի հանեց նրանց՝ ընդգեմ արարական լծի:

Կարինի պահակախմբի պարտությունից հետո, հայերի ապստամբությունը ճնշելու համար Հասան ոստիկանը Դիլինից Ապունձիս զորավարի գլխավորությամբ նոր, ընտիր հեծելազունդ է ուղարկում 4000 հոգուց բազկացած: Մուշեղ Մամիկոնյանն իր 200 ընտիր հեծյալներով զուրս է գալիս թշնամու գեմ: Նրան օդնության են հասնում նաև մյուս իշխանները: Մուշեղը Բաղրեկանիք գավառի Բաղավան գյուղում հանկարծակի հարձակում է գործում, ջարդում ու ցրում է թշնամու ընտիր հեծելազունդը: Քշում է մինչև Արուճը, մեծ սարսափ թողնելով

արաբների վրա։ Արաբներն այդտեղից կորագլուխ հեռանում ենք դիմում։

Ապստամբության այս առաջին լուրջ հաջողությունները ոգելուում են մի շարք գավառների ու նահանդների նախարարներին և բնակչությանը, որով ապստամբական շարժումները գնալով ծավալվում և համաժողովրդական բնույթ են ստանում։ Ապստամբներին միանում է նուև Հայաստանի սպարապետ Սըմբատ Բագրատունին, որը փոխարինում էր վախճանված Սահակ Բաղրատունուն։ Միքատ սպարապետը մեծ հույսեր և ակնկալություններ ուներ, որ ապստամբության միջոցով թիրեա հնասրավոր լինի վերականգնել երկրի անկախությունը և թոթափել խալիֆաթի զաման լուծը։

Այդ ժամանակ հոգեվորականներից առաջ է գալիս միքարողիչ վարդապետ, իր գուշակություններով ժողովրդին հրահրում է ապստամբության, ասելով՝ «Մոտեցել է ահա ձեր փրկության ժամանակը, որովհետեւ այժմ շուտով թորդոմի տոհմը կրկին անգամ ստանալու է թագավորություն։ Եկ գուշ մի շվարեք, որ քիչ եք, որովհետեւ ձեզանից մի մարդը հալածելու է (սրանցից) հազարին և երկուսը տառը հազարին»։

Այս ընդհանուր ոգելորության պայմաններում կային և այնպիսիները, որոնք այլ կերպ էին դատում։ Դեպքերին ժամանակակից և բյուզանդական կայսրության խոստումներին որևէ արժեք չավող Ղեվոնդ պատմիչը «սրտի բաղդալի և սուտառեսիլ» է որակում կրօնավորի այս գուշակությունը։ Երկար խրատական մի քարոզ է դնում նաև Աշոտ Բագրատունու ըերանը։ Որն իրեկ Հայաստանի իշխանաց-իշխան հաջորդել էր Սահակ Բաղրատունուն և 25 տարի հետո Աշոտ Կույրի գերութիւն էր հանգեստ զալիս Փաստ է ըերում, որ «Բազմագլուխ վիշտապի» (խոռը արաբների մտսին է) զորությունը շատ մեծ է, որ նույնիսկ Բյուզանդական կայսրությունն անզոր է նրան զիմազրելու, իսկ դուք, ումն ապավինած, կամ ի՞նչ ուժով կարող կլինեք զիմազրել նրանց անհաղթելի իշխանությանը։ Ուստի՝ խորհուրդ է տալիս հնաղանդ մնալ և հպատակություն հայտնել կտմ գաղթել բյուզանդական հոգամասը։

Աշոտ Բագրատունին, Ղեվոնդ պատմիչը և սրանց տեսակետի վրա կանգնող պատմաբանները չարաչար սխալվում են։

Հայերի ապստամբությունը թեկուղ պարտվի էր քայլ կենսա-
կան պահանջ էր արարական խալիքաթի դաժան քաղաքական-
ությունը փոխել ուղղու համար, Այդ ողածառով էլ Սմբատ
սպարապետը մասնակցում է աղոստամբությանը, որը նոր թափ-
ու ծավալ է տալիս ապստամբական շարժումներին, Մեկը մյուսք
հետեւ ապստամբություն են բարձրացնում Հայաստանի մի
շարք նահանգներ ու գավառներ, որոնց արձագանքում են նույն
վրացիներն ու աղվանները: Ապստամբներն անխնա կոտըռում
և գուրս են քշում Հայաստանից արարական կառավարիչներին
հարկանավաքներին և զորքերին: Հայերի ուժեղ հարվածների առկա-
արարները կամ գուրս են դնում երկրից, կամ կուչ են գա-
լիս Կարինի և Դիլինի պարփակների մեջ: Բազրեվանդ գավառում
կազմված հայերի 5000 աղատների հեծելազորացին գունդը
Մուշեղի գլխավարությամբ, և ուսմիկներից կազմված հետեւլու-
կային գունդը շարժվում են գեղի Կարին և 774—775 թ. թ. ամ-
բողջ ձմեռը պաշարում են քաղաքը, Առանձին հարձակումներ
են գործում նաև Դիլին քաղաքի վրա, որովհետեւ այսուեղի ա-
րարները մոտակա զավառները հաճախ էին կողոպատում:

Ապստամբության զլուխ են կանգնում հայկական զորքերի
հրամանատար Սմբատ Բագրատունին և Մուշեղ Մատելիկոնյանը
աստիճանարար ջարդելով արարներին գուրս են քշում էրմենին-
տյից, իսկ մնացած մասին էլ կուչ են բերում Դվինում և կու-
րինում: Սակայն, չնայած զրան, համաժողովրդական այս ապշա-
տամբությունը մի միասնական կենտրոնի չի ենթարկվում, յուրաքանչյուր նահանգ կում գալիք ապստամբությունից հետո
դառնում է ինքնուրույն, իսկ Սմբատ Բագրատունու փորձերը՝ մի
միասնական զեկավար կենտրոն ստեղծելու և երկրի բոլոր ռազ-
մական ուժերի համախմբումը մի զեկավար մարմնի ձեռքը
մատնվում է անհաջողության, որովհետեւ բացի Կարին քաղաքը
պաշարող զորամասից, առանձին ռազմական կենտրոններ են
կազմակերպվում վասպարականում՝ Համազասպ Արծրունու,
վլխավորությամբ, որին օգնում էին իր երկու եղբայրները
Սահակն ու Մերուժանը, Կողովիս գավառում՝ Վասակ Բագրա-
տունու զլիավորությամբ: Այստեղի զորամասի մեջ էին գտնվում
Ամատունյաց և Արծրունյաց զնդերը, կինարոն ունենալով Դա-
րույնք, Մակու և Արագեղտու ամբոցները: Սյունիքի և Գուգարքի

սաղմական ուժերը մնում են տեղերում։ Այսպես ապրածված էն մնում երկրի կովող ուժերը, մի հանգամանք, որը շատ խիստ բացասարար է ազգում ապստամբության վրա։

Հայաստանի ապստամբության լուրը շուտով հասնում է Սրաբիս և ցնցող տարավորություն է զործում, որովհետեւ էրմհնիս ազատագրական պայքարն այնքան ուժեղ էր, որ խախտում է խալիքաթի հիմքերը։ Երարական խալիքաթը էրմհնիս այս պըստամբությունը ճնշելու և Դիլինի ու մանավանդ Կարինի առարներին փրկելու համար 775 թվականի գարնանը Բաղդադից Սմբ Պղբավարի գլխավորությամբ Խորասանից բերած 30,000-ոց թուրքական մի զորաբանակէ ուղարկում Հայաստան։ Սրաբական պըրքերը Հայաստան են մտնում հարավից և բանակ զնում Խըթ քաղաքում։ Այնունեան հիմնվելով այդ շրջանի մահմեդական աղքաբնակության վրա, մի կողմէից ուսումնասիրում են հայերի ուղղմական ուժերը և նրանց տեղավայրերը, մյուս կողմից սկսում են պատերազմական գործողություններ ապստամբների դեմ։

Աշոտ Ատհակյան Բագրատունին լսելով, որ արաբները մտել են Հայաստան, որպես երկրի կառավարիչ, անմիջապես լուր է ուղարկում բոլոր իշխաններին, որ իրենց զորքերով համարվեն և ճակատամարտ տան թշնամու դեմ։ Աշոտի կանչին անմիջապես դեպի Վանա լճի հյուսիսային մասն են շարժվում Վասպուրականի գնուքերը՝ Համագասապ Սրծունու գլխավորությամբ և կոռպվակառի զորքերը՝ Արծունու զավակառությամբ և կոռունք միմյանց հանդիպում են Ասրերանի զավառի Բերկրի զյուղում և այստեղից շարժվում դեպի Արճեց։ Այստեղ շուտով հասնում են Ամբ զորավարի գնուքերը և 775 թվի ապրիլի 15-ին տեղի է ունենում Արճեց քաղաքի մոտ մեծ ճակատամարտ։ Այդ անհավասար պատերազմում թեև հայերը սկզբում հաղթանակեցները իրենց կողմն են զբավում, բայց վերջում թշնամին շանսերը կրենց կողմն են զբավում, բայց վերջում թշնամին մեծ զոհերի գնով հաղթում է հայերին։ Վերջիններս 1500 սպանված տարով, որոնց թվում չորս իշխաններ, բռնում են Փախուստի հանապարհը, իսկ թշնամին հետապնդում է նրանց միւսն Տայպյուղը։

Սրճեցի ճակատամարտից հետո արաբական զորքը հաղթական կերպով շարժվում է դեպի հյուսիս՝ Բաղրեկանդ գավառը և

Պահակ գնում Արձն գյուղի մոտ՝ Արածանիի գետափին։ իսկ
ապստամբ հայերը, հատկապես Սմբատ սղարապետը և Մուշի
Տամիկոնյանը ձգտում են մոքիլիզացնել իրենց բոլոր ուժերը
թշնամուն զիմագրելու համար։ Կարինը պաշարող 5000 հոգոց
քաղկացած հայկական հեծելազորը, որը քաղաքը զրավելու վրա
էր, Արձեշի պարտության լուրն առնելով, թողնում է Կարին
քաղաքի զրավումը և շարժվում է գեղի հյուսիս դնացող արա-
բական բանակի վրա։ Հայկական այս զորագնդին միանում էն
նաև ապստամբների մի շարք այլ զորամասեր։ գեղի Բագրի-
վանդ են գալիս նաև գյուղացիներ, աշխարհազորականներ և ու-
ամբողջական երկրամաս էին կողմում և բաժանված չեն: տաճ-
մի տարբեր ճյուղերի միջև: Սրանում էր նրանց գլխավոր ա-
ռավելությունը Բազրատունիների նկատմամբ, որոնց կալված-
ները, ինչպիս տեսանք, բաժանված էին առանձին տոմմերի միջև:
պլիսավորում Զբդ գարի:

Հարավում ուժեղացող Բազրատունի և Արծրունի իշխանու-
թյունները համաժաղովրդական մի մեծ ազգամամբություն են
պլիսավորում Զբդ գարի կեսերին:

Հայաստանում իրենց կալվածներում ուժեղացող հայ իշ-
խանները շատ հաճախ էին ըմբոստանում խալիֆաթի և նրա
կողմից Հայաստանի վրա նշանակված կառավարիչ-ոստիկանի
կեմեր: Այդ մասին ուշագրավ տեղեկություն է տալիս Ժամանա-
կից նշանակար արար պատմիչ Ահմեդ Բալամորին: «Հայաս-
տանի պատրիկները (իշխանները) շարունակում էին ապրել ի-
րենց կոլվածներում և յուրաքանչյուրը պահպանում էր իր գա-
րենց կողմից առաջիկ այս երկիրն (Հայաստանը) էր վարը: Եթե փոխարքայի կողմից այս երկիրն (իշխանները) նրան աշ-
կալիս որեւէ ոստիկան, պատրիկները (իշխանները) նրան աշ-
խատում էին անտեսել եթե նրանք նկատում էին, որ ոս-
տիկանն աշքի էր ընկնում անկաշառակերությամբ, խստությամբ,
և ուսղմական ուժություն հանդերձանք ունի իր որբամազրության
տակ, վճարում էին հարկերը և իրենց հպատակությունն էին

և աբհամտբհանքով վերադարձնել նըան» («Книга завоевания
стран», стр. 21, 1927 г., Баку):

Այս ցույց է տալիս, որ խալիֆաթի քաղաքականությունը
հակառակ հնանանք էր տվել: Հայ թշուանները նորից հասնել էին
քաղաքական իշխանության:

850—852 թ. թ. հայերի IV մեծ ապստամբությունը
խալիֆաթի դեմ*

Խորամյան ապստամբությանից և բյուզանդական կոյս-
քության գեմ մղած պատերազմներից ժամանակովորապես
հազվանակով գուրս եկած արաբական խալիֆաթը հպատակ
անհնարդանու և ապստամբ երկրներին նորից պատասխանում է
հարկերի ծանրացումով:

Աֆշին զորավարն Ատրպատականի ապստամբությունը
Ճնշելուց հետո, 837—838 թ. թ. ասպատակում է նաև Հայաս-
տանը՝ Խորամյան ապստամբներին օգնողներին պատժելու
համար: Աֆշին իր բացառիկ պաշտօնն Արաբատականում և
Հայաստանում հաջող ավարածուց հետո, իր բանակով մեկնում
է գեղի Սոսրիք և Փոքր Ասիր, իսկ իր փոխարին Հայաստանի
ոստիկան-կառավարիչ է թունում Խալիֆիպ Եղիտին, որը շուտով
մահանում է Հայախաքում, որից հետո Հայաստանը մոտ 7
տարի մնում է առանց ոստիկանի (842—849):

Վաղիկ (842—847) և նրա եղբայր Ջաֆար (Ջափր) Շութա-
վաքիլ (847—861) խալիֆների ժամանակ, արար և հայ ժամանա-
գիրների վկայությամբ, Հայաստանում սկսվում են ներքին
ապստամբություններ, որոնք անում են շուրջ մեկ տասնամյակ: Հայ
ժողովրդի պատմության փայլուն և միտմամանակ արյու-
նալի մի շրջան է այս, որ հայ ժողովրդական մեծ էպոսի՝
«Սասնա Ծոեր»-ի հիմնական միջուկն է կազմել: Հայկական
էպոսն ապստամբության փայլուն կողմը պահպանելով, լուս-
թյան է մատնել նրան հաջորդող արյունալի շրջանը:

Թեհ խալիֆաթի ճնշումները 840-ական թվականներին
խստանում են, բայց հայ իշխանները, հատկապես Տարոնի
Բաղրատ Բաղրատունին և Վասպուրականի Աշոտ Արծրունին,
օգտվելով այն հանդամանքից, որ խալիֆաթի ուժը գնալով

Թուլանում է, աղջամարհանքով են վերաբերվում նրա կողմից
ուղարկված ստոիկաններին:

Հոյ իշխանների ըմբոստությունները սահմանագելու,
անցած ապրինների հարկերը հավաքելու համար, Մութավաքիլ
խալիքը 849 թվականին Արքունիք (Արու Սալի) ստոիկանին
մեծ բանակով Հայաստան է ուղարկում: Սակայն սատիկանը
դեռևս Հայաստանի սահմանին չհասած, Տարոնի Բաղրատ Բագ-
րատաւնին, միացած Աշոտ Արծրունու հետ, լուր է ուղարկում
Երուսելիքն՝ Հայաստան չմանել խոստանալով հարկը վճարել:
Երուսելիքը վախենալով չի համարձակվում մանել Հայաստան,
այլ ուղարկած հարկը վերցնելով ետ է վերագառնում. «... Եվ
նոքա տան տանել նմա զհարկս և հասս արքունի և գարձու-
ցանեն զնա ընդ նոյն ուստի նկն» (Թովմա):

Արուսելիքը ետ գարձած ժամանակ զորք և տեղակալներ է
թողնում Հայաստանի սահմանագլխին Ալայի և Բիթլիսի հմիք
Մուսաբին-Զուրայի գլխավորությամբ: Առաջինը պիտի արշավեր
Վասպուրականի, երկրորդը՝ Տարոնի վրա: Նա հանձնարարում
է վերոհիշյալ զորավարներին՝ ճնշել և հնազանգության մեջ
պահել Հայաստանի տպատամք ժաղովուղին և իշխաններին, իսկ
ինքը վերադառնում է Սամարա (836 թվից սկսած արաբական
խալիֆները, Բաղրամում իրենց անապահով զգալով, մայրաքաղաքը
տեղափոխում են Սամարա, Բաղրամից 85 կիլոմետր դեպի
հարավ) խալիֆից-ամիրականից նոր հրահանգներ և օգնական
զորք ստանալու և կրկին Հայաստան վերադառնալու հույսով:

Արուսելիք ստոիկանի վերադարձից հետո Ալա զորավարն իր
ձեռքի տակ եղած զորաբանակով Անձեացոց և Աղբակի կողմից
մանում է Պատապուրական և ասպատակում է մի շարք գավառ-
ներ. «... ասպատակ սփառեր, — ասում է թօվմա Արծրունին, — զեր-
պեր, ավերէր, հափշտակէր, կապուտ կողովուա գործեր»: Այս
ասպատակության առաջն առնելու համար, Աշոտ Արծրունին իր
շուրջը համախմբելով Վասպուրականի բոլոր կավող ուժերը,
առանձնապես զյուղացիներին և իշխաններին, զուրս է զալիս
Թալայի զեմ, Արձուճք զյուղի մոտ ջարդում է նրա բանակին և
Վասպուրականը մաքրում արաբական զավթիչներից: Պարտված
Վասպուրականը մաքրում է մինչև Սամարա՝ խալիֆին
Ալան սարսափահար փախչում է ունենում Մուսա զորավարի
լուր տալու: Նույն վախճանն է ունենում Մուսա զորավարի

գունդը, որն արշավանք էր սկսել Տարոնի վրա: Մուսայի գեմ
դուրս է գալիս Տարոնի Բագրատ Բաղրատունին իր զինվորաց
կան գնդերով, մի շարք իշխանների ու նրանց զորքերի հետ:
Նա միաժամանակ օդնության է կանչում Աշոտ Արծրունուն,
որը ջարդել էր Ալային: Պատերազմը տևելի է ուննում Տարոն
նում: Կովի վճռական ժամին օդնության է հասնում Աշոտ
Արծրունին իր բանակով: Մուսան պարտվելով փախչում է Բիթու-
լիս (Բաղեշ) շահաստան քաղաքը և պաշարվում այնտեղ: Բիթու-
լիս քաղաքն ապաստանած արտական զորքը և Մուսա զորաց
վարն աղատվում են միայն Աղձնյաց կմիրքի հնոջ Բագրատ
Բագրատունու քրոջ միջնորդությամբ: Մուսան նույնպես
Սամարտ է փոխչում:

Մութակաթիլը արտական մոլեռանու խալիքներից մեկն
էր, որը շատ խիստ քաղաքականություն էր վարում իրեն հպա-
տակ երկրների նկատմամբ: Նա Հայաստանում բարձրացած
ապսամբությունը ճնշելու համար դիմում է առնելի վճռական
միջոցների: Նույն Արուսեթ ոստիկանի զլիսակորությամբ մի
մեծ բանակ է ուղարկում Հայաստան կարգը վերտեանզնելու:
Մութակաթիլը միաժամանակ հրամայում է նրան՝ ճնշել աղլուս-
տամբությունը և ապսամբներին զնել ծանր հարկերի առկե-
ռելանել ի վերայ աշխարհիս Հայոց, Հարչարել զսոսա որդիս խոր-
հեցա» (Թովմա): Սակայն Արուսեթը ճանապարհին մեռնում է,
իսկ նրա փոխարեն, Խալիքի հրամանով բանակի դլուխ է անց-
նում նրա որդի Յուսուֆը-րին, Արուսեթը: Այստեղից էլ հաճախ
հայ պատմագիրները շփոթում են վերոհիշյալ Արուսեթներին
իրար հետ: Մեծ մասամբ նույնացնում են, բայց Թովմա Արծր-
ունին տարբերում է հորը՝ որդուց:

850 Թվականին Յուսուֆն իր բանակով Հայաստան է
մտնում Ասրաբատականից և Վասպուրականի վրայով շարժվում
է զիպի Հայաստանի հարավային նահանգները: Ակզրում նա-
բանակ է դնում Վասպուրականի Ազամակելուտ ավանում և իր
մոտ է կանչում Աշոտ Արծրունուն, բայց վերջինս, կասկածելով,
չի ներկայանում նրան, այլ իր փոխարեն ուղարկում է մորը՝
Բագրատ Բագրատունու քրոջը: Յուսուֆը տեսնելով Աշոտի
ըմբռոս արամազդրությունը, նախընտրում է առայժմ չղիպչել
Վասպուրականին: Նա իր բանակն այնահերից շարժում է զիպի

Տարոնի գավառը և սկզբում հաստատվում է Խաթ քաղաքում՝ Խորամանկությամբ իր մոտ է կանչում Բագրատ Բագրատունուն, բռնում նրան և շղթայակապ, յուրայինների հետ, ուղարկում է Սամարա՝ խալիքին, իսկ նրա երկու որդիները՝ Աշոտը և Դավիթը ապաստան են գտնում խութեցիների մոտ. Այսուհետեւ Յուսուֆը հերթականությամբ դրավում է Հայաստանի հարավային մի շարք նահանգներն ու գավառները, բացի լեռնային Խութից, որն անառիկ էր, ապա շարժվում է դեպի Մուշ.

850—851 թ. թ. ձմեռը Յուսուֆն իր բանակը դնում է Մուշ քաղաքում և այնտեղից սիստեմատիկ կերպով ասպատակ է սփռում Երկրի գանազան կողմերը. Յուսուֆի գավառական կուսակալներից մեկը՝ Ալ-Ալյան Սասունում կողովում է Աքթահ Արթան վաճքը, որը հավանաբար էլուսում է հիշված լրարութավանքն է: Նա անսարդում է միարաններին և մի մասին էլ կոտորում: Հետագայում նա և Յուսուֆի մյուս կառավարիչներն ավերում ու թալանի են ենթարկում Սասունի գաշտացին մասը, Աղջնյաց և Տուրուբերանի նահանգները. զերված բնակիչների մի մասին ստրկացնում, իսկ մի մասին էլ վաճառում են Ասուրիքում և խալիթաթի այլ երկրներում: Այսպիսով, Յուսուֆ Արուսեթի ղորքերն ավերման են ենթարկում Հայաստանի հարավային բոլոր նահանգներն ու գավառները, բացի լեռնային Սասունից Խութից, որը զերծ էր մնացել ասպատակությունից նորհիվ իր լեռնային անառիկությանն ու ժողովրդի մտրունակությանը:

Յուսուֆ Արուսեթի վերոհիշյալ գործունեությունները մասին ուշագրավ տեղեկություն է տալիս Բալաձորին. «... Հավատացյանների ամիրապետ Մութավաքիւն-Ալ-Ալյան՝ իր խալիթավայության երկրորդ տարում Հայաստանի կառավարիչ նշանակեց Յուսուֆին՝ Մուհամեդին՝ Յուսուֆի ալ-Ալյավազիին (Մերվեցի), որը գալով Խաթթ ձերբակալեց պատրիկ Բագրատին, Աշոտի որդուն և ուղարկեց նրան (խալիթավաթի) աթուանիստ Սարսահամարա»:

Դրանով նա գեղոնություն տուած ըերեց պատրիկների, ազգատների և աղաստամբյանների (խոռվարաբների) շնչանումը՝ Բայց այդ քիչ էր. նրա գավառական կուսակալներից մեկը՝ Ալ-

Հում (պետք է լինի Սասուն, — չ. չ.), որը հայտնի էր «Սկիհանց վանք» (Յըթահ) անունով, որին Հայաստանի քրիստոնյաները խիստ մհծարում և շատ նվիրաբերություններ էին անում, պրավեց այն ամենը, ինչ որ այնտեղ կար, վիրավորանքները հասցընց նշանակիչներին (միաբաններին); Դրանով նա ծայրակեղ վրդովմանք և զայրույթ առաջացրեց հայ պատրիկների մեջ և նրանք սկսեցին զբագրություններ ունենալ իրար հետ և հրահրել միմյանց տպատամքելու և խռովություն բարձրացնելու անկախությալու համար; Հենց նրանք ել գրգեցին խռովեցիներին՝ դրանք բարձրակներ (զյուղացիներ) էին, որոնք հայտնի էին Արթան անունով; ապատամքելու Յուսուֆի դիմ և զրգուեցին նրանց նրանք գեմ այն բանի համար, որ նա (Յուսուֆը) իրենց պատրիկին աքսորել էր (Սամարա)» (Բալաճորի):

Սրաբական խալիթաթի ոստիկանի հալածանքներն ու կեղեքումները նորից ու նորից ժողովրդի մեջ տուջ են բերում գեղոնություններ, որոնք դնալով վեր են ածվում ապատամքության: Այսպիսով, Ատբողատականից հետո, հերթը գտվու է Հայաստանին:

851 Թվականի վազ գարնանը լեռնային խռովեցիները, որ ամբողջ ձմեռը ապատամքության պատրաստություններ էին տեսել և օրոնց միացել էին նաև կողոպտված գաշտային սասունցիները, խռովեցի Հովնանի զլեավորությամբ ապատամքության գրոշ են բարձրացնում և զինված իջնում գաշտային Սասուն: Նրանք երենց հետ միացնում են նաև կողոպտված ու թալանված գավառների բնակչներին ու շարժվում զեպի Մուշ քաղաքը, մի այնպիսի ժամանակի, երբ Յուսուփի զորքերը գեռատածված էին Տարսոնի և Սասունի գյուղերում: Խութեցիներին կազմակերպում էին նաև Բագրատ Բագրատունու որդիներ՝ Դավիթը և Աշոտը: Ապստամքները Հավնանի գլխավորությամբ հանկարծակի հարձակվում են Մուշի վրա և զրավում քաղաքը: Նրանք կոտորում են Յուսուփի զորքերի մի մասին, իսկ մնացածներին գուրս են քշում Երկրից: Մուշ քաղաքում բանտարկված գերիներին ազատ են արձակում և վերցնում են այն ամենը, ինչ որ արաբները կողոպտել էին. «Ինչպես պատրիկները, այնպես էլ բոլոր խռովաբարները, — ասում է Բալաճորին, — խռովեցիներին օգնելու համար ձիավոր և հետեալ մարդիկ

ուղարկեցին և նրանք հարձակվեցին նրա (Յուսուֆի) վրա Տառնուում, հենց այն ժամանակ, եթե նա իր մարդկանց ցըել էր գյուղերը, սպանեցին նրան ու վերցրին այն ամենը, ինչ կար նրա բանակում:

Յուսուֆ Աքուսեթը սարսափած այդ հարձակումից վախչում և ապաստան է զանում Մուշի ու Փրկչի եկեղեցու զմբեթի Թաղստացներից մեկում՝ որպես ապահով տեղ: Այդ եկեղեցին նոր էր կառուցել ավել Բագրատ Բագրատունին: Թովմա պատմիչի ասելով, Յուսուֆը ահից ստստիկ դոգում էր: Ապստամբները Մջապատում են եկեղեցին և նրանցից մեկը բարձրանալով եկեղեցու զմբեթը, գտնում է Յուսուֆին, նիզակը խրում է թիկունքը, մի հարվածով սպանում է նրան տեղն ու տեղը, ինչպես Սասունցի Դավիթն իր թուր կեծակի մի հարվածով երկու մասի է բաժանում Մարտմելիքին հորում: Այդ մասին ուշադրավ տեղեկություն է տալիս պատմիչ Թովմա Աքուսենին: Նրան պահով Յուսուֆին սպանել է խութեցիներից մեկը, որին ինքը աչքով տեսել ու ստուգել է նրանից՝ կատարված գեպքը, բայց պատմիչը չի հայտնում սպանողի անունը, որի հետ ինքը եռուել է:

Մատենադրական մանրակրկիտ հետախուզումից հետո մեջ համար պարզվում է, որ Յուսուֆ ստիկանին սպանողը եղել է խութեցի Հովհաննը, այն մարդը, որն ապստամբներին առաջել էր գեղի Մուշ: Այդ մասին հետաքրքր մի տեղեկություն է պահպիլ արար պատմազիր Յակուրիկ ճոտ: Նա առում է: Յուսուֆի հետ ճակատեցավ Հովհանն որդի... և սպանեց նրան: Այն ժամանակ կը կեն երկիրն առաջարկեցավ»: Յակուրիկ այս երկառողից պարզ երկում է, որ Յուսուֆին սպանել է Հովհաննը: Այս բանը կողմնակիորեն հաստատում է նաև Թովմա Աքուսենին իր աշխատության երրորդ գլուխթյան լլ գլխում: Երծրունին իր աշխատության երրորդ գլուխթյան լլ գլխում: Այդ հանգամանքը ցույց է առիս, որ Հովհաննի հանցանյում: Այդ հանգամանքը ցույց է առիս, որ Հովհաննի հանցանյում: Այդ ժողովը ապստամբության դեկապարի և Յուսուֆին սպանողի, որուրից ծանր է եղել:

Հայ ժողովը հերոսական այս պայքարը հիմք է հանդիւ Հայ ժողովը գիւղին:

սացել «Յասնա Ծոեր» հոչակավոր էպոսի ստեղծմանը: Ժողովը դական հենց այս ապստամբության հերոսական պայքարի փայլուն կողմն է պահպանվել էպոսի մեջ: Հանձին Դավթի՝ հայ ժողովուրդը գարավոր ճշշումներից ու շահագործումներից տպառվելու համար իր հերոսական ընդվզումն ու ասպետական դիրքն է պատկերու ընդդեմ բռնակալների: Ժողովրդն իր տւժն ու պայքարը, որպես հավաքական տիպ, մարմացրելէ Դավթի մեջ իսկ Դավթը, հենց ինքը կովորդ ժողովրդի սիմվոլն է, որը համառ ու երկարատև պայքար է մղել արարական բռնակալության դեմ՝ իր ազատությունը ձեռք բերնելու համար:

Յուսուփի Արուսեթն իր գործունեությամբ շատ նմանություններ ունի ժողովբական վեպի մեջ հանգես եկած Մորա Մելիքի գործունեության հետ: Հենց այս, որ Յուսուփը հաստատվելով Մուշ քաղաքում՝ այնտեղից ուղարկում է իր վեհվորներին Տարոնի և Սասունի գավառները, Աղձնիքի ու Տուրուբերանի նահանգները կողոպտելու, Աքթան վանքի գրավումն ու ավերումը, միաբանների սպանությունը իրենց շատ կողմերով նմանվում են Մորամելիքի կողմից գեպի Սասուն ուղարկված Կադին Կողբագիսի կողմից տեղի ունեցած գեպերին, որոնք նույնպես կողոպտում էին Մարութա վանքը, սպանում էին միաբաններին և Սասունից պահանջում էին անցած տարիների, հարկը:

Խութեցիների և նրանց հետ միասին մյուս գավառների քնակիչների արշավանքը գեպի Մուշ քաղաքը և Յուսուփի Արուսեթի սպանությունը իր շատ կողմերով համընկնում է Մորամելիքի և Դավթի կովին: Ժողովրդական վեպի պատումներից երեքում է, որ Դավթիթը սկզբում կովում է Մորամելիքի զորքերի հետ, իսկ վերջում ծերունու խորհրդով վերջ է տալիս զորքերի կոտորածին և գնում է գեպի իր իսկական թշնամին՝ Մորամելիքը: Նրա հետ մենամարտելով Թուրք կեծակի մի հարցածով հորի մեջ սպանում է Մորամելիքին: Խութեցիները նույնպես սկզբում կոտորում են Յուսուփի զորքերին, վերջում Հովսանը Մուշի եկեղեցու գմբեթում սպանում է Յուսուփին: Տվյալ գնուքում պատմական այս անցքերը վերին աստիճանի ուշագրավ են այս տեսակետից, որ հիշեցնում են Մորամելիքի և Դավթի կոխվը Անշուշտո «Սասնա Ծոեր» վեպի մեջ իրենց

արձագանքներն են գտել ոչ միայն վերոհիշյալ անցքերը, այլև
զբանից առաջ և հետո տեղի ունեցած դեպքերը:

Մասունի և Տարոնի ժողովական ազստամբության
արձագանքում են Հայաստանի մյուս գավառները: Ազստամբության
թյան դրու են բարձրացնում վասպուրականը, Միջնաշխարհը,
Սյունիքը, Լոռին, Վրաստանը և Աղվանից աշխարհը: Ազստամբության
ները ամենուրեք ջարդում և անխարիք դուրս են քշում ոչ միայն
արարական պաշտոնյաներին, որոքին ու ստիկանի շքախմբին,
այլև էրմինիայում հաստաված արար էմիրներին, առևարական-
ներին և առաստարակ ողջ արարներին և ամենուրեք պարզում
անկախության դրոշ, որի կենտրոնը գտնում է Տարոն ու
Մասունը: Այսպիսով, սկսվում է հայերի ազատագրական ԽՄ մեծ
ազստամբությունը, որը պիտի վերջ դներ խալիֆաթի տիրապե-
տությանը Հայաստանում:

Սակայն, ինչպես 773—775 թ. թ. ազստամբության ժամա-
նակ, նույնապես և այս ազստամբության ընթացքում ազստամբ-
ներին չի հաջողվում մի միանական կինուրոն ստեղծել որը
բացասարար է անդրադառնում ազստամբության ելքի վրա:
Դվինի կառավարիչ սպարապետ Ամբատ Բագրատունին ոչ միայն
փորձ չի անում ազստամբ գավառները միացնելու, նրանց
զորքերը համախմբնելու, Վրաստանի և Աղվանքի հետ միասին
դուրս գալու խալիֆաթի դեմ, այլ ընդհակառակը, հետագայում
բռնում է հաշտվելու ուղին: Հայ ժողովով պատմությունն
ընթացել է միշտ ուժեղ հակագրություններով: Ազստամբու-
թյունների պարտությունների ժամանակ նա երբեք չի հու-
սալքվել, այլ մարտնչել է իր ազատությունը ձեռք բերելու
անընկերի կամքով: Մանր է եղել այդ ուղին: Դեռ խալիֆաթի
զորաբանակը Հայաստան չհասած, առանձին իշխանական
տոհմեր ներքին երկարառակությամբ էին զրադվում և միմյան-
ցից ծածռել զրություններ էին ուղարկում խալիֆաթին:

Բուղայի արշավանքները և հայերի ազստամբության
ննշումը

Հայաստանի ազստամբության լուրը շուտով համում է
Սամարա՝ Մութավաքիլ խալիֆին, որը ուժությունն ըմբռու-

նելով, սկսում է պատրաստություններ տեսնել իրմենիայում
«կարգը» վերականգնելու համար։ Հայերի ապատամբությունը
ձնշելու համար խալիֆը 852 թվի գարնանը Բուզա գորավարք
գլխավորությամբ մի մեծ բանակ է ուղարկում Հայաստան-
Բուզան Միջին Ասիայի թուրքերից էր և հայտնի էր իր գամա-
նությամբ։

Արարական բանակը Հայաստան է արշավում հարավից
Նախ մշտում է Սասուն ու Տարոն, ժողովրդի ապատամբների
կողմից հանդիպում է կատաղի ղիմազրության, բայց աղքա-
տամբների անկազմակերպվածության և թուլության շնորհիվ
արտաներին հաջողվում է ճնշել ապատամբությունը։ Բուզան
Յուսուփ սամիկանի վրեժը լուծելու համար Սասունում և Տարոնում
մեծ կոտորած է սարքում, ապատամբների մի մասին էլ զերի է ու-
ղարկում Արտօրիս։ Գիշիների թվումն էին Բաղրատ Բաղրատունու-
երիու որդիները՝ Դավիթը և Աշոտը և Խութեցի Հովհաննը՝
որպես ապատամբության ղեկավարների։ Այնունեած արա-
բական բանակն ամբանում է Խլաւթում և այնուեղից աղքա-
տամբների վեմ սկսում է ծավալի պատերազմական գործոցու-
թյուններ։

Արաբական բանակը Սասունի և Տարոնի ապատամբու-
թյունը ճնշելուց հետո, շարունակում է իր պատճիչ արշավանք-
ները ղեպի Վասպուրական։ Աշոտ Արծրունին կաղմակերպում
է ուժեղ ղիմազրություն և մի քանի արյունալի ճակատամար-
տերից հետո ամրանում է Թոռնավան գավառի Նկան ամբո-
ջում, Սակայն լավ սպառագինված արաբական բանակի գրոհ-
ների առաջ ստիպված անձնատուր է լինում, որովհետեւ
բերդում եղած իշխաններից Մուշեղ Վահեկը լուսնին, Վահրամ
Տրունին և Վահրամ թիկնապահնը, գաղանի բանակցություններից
մեջ մտնելով Բուզայի հետ, մեղքը զցում են Աշոտի վրա և
ստիպում են նրան գալ Բուզայի մոսա։ Աշոտն իրերի զրությունն-
հաշվի առնելով, զուրս է գալիս բերդից և գնում Բուզայի մոտ-
բանակցություններ վարելու։ Սակայն, վերջինու, Նկան ամրոցը
գրավելուց հետո, Աշոտին և ամբոցում եղած բոլոր իշխաններին
ձերբակալում է և որպես զերի աքսորում է Սամարա։ Ճանա-
պարհին հայերը հարձակվում են արաբների վրա և զերիների
մի մասին ազատում, Բուզան, Նկան ամրոցը գրավելուց հետո,

ասպատակում վասպուրականը, թալանում ու կողապտում է այս
իւն դիմագրություն կազմակերպողներին անհանա կոտրում էր
Բուղան Աշոտին հաղթելոց հետո շարժվում է դեպի
Աղքակ՝ Գուրզեն Արծրունու վրա, որովհետև Վասպուրականի
մեջ շարք իշխաններ իրենց զորքերով զնացել էին նրա մոտ,
որը բանակ էր զրել Թու զյուղի լեռնակողմում։ Գուրզեն Արծ-
րունին, Աշոտի եղբայրը, հաշվի առնելով Աշոտի պարտու-
թյունը և արարների ուժեղացումը, բանակցությունների մեջ
է ժանում Բուղայի հետ՝ գործը խաղաղությամբ վերջացնելու
համար։ Սակայն, Գուրզենը տեսնելով Բուղայի խորամանկու-
թյունները՝ բանակցությունների ձգձումը և զորքի մոտեցնելը
Թու զյուղին, պատրաստվում է ուստիերազմի։ Ծորդիվ հայերի
նվիրվածությանը, կազի ընթացքում չարգում են արարներին
և ետ շպրտում Թու զյուղի սահմաններից։ Դրանից հետո Բուղան
մի կողմից ավելացնում է իր զորքի թիվը իսկ մյուս կողմից
Համզո պարսիկին և Հեթիմ թուրքին դեսպոն է ուղարկում
Գուրզենի մոտ՝ անձնատուր անել տակու համար, խօստանալով
ներել Գուրզենին և նշանակիլ նրան Վասպուրականի կառավա-
րիչ։ Աշոտի փոխարեն, Մի շարք երգումներով Բուղան խարեւու-
թյամբ իր մոտ է կանչում Գուրզենին, լավ ընդունելություն-
ցուց առլուց 3 օր հետո Գուրզենին և մնացած բոլոր իշխան-
ներին ու կավոզ ակտիվ մասին ձերբակալում է և որպես գերի
ուղարկում է Սամարսու Նա մինչև իսկ արար ուղարկնց Արծ-
րունյաց Հովհաննես եպիսկոպոսին։ Այսուհետև խիստ կերպով
ասպատակեց նաև Աղքակի գտնաւոր Այսպիսով, 852 թվականի
ամռանն ու աշնանը, Բուղան թիե մեծ զաներով, այնուամենայնիվ
իր հաշիվները մաքրեց Արծրունիների և նրանց վասարների
հետ, իրեն ենթարկելով վասպուրական նահանգի բոլոր գա-
վառները։

Արաբական քահանկը Բուղայի զլիսավորությամբ Հայաստանի հարավային գավառների ու մարզերի ապստամբությունները հերթականությամբ, անջտառանջատ ճնշելուց և ավարտ ենթարկելուց հետո, 852 թվի խոր աշնանը արագ կերպով շարժվում է դեպի Հայաստանի Միջնաշխարհ Դիլին քաղաքը, որտեղ իշխում էր Սմբատ Բագրատունին Եթեն Սասունում, Տարոնում և Վասպուրականում Բուղան հանդիպում է լուրջ դիմադր

բության, ապա Միջնաշխարհի իշխանների կողմից այդ բանը տեղի չի ունենում: Սմբատ Բագրատունին միասնական պայքար կազմակերպելու և արարական աղքեսորներին հականարկած տալու փոխարեն, բռնում է հաշտվողական դիրք, իր որդի Աշոտին մեծամեծ նվերներով և անցած տարիների հարկերի հետ ուղարկում է Բուղայի մոտ՝ հոշավելու և նրան հնագանդիվելու խոստումով: Բուղան հաշվի առնելով վասպուրականում տված զոհերի մեծ թիվը, ընդունում է Սմբատի առաջարկը և հաշտվում, բայց այնքան հարկ է վերցնում Սմբատից, որ եթե ինքը Միջնաշխարհն ավարի տար, թերեւս այդքան հարատություն չկարողանար ձեռք բերել Այնպես որ Միջնաշխարհը պակաս չի կողոպատվում:

853 թվի. ձմեռը Բուղան իր բանակով մնում է Դվինում: Նա մի կողմից ճնշում է Սյունիքի ապստամբությունը, իսկ մյուս կողմից իր հետ գերի վերցրած երկրորդական իշխանների դատը տեսնելուց հետո, զարնանը շարժվում է գեղվի Հայաստանի հյուսիսային գավառները, որոնք արաբներին ցույց են տալիս համառ դիմագրություն Բուղան հյուսիսային գավառների ապստամբությունները ճնշելուց հետո, իր բանակով մտնում է Վրաստան, գրավում է Թբիլիսին և թալանի հնիթարկում այն: Հայաստանին բախտակից Վրաստանի գյուղացիության համար նվազ աղետարեր չեն լինում ութուունամյա բռնուկալ Բուղայի արշավանքը Վրաստանի վրա: Թբիլիսին զրավելուց հետո Բուղան շարժվում է գեղվի երկրի հյուսիսային լեռնային մասերը, որտեղ վրաց գյուղացիությունը ցույց է տալիս ուժեղ դիմագրություն և ստիպում է նրան իր բանակը շարժել զետի Աղվանից երկիրը:

854 թվականին պատերազմական գործողություններ են սկսվում Աղվանքում, ուր մի տարի տեկող ուժեղ կոխվներից հետո Բուղային հաջողվում է խարեռությամբ բռնել Աղվանից իշխանին և ընկնել նրանց դիմագրությունը ու զրավել ամբողջ Աղվանքը: Ապա 855 թվականին վերազանում է Դվին և նույն թվի վերջին մի շարք գերիների հետ Աղվանից, Գարդմանի, Խաչենի և Ռւտիքի իշխաններին, ինչպես նաև իրենց գործակից Սմբատ Բագրատունուն աքսորում է Սամարա: Սամարայում ապանում են Սմբատ Բագրատունուն Պատմիչները ձգուել են

նրան՝ Բագրատունի Ամբատին արդարացնել պատմության դատաստանի տառջ, տալով նրան «Խոստովանող» անունը, որպես թե նա Մայմանդայում դղջացել է իր կատարած սխալը: Սրանով վերջանում է Բուզայի չորսամյա պատմիչ արշավանքները Հայաստանում: Սյու ժամանակ, եթե խալիֆաթի կողմից Հայաստանի սաղմական ուժի գլխատման քաղաքականություն է տարվում, քաղաքների վաճառականները, որոնց մեջ, բացի հայերից, արաբ, պարսիկ, հրեա և ասորի առևտրականները փոքր թիվ չեն կազմում, պատարբեր այդ անցուղարձերին, անխոսով իրենց վաճառականությամբ էին պարապում: Պատմիչների ասելով՝ երբ Բուզան արշավում է զեօլի հյուսիս, «վաճառականները մտածում էին հոսանքոր ճանապարհորդությունների պատրաստության մասին»:

Հայաստանում անզի ունիցած այս անցքերի ժամանակը բյուզանդական բանակները հաղթելով արաբներին հասել էին Եփրատ: 856 թվականին բյուզանդացիները գրավում են Սամոսատ և Ամիր քաղաքները, ապա հարձակվում են Ծելիտենների էմիրի և նրանից հովանավորվող պայմենացների վրա: Հետեւ վարար խալիֆաթը չեր կարող հաշվի չառնել մի կողմից Հայաստանի սահմաններին սպառնացող այս վտանգը, իսկ մյուս կողմից իր ներսում ծայր տուած զյուղացիների ու ստրուկների ապստամբությունները և փոխարքաների ներքին կոփշները, որոնք ուժասպատ էին արել երկը ուղղմական ուժերը: Վերաբիշյալ պատճառների հիման վրա, խալիֆաթն ընդմիշտ փոխում է իր քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ և 856 թվին ետ է կանչում Բուզային: Սա Հայաստանի կառավարիչ է նշանակում Ամբատ Բագրատունու (Խոստովանող) որդի Աշոտին, տալով նրան մեծ լիազորություններ և իրավունք Հայաստանը կառավարելու ոստիկանի հետ, իսկ ինքը մեծ ավարով վերադառնությամբ է Սամարա:

Վասպուրականի Արծրունիների կալվածներում իշխանական իրավունք էր ձեռք բերել Գուրգեն Արտրելջը, որը երկար ժամանակ, Աշոտ Արծրունու գերավարությունից հետո, կոփշներ էր մղում Վասպուրականի լեռնային մասերում՝ արաբական զորքերի գնմ: Իրենց կալվածներն ու իրավունքները կարողացել էին պահպանել նաև Սոլերի, Տայքի և Սյունյաց իշխանները: Ինչ-

պես երեսում է, չնայած Բուզայի հասցրած ծանր հալովածներին այնուամենայնիվ Հայաստանի երեք մեծ իշխանական տները Բուզայի արշավանքներից հետո պահպանում են իրենց գլուքերը Հայաստանում։

Արաբա-բյուզանդական պատերազմների հետազա ընթացքը ստիպում է խալիֆաթին է՛լ ավելի մեղմացնել իր քաղաքականությունը Հայաստանում։ Բուզայի վերապարձից հետո խալիֆաթը թեթևացնում է Հայաստանից գանձվող հարկերը, Սամարա աջսորդած գերիներին ազատ է տրձակում և թույլատրում է վերապանալ Հայաստան։ Բյուզանդական կայսրության դեմ պատճեց ստեղծելու համար Հայաստանին տալիս է ինքնուրույնություն, իսկ Հայաստանն էլ հանձին Աշոտ Բագրատունու օգտվելով տյդղրությունից, ձգտում է անկախության Հայ ժողովուրդը շնորհիվ իր գարավոր հերոսական պայքարի 885 թվին ձեռք է բերում 456 տարի առաջ իր կորցրած անկախությունը։

Այսպիսով, Հայաստանը 9-րդ դարի երկրորդ կեսին բռնում է իր տնտեսական, քաղաքական և կուլտուրական կյանքի զարգացման ու անկախության ճանապարհը Հայաստանը թևակոխում է իր պատմության մի նոր դարաշրջանը, որը խոշոր նշանակություն է ունենում հայ ժողովրդի կյանքում։

VI. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՊԻՏԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՑՈՒՆԸ ԱՐԱԲԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Ֆեոդալական տների մեջ առաջացած փոփոխությունները

Արաբական տիրապետության շրջանում, ինչպես առաջ, Հայաստանի երկու գլխավոր և հիմնական դասակարգերը մնում են նույնը՝ աշխարհիկ-հոգեվոր Փեղալներ և զյուղացիներ։ Սակայն համեմատած անցյալ շրջանի հետ, այս դասակարգերի կազմի և հարաբերությունների մեջ առաջանում են փոփոխություններ։ Քաղաքային ազգարնակությունը երկրի հասարակական-քաղաքական կյանքում որոշ կիրա է ստանում։

Հիմնական փոփոխությունը, որ անդի է ունենում քեողական դասի մեջ, այդ այն է, որ նախկին բազմաթիվ նախարարա-

կան տների փոխարեն, արաբական տիրապետության վերջին շրջանում մնում են փոքրաթիվ, բայց տնտեսապես ու ռազմականորեն ուժեղացած իշխանական տաճմերը, Սասանյան Պարսկաստանի տիրապետության շրջանում զոյլություն ունեցող 70 նախարարական տների փոխարեն, քաղաքական կյանքում գործող երեք հիմնական նախարարություններ են մնում հրապարակի վրա, որոնց շուրջն են համախմբվում մնացած մանր նախարարական տները: Արաբական քաղաքականությունը՝ Հայստանի իշխանական դասին տնտեսապես և ռազմականապես թուլացնելու ուղղությամբ, հակառակ արդյունք տվեց:

Հաճախակի տեղի ունեցող ապատամբությունները, արաբների կողմէց Հայստանի ուժեղ ֆիսդալական տները միմյանց դժմ լարելու ու նրանց կովեցնելը, նախարարական տների ընալցն ջումը և, վերջապես, Արբասյանների շրջանից սկսած կիրառվող հարկային խիստ քաղաքատկանությունը և նրա տնտեսական հետեւանքները, հիմնական ազգակներ են հանդիսացել տուաջացած այս փոփոխության: Թույլ նախարարական տոհմերն արտապազճում են (հիշենք Շաոլուհ և Համամ Ամառունիներին), կամ ուժեղների հովանավորությունը վայելելու դիտավորությամբ կորցնում են իրենց կալվածները և կախման մեջ են ընկնում ուժեղներից, ինչպես օրինակ՝ Գնունիները և ուրիշները:

Հայստանի քաղաքական կյանքում խոշոր գեր խաղացող Մամիկոնյան, Կամսարական, Սահառունի, Բշտունի, Գնունի և ուրիշ նախարարություններ 9-րդ դարում զրկվում են իրենց կալվածներից: Դրանց հաշվին ուժեղանում են Բագրատունիները, Արծրունիները, որով այս իշխանական տները դառնում են ոչ միայն խոշոր կալվածատերեր, այլև ուղղական մեծ ուժ ունեցող իշխանություններ: Հարավում ծալվալվում և ամրողական երկրամասի տեր են դառնում Արծրունիները, իսկ պատմական Սյունիքում, երկար ընդմիջումից հետո, կըկեն հրապարակ են գալիս Սյունյաց իշխանները:

Բնիկ գեոգալական տների թուլացման քաղաքականության զուգընթաց, հատկապես Արբասյանների էպոխայից սկսած, տարվում է զեղի Հայստան մահմեղական ազգաբնակություն և կալվածատերեր՝ զաղթեցնելու քաղաքականություն: Վերջինները վայելում են խալիքաթի հովանավորությունը և զառնում

Խալիքաթի հենարանը: Բայցի վարչական, ուղմական և տոհա-
տրա-արհեստագործական խոշոր քաղաքներից՝ Դվինից, Կարին-
ից, Պարտալից, Տփղիսից, Նախիջևանից, Խաթից, Մանազ-
կերտից, Արձելից, Արճելից և Բերկրից, որտեղ աեղագործած-
էին մեծ թվով արարներ, այլի Հայաստանի հարավային գա-
վառները (Աղձնիք, Ապահովնիք, Աղբովիտ, Բղնունիք, Հարք)՝
դառնում են արար կալվածատերերի սեփականություն: Առաջա-
նում են Կայսիկների և Ռւթեմանիկների իշխանական տները և
Աղձնիքի Էմիրությունը: Այդ նոր կալվածատերերը, բնիկ ֆեռ-
դաշների կալվածների ըստի գրավումներով և կամ Հայաստանից
գաղթած իշխանական տների կալվածներին տիրանալով,
սոյառնալիք են դառնում գիմադրող բնիկ իշխանական տհմիկրի-
համար:

Բանի գբավումների մայիս շամ ուշագրաւի վեայություն-
ներ են պահպանվել ի՞յն արձանագրություններում, որոնք
վերաբերվում են վանքերին տրված հողային նվիրատվություն-
ներին.

«...Ել եթե տաճիկն ավագ դառնա և հափշտակել ջանա
(վանքին նվիրված կալվածը), հաղարին հաղար նալալ (տնեծք)
նրա վրա թող դա, և թող յուր փեզամբարից (մարզարեց)
ապիրատ» (տնիծված) լինի»:

Մահմեդական կալվածատերերը ընակության են հաստա-
տում քաղաքներում: Նույնը պետք է տսել փոքրաթիվ, սակայն
տնտեսապես ուժնազած բնիկ իշխանական տների մասին,
որոնք իրենց ընդարձակ կալվածների ձառավարման համար
որպես բնակավայր ընտրում են կենտրոնական վայրերը: Քա-
ղաքաբնակ հայ և եկվոր կալվածատեր իշխանների գործարք-
ներն ուժեղանում են քաղաքային դասի հետ: Ձեսպալական-
ամբոցները դադարում են մշտական բնակավայրեր լինելուց և
դառնում են կամ ապաստարաններ (վատանգի գերքում), կամ
ամառանոցային վայրեր:

Ինչ վերաբերվում է ֆեոդալական կաղմակերպության
հոգեոր դասին, ապա նրա նկատմամբ արարական խոյի Փաթի-
վերաբերմունքը, նայած քաղաքական հանդամանքներին, տար-
բեր կերպ է արտահայտվել Հիմնականում, սակայն, խալիքաթի-
կողմից կաթողիկոսը ճանաչվել է երկրի քաղաքական ներկաւ-

լոցուցիչը՝ Քաղաքական ծանրակալիություն պարագաներում կաթողիկոսներն էին հանդես գտնիս միջնորդի դիրում՝ երկրի բնիկ ֆեոդալների և սատիկանների ու խալիքների միջն:

Երկրի ներքին գատական գործերի կարգավորումը, ինչպես անցյալում, զարձյալ մնում է հայ հոգևորականության ձեռքում։ Հոգևորականության կալվածներն ընդուռածակվում են հօգուտ եկեղեցիների և վանքերի, մասամբ էլ ի հաշիվ կալվածատերերի։ VIII դարից սկսած խալիքաթն արգելում է հպատակ, ոչ մուսուլման ժողովուրդներին՝ նոր եկեղեցիներ ու սինազոգներ (հրեաների աղոթատեղիներ) կտորուցել։

Գյուղացիուրյուն

Արտական տիբապետության շրջանում խիստ ծանրանում է գյուղացիական մասսաների գրությունը, որն այնքան մանրամասն նկարագրել են պատմիչները։ Գյուղացիության կացության ծանրացումը սկսվում է հատկապես 725 թվականի Հերթեաշխարհապետ հետո, երբ հարկառու է գառնում ոչ թե ընտանիքն ամբողջությամբ վերցրած, ինչպես առաջ էր, այլ յուրաքանչյուր աշխատող ձեռք։ Դրամահանով դանձվող գլխահարկը՝ որը մեծ չափերի է հասնում առանձնապես Արքայանների իշխանության դլուխ անցնելուց հետո, ինչպես նաև զործադրված կամայականությունները, անտանելի գրության են հացնում դյուղացիական մասսաներին։ Հայ ժողովրդի գարավոր այդ ճնշված վիճակն իր հոյակապ արտահայտությունն է գտել ժողովրդական մեծ էսպոսի՝ «Սանա Ծոեր»-ի մեջ։

Միայն տիբապետող իշխանությունը չէր, որ շահագործում էր գյուղացիական մասսաներին։ Բնիկ աշխարհիկ և հոգեվոր ֆեոդալները նույնպես, իրենց հերթին, շահագործում էին գյուղացիությանը երբ Օմայան դինաստիայի սկզբնական շրջանում տարվում էր կալվածատիրական հարաբերությունների վերացման և առաջին խալիքների ժամանակ կիրառվող ազրարային քաղաքականությունը, Հայաստանում ծայր են առնում աղանդավայրական, ապատամբական շարժումներ ուղղված ընիկ հոգեվոր և աշխարհիկ ֆեոդալների դեմ (պավլիկյանների շարժումները)։ Օմայան դինաստիան ստիպված է լինում իր քաղաքա-

կանությունը փոխել միայն այն ժամանակ, երբ ուժնդանում է Խորասանի կալվածատերերի պայքարն Օմայանների դեմ և վերջիններն իրենց գինաստիային սպառնացող վտանգը տեսնելով, սկսում են իրենց հետարան գարձնել հաղատակ երկրների կալվածատերերին։ Սրանով է բացատրվում այն օճանդակությունը, որ 8-րդ դարի առաջին քառորդի վերջերին խալիֆաթի զորքերը ցույց են տալիս Հայաստանի Փեղալիներին։

9-րդ դարի կեսից սկսած դաստիարակյան պայքարը՝ աիշքական պիտության դեմ աղղված աղանդավորական շարժման ընույթ է ստանում։ Սրբածյան գինաստիայի կողմից դեպի Հայաստան մահմետական ազգաբնակություն զաղթեցնելը, վերջինի կամայական ավարասությունները, արքունի հարկերի խիստ ծանրացումը, աղամարդկանց և զեղեցիկ ազգիների գերավարությունները մասսայական գժգոհությունների տեղիք են տալիս, որոնք համաժողովրդական աղանդամբությունների ընույթ են ստանում։ Համաժողովրդական աղանդամբությունները, որ գլխավորում էին ընիկ Փեղալիները, տեղի են ունենում 702—703, 747—751, 773—775, 850—852 թվականներին։

Դյուլացիներն իրենց իրավաքաղաքական վիճակով կանգնած էին մարզպանական շրջանի գրության վրա։ Միայն մի տարբերությամբ, որ արարական շրջանում նկատվում է մի երեխույթ, որ գյուղացիներն ու քաղաքացիներն այս անգամ տվելի սերտ կերպով են կապված աշխարհիկ և հոգեոր ֆեղալիների հետ, ընդգետ նվաճող ու կողովառող արտքների, որովհետեւ արտաքին նվաճողները լուրջ սպառնալիք էին ստեղծել և այ ժողովրդի համար։

Ստրավներ

Սրբարական տիրապետության շրջանում սորեկական տշխառանքի գործադրումը, ինչպես խալիֆաթի կենտրոնական երկրամասերում, հավանաբար նաև Հայաստանում՝ գյուղություն է ունիցել Հայտնի է, որ արարական տիրապետության ժամանակ Միջակետքի գաշտավայրերում բազմաթիվ սորուկներ են աշխատել, որոնք 9-րդ դարի 60-ական թվականներին աղանդամբել են խալիֆաթի դեմ։ Վերջինս մեծ գժվարությամբ է միայն կարողացել ճնշել սորուկների արտամբությունը։

Առանձին հարուստ կալվածատերեր ունեցել են մեծ քառակությամբ ստրուկներ։ Աւշագրավ է, որ Ցըդ դարի վերջին Հարունակ-Մաշիդի հարցերին պատասխանող Բաղդադի զագին՝ Արուե Յուսուֆ-Յակուբը՝ իր «Հարկերի գիրքը» վերնագիրը կրող աշխատության մեջ առանձին դլուխ է հատկացրել ստրուկներին և մանրամասն խոսում է նրանց հետ վարվելակերպի մասին։ Երկար ժամանակ արարական տիրապետության ենթակա Հայաստանում և հատկապես մահմեղական մեծ դաղութներ հաստատվելուց հետո, երկրի արտադրական եղանակի մեջ, հավանաբար, զգալի փոփոխություններ են կատարվել հօդուու ստրուկների աշխատանքի կիրառման։

Մըլքան ստիլանի ժամանակ (731—744) Հայաստանի իշխանաց-իշխան Աշոտ Բագրատունին (հայտնի է Կույր անունով), ստիկանի հետ հյուսիսային հոների գեմ հաղթական արշավանք կատարելուց հետո, ինքն ու իրեն ընկերակցող պատվավոր նախարարները ձեռք բերված գերիներից բաժին են ստանում, որպես «ծառաներ և աղախիններ»։ Հայ մատենագիրների մոտ «ծառա» և «աղախին» աերմինները գործ են ածվում սարուկի իմաստով։

Աշոտ Կույրին հաջորդող «գեղեցիկ դեմքով, երեվելի հասակով և տղնկական բնությամբ» Սահակ Բագրատունին, համաձայն սիրիացի ժամանակադրի վկայության, ունեցել է մեծ թվով ստրուկներ։ Եվ, վերջապես, առանձին ուշադրության արժանի է պյու շրջանում «աղարակներում» աշխատողների հարցը, որոնք սոցիալական «գեղջուկներից» ավելի ցած դըության մեջ են գտնվել։

Արարական տիրապետության շրջանում ստրուկների թիվը Հայաստանում ավելանում է։ Դա առաջ է գալիս երկու ճանապարհով, առաջին՝ ուղղմագերիներից, որոնք բերվում էին գրսից և երկրորդ՝ պարտքի տակ ընկած գյուղացիներից, նկատի ունենալով, որ արաբների և հատկապես Արքայանների ժամանակ մեծ չափերի է հասնում հարկատվությունը Հայաստանում։ Հարերը չվճարողներից շատերը ստրկացվում էին, կամ թե քշվում էին ստրկական աշխատանքի, ինչպես կատարվում էր Յուսուֆ Արուսեթ ստիկանի ժամանակ 850—851 թվերին։
Ստրուկներին պերտպանցապես աշխատեցնում էին անեցում,

որպես ռադախիններ» և հանքերի մշակման մեջ, որը լայն ճավազ էր ստացել՝ արաբական խալիֆաթի՝ տիրապետության ժամանակ։ Հայաստանի գրեթե բոլոր հանքերը մշակվում էին ստրուկտուրի միջոցով։ Սակայն, ստրուկտուրի և նրանց՝ աշխատանքի առկայությունը Հայաստանում չէր խախտել եղերի փետքալական արտադրաեղանակը։

Սարուկների թվի շատացումը և ծանր հարկերի գանձումը արաբների կողմից, կասեցնում են երկու արագրողական ուժերի զարգացումը, գյուղատնտեսությունը իր օռլոր ճյուղերով հետազիմում է, անասնաքանակը պակասում է, գյուղատնտեսական մշակույթն անհրաժեշտ չտվով չի դարձանում, նոր ջրանցքաշինարարություն չի կատարվում, հինգ չի վերանորոգվում, եղածներն ել գնալով քայլայվում են և որոնց հետեւանքով մի կողմից պակասում է ցանքի տարածությունը, իսկ մյուս կողմից ընկնում է բերքատվությունը։ Գյուղացին իր որսապղանքի մեծ մասը վճարում է որպես հարկ։ Այսպիսով, արարական տիրապետության ժամանակ Հայաստանի գյուղատնտեսությունը թուլանալով քայլայվում է։

Քաղաքները և քաղաքային բնակչությունը

Արաբների տիրապետության ժամանակի զգալի փոփոխություններ են աեղի ունենում քաղաքների ղարգացման ուղղությումը։ Արաբական արշավանքներից խիստ առժած Դիլինքաղաքը Տէրդ դարի 70-ական թվականներին արդեն զառնում է «լայնանիստ» քաղաք, որտեղից անցնում էր «արքունի պողոտան»։

Հայաստանի հարավում եղած ավանները, որոնք արարական արշավանքների հենց սկզբին առանց դիմադրության անձնատուր են լինում և ուղարկում արարական բանակների ավերութերից, խալիֆաթի տիրապետության շրջանում զառնում են ինքնառար համայնքներ՝ հատուկ կառավարիչների և գատավորների իշխանության տակ։ Խլաթը, Մանազկերտը, Արձեզը, Բերկը և ամենամերա տունարական հարաբերությունների մեջ են մանում Միջագետքի և Միջերկրականի ափերի մոտ գտնվող քաղաքների հետ։ Առևարաւարհետագործական զարգացման տևոա-

կետից Միջնաշխարհում՝ Դվինը իր դիրքերը պահպանելով, արաբական տիրապետության շրջանում Հայաստանի հարավային քաղաքների հետ ուժեղ վերելքի շրջան են ապրում: Մահմետական և այլ էթնիկական տարրերի հաստափվելը վերսիշյալ վայրերում նվազ դեր չեն կտարարել քաղաքային կյանքի դարձացման խնդրում: Արար, պարսիկ, հրեա և ասորի առետրականները, սերտ կապահած լինելով խալիֆաթի այլ երկրամասերի հետ, նպաստել են այդ քաղաքների առետրական հարաբերությունների աշխուժացմանը:

Արարական տիրապետության շրջանին վերաբերող մի մղոնաչափից, որ ցույց է տալիս առետրական ճանապարհների ուղղությունը, որոշակի երեխում է Հայաստանի հարավային մասի ստացած նշանակությունը:

«Արքունի պաշտաման», ինչպես անմանում է ժոմանակականից պատմիչ Ղեփոնդը, սկսվելով խալիֆաթի մայրաքաղաք Բաղդադից, Երմենիայում երեք կենտրոն է ունեցել՝ Դվինը՝ Պարտավր և Տիգիսը: Դվինը Պարտավի վրայով կապվել է Կասպիականի ամերի հետ, իսկ Կարին—Սնկարայի գծով՝ Բյուզանդիոնի հետ, Խլոթ—Ռուբա գծով՝ Դամասկոսի և Միջերկրականի հետ:

Արարական տիրապետության շրջանում, Կասպիականի վրայով առետրական հարաբերություններ են սկսվում հարավային Բյուզանդանի հետ և նրա վրայով՝ մինչև Սկանդինավյան թերակղզին: Այս վերջին երկրամասում հայութերված դրամները ցույց են տալիս, որ այդ հարաբերությունները սկսվել են 8-րդ դարի վերջիրից Երմենիայի վրայով: Սկանդինավյան թերակղզում, հատկապես Շվեդիայում վերջին տարիների կատարած պեղություններից հայութերվում են արեկյան ծագում ունեցող իրեր:

VIII—IX դարերում և ավելի ուշ՝ Դվինը Հայաստանի անտեսական կյանքի զարգացման պատճության համար ունեցել է նույն նշանակությունը, ինչ որ Անին X—XIII դարերի համար՝ X դարում Դվինը գարձել էր արդեն «շահնաստան» այնպես, որ Դվինը գարձել էր արդեն «շահնաստան» քաղաքին արեկյան երկրների առեւբա-արհեստագործական քաղաքները: Բարձր զարգացման էին հասել տեքստիլ արդյունագործությունը, զինագործությունը, ոսկերչությունը և մի շարք

այլ արհեստները Դվինի պեղումները Հայաստանի պատմության
այս շրջանի համար կունենան այն կարևոր նշանակությունը,
ինչ որ խոշոր գիտնական Ն. Յա. Մառի կողմից Անիում կա-
տարված պեղումներն ունեցան Հայաստանի X—XIII դարերի
պատմության համար:

Սակայն այս շրջանի Հայաստանի քաղաքների զարգա-
ցումը սիրտ կերպով կապված չէր երկրի տնտեսական կյանքի
հետ և չէր բխում նրա խմանենա գարգացումից: Քաղաքների
գարգացումը կապված էր մեծ մասամբ դրսի և արարական
առևտրականների հետ, որոնք միկամենկ օվաղիսներ էին երկրի
քայլայլած առևտեսության մեջ: Հայ առևտրականների գերը
շատ քիչ էր քաղաքների բնակչության մեջ: Հատկապես Հա-
յաստանի հարավային քաղաքների բնակչության մեծագույն
մասը արարներ էին և օտարեքսացիներ, որոնք միայն միջ-
նորդի գեր էին խաղում: Հայաստանի քաղաքների զարգացումը
սկսվում է միայն 8-րդ դարի վերջին քառորդից և հատկապես
9-րդ դարում, երբ Հայաստանն աստիճանաբար փոքձեր էր
անկախանալի

Քաղաքային կյանքի այս վերելքն ուժեղ թափ է ստանում
9-րդ դարի վեցում և զարգացող քաղաքային դասը հանդես
է գալիս իր նոր պահանջներով: Այս նոր դասը նվազ գեր չի
կատարում 9-րդ դարի վեցում քաղաքական անցուղարձերում,
որոնք նոր էջ են բաց անում Հայաստանի պատմության մեջ:

ՑԱՆԿ

I.	Արաբական խոլիֆաթի կազմավորումը և նվաճումները Արտրական խոլիֆաթի կազմավորումը	3
	Խալիֆաթի նվաճումները	5
II.	Հայաստանի նվաճումը (640—700)	
	Հայաստանի քաղաքական գրությունը արաբական արշավանքների նախօրյակին	8
	Արաբների առաջին արշավանքը դեպի Հայաստան .	12
	Արաբների երկրորդ արշավանքը դեպի Հայաստան .	16
	Հայ-հունական հարաբերությունները, արաբների երրորդ արշավանքը և Թեոդորոս Բշտունի կնքած պայմանագիրը Մռւավիայի հետ	18
	Հայաստանի քաղաքական գրությունը 7-րդ դարի II կեսին	26
	Հայաստանն արաբա-ըյուղանդական մըցման օրեկտ 7-րդ դարի վերջին	31
III.	Հայաստանն Օմայան դինաստիայի օրոք (700—750)	
	Խալիֆաթի վարած քաղաքականությունը Հայաստա- նում	38
	702—703 թ. թ. հայերի I մեծ ապստամբությունը Խալիֆաթի դեմ	42
	Բյուղանդա-արաբական նոր մըցումը Հայաստանի շուրջը և հայ իշխանների ու նրանց զորքերի կո- տորածը Նախիջևանում	48
	Հայաստանի գրությունը 720—730 թվականներին .	51

IV. Պավլիկյան շարժումները Հայաստանում և հայերի երկրորդ ապստամբությունը

Դյուլացիության գրությունը օմայանների շրջանում	56
Պավլիկյանների շարժումները	58
Հովհան Օծնեցին և պավլիկյանների շարժման լիեւ վիտացիան	59
Օմայան դինաստիայի անկումը և հայերի II մեծ ապստամբությունը խալիքաթի գիմ	62

V. Հայաստանն Աքքայանների ժամանակ (750—856)

Աքքայան դինաստիան և հայերի ապստամբության ձնշումը	66
Եղիտ և Հասան ոստիկանների կեղեքումները	68
773—775 թ. թ. հայերի III մեծ ապստամբությունը խալիքաթի գիմ	73
Հայաստանի քաղաքական գրությունը Զ-րդ, գարի վերջին քառորդում	80
Հայաստանի ազգաբնակության էթնիկական կազմի և հոգատիրական հարաբերությունների մեջ առաջ ջացած փոփոխությունները	86
Սասունը որպես հայ ժողովրդի էսքուի ստեղծման վայր	94
Խուրամյան ապստամբություն	97
Հայաստանի գրությունը Զ-րդ գարի IV կեսին	100
850—852 թ. թ. հայերի IV մեծ ապստամբությունը խալիքաթի գեմ	104
Բուղայի արշավանքները և հայերի ապստամբության ձնշումը	111



VII. Հայաստանի սոցիալ-տնտեսական դրաւըյունը արաբական տիրապետության շրջանում

Ֆեռգալական տների մեջ առաջացած վիտիոլությունները	<u>116</u>
Դյուզացիությունն	<u>119</u>
Սարուկներ	<u>120</u>
Բաղաքներ և քաղաքային բնակչությունը	<u>122</u>

Վ.Ֆ. 12679

Պատվեր 421

Տիրամ 1000

8 տպաղբական մամուլ

Ստորագրված է տպաղբելու 1946 թ. զեկտեմբերի 25-ին

Հենակա Մանկ. Ինստիտուտի տպարտն, Երևան, Տերյան փ. Ա 127

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220033641

(In 504)

ԳԻՒԾ 15 ԱՐԴՅՈՒՆ

I II
1. 33641

На правах рукописи

А. А. АРУТИОНЯН

АРМЕНИЯ ВО ВРЕМЯ ГОСПОДСТВА

АРАВСКОГО ХАЛИФАТА

(640—856)

(На армянском языке)

Изд. Гос. Заочного Пед. Института Арм. ССР
Ереван—1946